ԱՐԱՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՋՐՀԵՂԵՂ

Է. Ուայթ

New Covenant Publications: Armenian

Copyright © 2020. New Covenant Publications International.

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մաս չի կարող վերարտադրվել կամ փոխանցվել որևէ ձևով կամ որևէ եղանակով առանց հեղինակի հստակ գրավոր թույլտվության, բացառությամբ քննադատական հոդվածներում և ակնարկներում ներառված հակիրճ մեջբերումների: Խնդրում ենք բոլոր համապատասխան հարցերը ուղղել հրատարակչական ընկերությանը:

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մաս չի կարող վերարտադրվել կամ փոխանցվել որևէ ձևով կամ որևէ եղանակով, էլեկտրոնային կամ մեխանիկական, ներառյալ լուսապատճենը, ձայնագրությունը կամ տեղեկատվության պահպանման և որոնման համակարգով, բացառությամբ գրախոսների կամ հետազոտողների, ովքեր կարող են մեջբերել տպագրվող կարճ հատվածներ ամսագրերում, ամսաթերթերում կամ պարբերականներում:

ISBN: 359-2-85933-609-1

ISBN: 359-2-85933-609-1

Cataloguing in Publication Data

Խմբագրվել և ձևավորվել է: New Covenant Publications International Group

Տպագրվել է Միացյալ Թագավորությունում.

Առաջին տպագրություն 26 May 2020

Հրատարակվել է: New Covenant Publications International Ltd.,

Kemp House, 160 City Road, London, EC1V 2NX

Այցելեք կայք: www.newcovenant.co.uk

ԱՐԱՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՋՐՀԵՂԵՂ

Է. Ուայթ

այս էջը դիտավորյալ դատարկ է մնացել

New Covenant Publications

International Ltd.

Բարեփոխված գրքեր, փոխակերպված մտքեր

New Covenant Publications International Ltd., Kemp House, 160 City Road, London, EC1V 2NX

Էլ.: newcovenantpublicationsintl@gmail.com

Շնորհակալագրեր

Այս գիրքը նվիրված է Աստծուն.

Առաջաբան

Այս նախարարությունը [Նոր Ուխտի հրատարակչական ընկերությունը] վերստին միավորում է ընթերցողին աստվածային ծրագրի հետ, որը կապում է երկինքը և երկիրը և ամրապնդում է սիրո օրենքի հավերժությունը: Լոգոն՝ Ուխտի Տապանը, ներկայացնում է Քրիստոս Հիսուսի և նրա ժողովրդի մերձավորությունը և Աստծո օրենքի կենտրոնականությունը: Ինչպես գրված է. “այլ այս է ուխտն զոր ուխտեցից տանդ Իսրայելի յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր. Տացո զօրէնս իմ ի միտս նոցա, եւ ի սիրտս նոցա գրեցից զնոսա. եւ եղէց նոցա յԱստուած, եւ նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ: Երեմիա 31:31-33; Եբրայեցիներին 8:8-10) Իրոք, նոր ուխտը վկայում է փրկության մասին, որը ծնվել է անդադար պայքարից և կնքվել արյամբ:

Բազմաթիվ դարերի ընթացքում շատ մարդիկ տառապել են անասելի ճնշումներից, որոնք նպատակաուղղված էին ճշմարտությունը վերացնելու համար: Հատկապես Մութ դարերում այս լույսը խիստ ճնշվել և մթագնվել է մարդկային ավանդույթներով և համընդհանուր տգիտությամբ, քանի որ աշխարհի բնակիչները արհամարհում էին իմաստությունը և խախտում ուխտը: Չարության ծավալման հետևանքով առաջացած անկումը և սատանայական անմարդկայնությունը հասցրել են այնպիսի անկմանը, որ շատ կյանքեր զոհաբերվել են՝ հրաժարվելով խղճի ազատությունից: Սակայն կորցրած գիտելիքը վերականգնվել է:

Պատմությունը հատկապես 16-րդ դարի Ռեֆորմացիայի ժամանակաշրջանում նշանավորում է ճշմարտության, հիմնարար փոփոխությունների և հետևանքների անհանգիստ պահը, որն արտացոլված է հակառեֆորմացիոն շարժման մեջ: Այդուհանդերձ, այս գրքի շնորհիվ նորից բացահայտվում է այդ յուրահատուկ հեղափոխության անկասկածելի նշանակությունը ռեֆորմատորների և մյուս խիզախ նորարարների տեսանկյունից: Նրանց պատմություններից կարելի է հասկանալ ավերիչ մարտերը, այն պատճառները, որոնք ընկած են նման երևելի դիմադրության հիմքում, ինչպես նաև գերբնական միջամտությունները:

Մեր կարգախոսը՝ «Բարեփոխված գրքեր, փոխակերպված մտքեր», ընդգծում է որոշակի դարաշրջանում ստեղծված գրականության առանձին ժանրը և դրա ազդեցությունը աշխարհի վրա: Այն նաեւ արձագանքում է անձնական բարեփոխման, վերածննդի եւ փոխակերպման անհետաձգելի անհրաժեշտությանը: Ինչպես Գուտենբերգի տպագրական մեքենան եւ թարգմանությունը տարածեցին բարեփոխված հավատքը մոտ 500 տարի առաջ, այնպես էլ թվային մամուլն ու սոցիալական ցանցերը կշարունակեն հաղորդակցվել մեր օրերում:

Բովանդակություն

Գլուխ 1 - Ինչո՞ւ թույլ տրվեց մեղրը 5
Գլուխ 2 - Արարումը 16
Գլուխ 3 - Բառացի շաբաթը 23
Գլուխ 4 - Փորձություն & անկում 29
Գլուխ 5 - Փրկության ծրագիրք 40
Գլուխ 6 - Ջրհեղեղք 47
Գլուխ 7 - Ջրհեղեղից հետո 59

Գլուխ 1 - Ինչո՞ւ թույլ տրվեց մեղրը

«Աստված սեր է» (Ա Հովհաննես 4.16): Նրա էությունը, Նրա օրենքը սեր է: Այն միշտ եղել է և միշտ էլ կլինի: «Բարձրը և Բարձրյալը՝ հավիտենականության մեջ բնակվողը», ով «հավիտենական ընթացք ունի», չի փոփոխվում: Նրանում «բնավ փոփոխում կամ դարձվածքի շուք չկա» (Եսայիա 57.15, Ամբակում 3.6, Հակոբոս 1.17): {ԱՄՋ 6.1}

Ստեղծագործ զորության ամեն մի դրսևորում անսահման սիրո արտահայտությունն է: Աստծո գերիշխանությունն օրհնության լիություն է ապահովում բոլոր արարածներին: Սաղմոսերգուն ասում է. {ԱՄՋ 6.2}

«Քո ձեռքը զորավոր է և քո աջը՝ բարձր:

Արդարություն և իրավունք եմ քո աթոռի հաստատությունը

Ողորմություն և ճշմարտություն գիտում եմ

քո երեսի առաջից:

երամի այմ ժողովրդիմ, որ գիտի փողերի ձայնը.

Ո վ Տեր, մրամք քո երեսի լույսով կգմամ,

Քո ամումով ամեմ օր կցմծամ,

Եվ քո արդարությամբ կբարձրամամ:

Որովհետև դու ես մրամց զորությամ փառքը...

Որովհետև Տերը մեր վահամմ է,

Եվ Իսրայելի Սուրբը՝ մեր թագավորը»:

Սաղմոս 89.13-18: {ԱՄՋ 6.3}

Չարի և բարու միջև մղվող մեծ պայքարի պատմությունն, սկսած այն պահից, երբ այն առաջին անգամ ծագեց երկնքում, մինչև ապստամբության վերջնական վերացումն ու մեղքի լիակատար ոչնչացումը, նույնպես Աստծո անփոփոխ սիրո դրսևորումն է: {ԱՄՋ 6.4}

Տիեզերքի Գերիշխանը միայնակ չէր Իր բարեգործ աշխատանքում: Նա օգնական ուներ՝ գործընկեր, ով կարող էր գնահատել Նրա մտադրությունները և կիսել Նրա ուրախությունը՝ երջանկացնելով ստեղծված բոլոր էակներին: «Սկզբում էր Բանը, և Բանն Աստծո մոտ Էր, և Բանն Աստված էր: Նա սկզբում Աստծո մոտ էր» (Հովհաննես 1.1,2): Քրիստոսը՝ Բանը, Աստծո միածինը, մեկ էր հավիտենական Հոր հետ, մեկ՝ էությամբ, բնավորությամբ և նպատակներով, միակը, ով կարող էր իմանալ Աստծո բոլոր խորհուրդներն ու ծրագրերը: «Նրա անունը կկոչվի Սքանչելի,

Խորհրդական, Հզոր Աստված, Հավիտենականության Հայր, Խաղաղության Իշխան» (Եսայիա 9.6): «Նրա ելքը վաղուց՝ հավիտենական օրերից է» (Միքիա 5.2): Աստծո Որդին Իր մասին հռչակում է. «Տերն ինձ ուներ իր ճանապարհի սկզբում, իր վաղեմի գործերից առաջ: Ես օծվել եմ հավիտենից առաջ ...երբ որ զգում էր երկրի հիմունքը, այն ժամանակ ես նրա մոտ ճարտարապետ էի, և նրա ուրախությունն էի ամեն օր՝ զվարճանալով նրա առաջին ամեն ժամանակ» (Առակաց 8.22-30): {ԱՄՋ 6.5}

Հայրն Իր Որդու ձեռքով է ստեղծել երկնային բոլոր էակներին: «Նրանով ամեն բան ստեղծվեց՝ թե° աթոռները, թե° տերությունները, թե° պետությունները, թե° իշխանությունները. բոլոր բաները նրանով և նրա համար ստեղծվեցին» (Կողոսացիս 1.16): Հրեշտակներն Աստծո սպասավորներն են՝ ողողված Նրա ներկայության լույսով և միշտ պատրաստ՝ անմիջապես կատարելու Նրա կամքը: Բայց Որդին՝ Աստծո Օծյալը, «Նրա էության նկարագիրը» և «Նրա փառքի լույսը», «որ Իր զորության խոսքով ամեն բան կրում է», նրանց բոլորից գերազանց է (Եբրայեցիս 1.3): «Փառքի աթոռը՝ բարձր սկզբից» (Երեմիա17.12), Նրա սրբարանի տեղն էր: «Քո թագավորության գավազանը ուղիղ գավազան է» (Եբրայեցիս 1.8): «Փառք և մեծություն կա նրա առաջին, զորություն և գեղեցկություն՝ նրա սրբության մեջ» (Սաղմոս 96.6): «Ողորմություն և ճշմարտություն գնում են Նրա երեսի առաջից » (Սաղմոս 89.14): {ԱՄՋ 7.1}

Աստծո կառավարության հիմքում դրված է սիրո օրենքը, և բանականությամբ օժտված բոլոր էակների երջանկությունը արդարության այդ մեծ սկզբունքներին կատարելապես հնազանդվելու մեջ է: Իր բոլոր արարածներից Աստված կամենում է ընդունել սիրո ծառայություն, ծառայություն, որը բխում է Նրա բնավորության ըմբռնումից: Նրան ոչ մի հաճույք չի պատճառում ստիպողական հնազանդությունը, և ա- մենքին Նա տալիս է կամքի ազատություն, որպեսզի հոժարությամբ ծառայեն Իրեն: {ԱՄՋ 7.2}

Քանի դեռ բոլոր արարածները հավատարիմ էին սիրո սկզբունքներին՝ կատարյալ ներդաշնակություն էր տիրում Աստծո տիեզերքում: Մեծ ուրախություն էր երկնաբնակների համար իրենց Արարչի կամքը կատարելը: Նրանք մեծ հաճույք էին զգում՝ արտացոլելով Նրա փառքը և գովաբանելով Նրան: Եվ մինչ սերն Աստծո հանդեպ ամեն բանից գերազանց էր՝ սերը միմյանց նկատմամբ անկեղծ էր և անշահախնդիր: Չկար տարաձայն ոչ մի հնչյուն, որ խախտեր տիեզերքի ներդաշնակությունը: Սակայն այդ բերկրալի անդորրը խախտվեց. ինչ-որ մեկը չարաշահեց այն ազատությունը, որով Աստված օժտել էր Իր արարածներին: Մեղքը ծագեց նրա մեջ, ով, Քրիստոսից հետո, ամենքից ավելի էր փառավորված Աստծո կողմից և զորությամբ ու պատվով ամենաբարձրն էր երկնաբնակների մեջ: Արուսյակը՝ «արշալույսի որդին», առաջինն էր ծածկող քերովբեների մեջ՝ սուրբ և անարատ: Նա գտնվում էր մեծ Արարչի ներկայության մեջ, և հավիտենական

Աստծուն շրջապատող փառքի անմար ճառագայթները հանգչում էին նրա վրա: «Այսպես է ասում Տեր Եհովան. Դու կատարելության կնիքն ես՝ լի իմաստությամբ և գեղեցկությամբ կատարյալ: Եդեմում՝ Աստծո դրախտում էիր, բոլոր պատվական քարերը քո ծածկոցն էին... Դու մի օծված քերովբե էիր ծածկող, և ես քեզ շինեցի. Աստծո սուրբ սարի վրա էիր, կրակի քարերի մեջ էիր ման գալիս: Դու կատարյալ էիր քո ճանապարհներում քո ստեղծված օրից, մինչև որ քեզանում անօրենություն գտնվեց» (Եզեկիել 28.12-15): {ԱՄՋ 7.3}

Արուսյակն աստիճանաբար իր մեջ սկսեց փայփայել ինքնամեծարման ոգի: Սուրբ Գիրքն ասում է. «Սիրտդ հպարտացավ քո գեղեցկությունից, դու ապականեցիր քո իմաստությունը քո գեղեցկության պատճառով» (Եզեկիել 28.17): «Ինքդ ասել էիր քո սրտում՝ ...Աստծո աստղերից բարձր կդնեմ իմ աթոռը ...Բարձրյալին կնմանվեմ» (Եսայիա 14.13,14): Իր ամբողջ փառքն ստանալով Աստծուց՝ այս զորավոր հրեշտակն սկսեց այն վերագրել իրեն: Նա, թեև փառավորված բոլոր երկնաբնակներից առավել, դժգոհ էր իր դիրքից, և հանդգնեց համառորեն հավակնել այն պատվին, որ պատկանում էր միայն Արարչին: Բոլոր արարածների սերն ու հավատարմությունն Աստծուն ուղղելու փոխարեն՝ նա ջանում էր ապահովել նրանց ծառայությունն ու նվիրվածությունը իր նկատմամբ: Եվ նախանձից, ցանկանալով այն փառքը, որով անսահման Հայրն օժտել էր Իր Որդուն, հրեշտակների այս իշխանը տենչում էր հասնել մի իշխանության, որը միայն Քրիստոսի բացառիկ իրավունքն էր: {ԱՄՋ 8.1}

Երկնքի կատարյալ ներդաշնակությունը խախտվեց: Նկատելով Արարչին ծառայելու փոխարեն արարածներին իրեն ծառայեցնելու Արուսյակի հակվածությունը՝ տագնապի զգացումով լցվեցին նրանք, ովքեր գիտակցում էին, որ Աստծունը պետք է լինի գերագույն պատիվը: Երկնային խորհրդում հրեշտակներն աղերսեցին Արուսյակին՝ հրաժարվել իր ձգտումներից: Աստծո Որդին ներկայացրեց նրան Արարչի մեծությունը, բարությունն ու արդարությունը և Նրա օրենքի սրբազան ու անփոփոխ բնույթը: Աստված Ինքն էր կարգ հաստատել երկնքում, և, խախտելով այն, Արուսյակը կանպատվեր իր Ստեղծողին ու կկործաներ իրեն: Բայց նախազգուշացումը, տրված անսահման սիրով ու ողորմածությամբ, միայն դիմադրության ոգի արթնացրեց նրանում: Արուսյակը թույլ տվեց, որ նախանձը Քրիստոսի հանդեպ ամբողջովին իշխի իրեն, և էլ ավելի վճռական դարձավ: {ԱՄՋ 8.2}

Հրեշտակների այս իշխանի նպատակը դարձավ՝ վիճարկել Աստծո Որդու գերազանցությունը՝ դրանով իսկ կասկածի ենթարկելով Արարչի իմաստությունն ու սերը: Նա, ով Քրիստոսից հետո առաջինն էր Աստծո զորքերի մեջ, արդեն պատրաստվում էր այդ նպատակին ուղղել իր հանճարեղ մտքի կարողությունները: Բայց Նա, ով Իր բոլոր արարածներին օժտել էր ազատ կամքով, ոչ ոքի անտեղյակ չթողեց այդ մոլորեցուցիչ գաղափարախոսությունից, ըստ որի՝ ապստամբությունը

կարելի էր արդարացնել: Նախքա ն կսկսվեր մեծ պայքարը՝ բոլորի համար պետք է հստակ բացահայտվեր Նրա կամքը, ում իմաստությունն ու բարությունը նրանց ողջ ուրախության աղբյուրն էր: {ԱՄՋ 9.1}

Տիեզերքի Արքան Իր մոտ կանչեց երկնային զորքերին, որպեսզի նրանց ներկայությամբ հայտնի Իր Որդու իսկական դիրքը և ցույց տա, թե ինչ փոխհարաբերություններ է Ինքը սահմանել բոլոր արարածների համար: Աստծո Որդին կիսում էր Հոր գահը, և ինքնագոյ, հավիտենական էակի փառքը շրջապատում էր երկուսին: Գահի շուրջը հավաքվել էր սուրբ հրեշտակների հսկայական, անթիվ բազմությունը՝ «հազար հազարներ և բյուր թյուրեր» (Հայտնություն 5.11), ամենամեծարված հրեշտակները՝ որպես ծառայողներ և հպատակներ, ցնծալով այն լույսի մեջ, որը նրանց վրա էր ընկնում

Աստվածության ներկայությունից: Հավաքված երկնաբնակների առջև Արքան հռչակեց, որ միմիայն Քրիստոսը՝ Աստծո միածին Որդին, կարող է լիովին ներթափանցել Իր բոլոր ծրագրերի ու մտահղացումների մեջ, և որ Նրան է հանձնարարված իրականացնելու Իր կամքի զորավոր խորհուրդները: Աստծո Որդին Հոր կամքն էր կատարել՝ ստեղծելով երկնային բոլոր զորքերը, և նրանք պետք է պատվեին ու երկրպագեին Նրան ճիշտ այնպես, ինչպես Աստծուն: Քրիստոսն առաջվա պես պետք է գործադրեր Իր աստվածային զորությունը՝ ստեղծելով երկիրը և նրա բնակիչներին: Բայց այս ամենում Նա չպետք է, հակառակ Աստծո ծրագրի, փնտրեր Իր իշխանությունն ու պատիվը, այլ պետք է մեծարեր Հոր փառքը՝ իրագործելով Նրա սիրո վեհ և բարի նպատակները: {ԱՄՋ 9.2}

Հրեշտակները ցնծությամբ ընդունեցին Քրիստոսի գերազանցությունը և, երկրպագելով Նրան, հայտնեցին իրենց սերն ու նվիրվածությունը: Արուսյակը նույնպես խոնարհվեց նրանց հետ, բայց նրա սրտում տարօրինակ և կատաղի պայքար էր բռնկվել: ճշմարտությունը, արդարությունն ու հավատարմությունը պայքարում էին խանդի և նախանձի դեմ: Որոշ ժամանակ թվաց, թե սուրբ հրեշտակների օրինակն ազդեց նրա վրա: Երբ հնչեց գովասանքի քաղցրահնչյուն մեղեդին, ուղեկցվելով հազարավոր ուրախ ձայներով, չար ոգին կարծես թե հաղթվեց: Անասելի սերը ցնցեց նրա ողջ էությունը, նրա հոգին ներդաշնակվեց անմեղ երկրպագուների հետ և լցվեց սիրով դեպի Հայրն ու Որդին:

Բայց ահա նա կրկին հպարտացավ, և փառքի տենչը տիրեց նրան: Գերազանցության ձգտումը նորից Գլուխ բարձրացրեց, և նա դարձյալ տեղի տվեց Քրիստոսի հանդեպ ունեցած նախանձի առջև: Այն բարձր կոչումը, որ շնորհվել էր Արուսյակին, չգնահատվեց որպես Աստծո տված հատուկ պարգև, հետևաբար երախտագիտություն չարթնաց- րեց նրա մեջ իր Ստեղծողի հանդեպ: Հպարտ իր պայծառությունից ու վեհությունից՝ նա փափագեց հավասար լինել Աստծուն: Նրան սիրում և հարգում էին երկնաբնակները, հրեշտակները հաճույքով էին կատարում նրա հրամանները, և Արուսյակը նրանց ամենքին գերազանցում էր իմաստությամբ

ու փառքով: Սակայն Աստծո Որդին նրանից ավելի էր մեծարված՝ զորությամբ և իշխանությամբ մեկ լինելով Հոր հետ: Նա տեղյակ էր Հոր խորհուրդներին, մինչդեռ Արուսյակը ծանոթ չէր Աստծո նպատակներին: «Ինչո՞ւ,- հարցնում էր այս զորավոր հրեշտակը,- պետք է Քրիստոսն ամենից գերազանց լինի: Ինչո՞ւ է Նա Արուսյակից ավելի փառավորված»: {ԱՄՋ 10.1}

Թողնելով իր տեղը Հոր անմիջական ներկայության մեջ՝ Արուսյակը որոշեց դժգոհություն ներշնչել հրեշտակներին: Նա գործում էր խիստ գաղտնի և որոշ ժամանակ իր իսկական նպատակը թաքցնում էր Աստծո հանդեպ հարգանքի քողի տակ: Նա սկսեց կասկածներ սերմանել այն օրենքների վերաբերյալ, որոնցով ղեկավարվում էին երկնային էակները, ակնարկելով, թե միգուցե այդ օրենքներն անհրաժեշտ լինեն աշխարհների բնակիչներին, իսկ հրեշտակները, լինելով առավել գերազանց, կարիք չունեն այդպիսի սահմանափակումների, քանի որ նրանց իմաստությունը բավարար է իրենց: Նրանք այնպիսի էակներ չեն, որ անպատվություն բերեն Աստծուն, նրանց բոլոր մտքերը սուրբ են, ուստի և անհնար է, որ նրանք սխալվեն, ինչպես Աստված Ինքը երբեք չի սխալվում: Այն, որ Աստծո Որդին մեծարված էր Հորը հավասար, անարդար թվաց Արուսյակին, ով պնդում էր, թե ինքն էլ է արժանի երկրպագության ու պատվի: Եթե միայն հրեշտակների այս իշխանը հավատարիմ մնար իր իսկական, վեհ պաշտոնին, ապա մեծ բարիք կբերեր երկնքի ողջ բնակչությանը, քանի որ նրա նպատակն էր ազատություն ապահովել ամենքի համար: Սակայն հիմա նույնիսկ այն ազատությունն էլ, որ նրանք մինչ այդ վայելում էին, կորսվելու վրա էր, քանի որ Միապետ էր նշանակված նրանց վրա, և Նրա հեղինակությանը պետք է հարգանքի ու պատվի տուրք վճարեին ամենքը: Ահա այն աննկատ խաբեությունները, որոնք Արուսյակի խորամանկությամբ արագորեն տարածվում էին երկնային ապարանքներում: {ԱՄՋ 10.2}

Քրիստոսի հեղինակությունն ու դիրքը ոչ մի փոփոխություն չէին կրել: Արուսյակի նախանձը խեղաթյուրեց նրա էությունը, և Քրիստոսին հավասար լինելու նրա պնդումներն անհրաժեշտություն առաջացրին հռչակելու Աստծո Որդու ճշմարիտ դիրքը, թեև դա հենց սկզբից էլ նույնն էր: Հրեշտակներից շատերն, այնուամենայնիվ, կուրացել էին Արուսյակի խաբեություններից: {ԱՄՋ 11.1}

Չարաշահելով այն սերն ու վստահությունը, որ տածում էին նրա հանդեպ իրեն ենթակա սուրբ էակները, Արուսյակն այնպիսի ճարպկությամբ էր նրանց անվստահություն ու դժգոհություն ներշնչում, որ նրա ազդեցությունն այդ էակների վրա աննկատ էր մնում: Արուսյակը կեղծ լույսի տակ էր ներկայացրել Աստծո մտադրությունները՝ սխալ մեկնաբանելով և աղավաղելով դրանք՝ անհամաձայնություն և դժգոհություն առաջացնելու համար: Նա իր ունկնդիրներին նենգությամբ դրդում էր արտահայտելու իրենց զգացմունքները, հետո կրկնում էր այդ խոսքերը, երբ դրանք կարող էին ծառայել իր նպատակին՝ ապացուցելու համար, որ հրեշտակներն էլ լիովին ներդաշնակ չեն Աստծո կառավարության հետ:

Զևացնելով, թե կատարելապես հավատարիմ է Աստծուն, նա միաժամանակ պնդում էր, որ աստվածային կառավարության կայունության համար անհրաժեշտ է փոփոխություններ մտցնել երկնքում գործող օրենքների ու կանոնակարգի մեջ: Այդպիսով, թեև աշխատում էր ընդդիմություն բորբոքել Աստծո օրենքի դեմ և իրեն ենթակա հրեշտակներին ներշնչել իր դժգո- հությունը՝ նա ձևացնում էր, թե ձգտում է վերացնել դժգոհությունը հրեշտակների մեջ և համոզել նրանց, որ հաշտվեն երկնային կարգերի հետ: Ծածկաբար տարաձայնություն և խռովություն բորբոքելով՝ նա չտեսնված խորամանկությամբ այնպիսի կարծիք էր ստեղծում, թե իր միակ նպատակն է՝ նպաստել հավատարմությանը և պահպանել ներդաշնակությունն ու խաղաղությունը: {ԱՄՋ 11.2}

Դժգոհության ոգին, որն այդպիսով բորբոքվեց, իր կործանիչ ազդեցությունն ունեցավ: Ու թեև ակնհայտ ապստամբություն չկար, տարակարծությունն աննկատելիորեն աճում էր հրեշտակների մեջ: Կային այնպիսիք, ովքեր բարեհաճությամբ էին նայում Աստծո կառավարության դեմ Արուսյակի խռովությանը: Մինչ այդ կատարյալ ներդաշնակության մեջ լինելով Աստծո սահմանած կարգերի հետ՝ հիմա նրանք դժգոհ էին ու տխուր, որ չէին կարող ներթափանցել Նրա անհասանելի խորհուրդների մեջ: Քրիստոսին մեծարելու Նրա մտահղացումը դժգոհություն էր արթնացրել այդ հրեշտակների սրտերում, և հիմա նրանք պատրաստ էին աջակցել Աստծո Որդու հետ հավասար իշխանություն ունենալու՝ Արուսյակի պահանջին: Բայց այն հրեշտակները, որոնք հավատարիմ էին և ճշմարիտ, հաստատեցին աստվածային օրենքների իմաստությունն ու արդարությունը՝ փորձելով հաշտեցնել այս դժգոհ էակին Աստծո կամքի հետ: Քրիստոսն Աստծո Որդին էր: Նա մեկ է եղել Նրա հետ, երբ դեռ հրեշտակները գոյություն չունեին: Նա միշտ կանգնած է եղել Հոր աջ կողմում: Նրա գերագույն իշխանությունը՝ այնքան լի օրհնությամբ բոլոր նրանց համար, ովքեր եղել են Նրա բարերար ղեկավարության ներքո, մինչ այդ երբեք չէր վիճարկվել: Երկնային ներդաշնակությունը երբեք չէր խախտվել. որտեղի՞ց հիմա ծնվեց այդ տարաձայնությունը: Հավատարիմ հրեշտակները, այս երկպառակությունից միայն սարսափելի հետևանքներ տեսնելով, անկեղծորեն դիմեցին այդ մոլորվածներին և խորհուրդ տվեցին հրաժարվել իրենց նպատակից և հավատարիմ մնալ Աստծուն՝ հնազանդվելով Նրա կառավարությանը: {ԱՄՋ 12.1}

Իր մեծ ողորմությամբ, համաձայն Իր աստվածային բնավորության, Տերը երկար ժամանակ հանդուրժում էր Արուսյակին: Նախկինում դժգոհության և անբավարարության ոգին երբևէ չէր եղել երկնքում: Դա մի նոր երևույթ էր՝ տարօրինակ, խորհրդավոր և անբացատրելի: Սկզբում Արուսյակն ինքն էլ չէր հասկանում իր զգացմունքների իսկական բնույթը և միաժամանակ վախենում էր արտահայտել իր գաղափարներն ու պատկերացումները, սակայն տակավին չէր ուզում հրաժարվել դրանցից: Նա չէր տեսնում, թե ուր է գնում: Սակայն այնպիսի ջանքեր էին թափվում նրան սթափեցնելու համար, որ միայն անսահման սերն ու

իմաստությունը կարող էին գործադրել: Ակնհայտ էր, որ նրա դժգոհության համար ոչ մի պատճառ չկար, և նրան ցույց տրվեց, թե ինչ է լինելու ապստամբության մեջ համառելու արդյունքը: Արուսյակը համոզված էր, որ ինքը սխալվում է: Նա տեսավ, որ «Տերն արդար է իր բոլոր ճանապարհներում և ողորմած՝ իր բոլոր գործերում» (Սաղմոս 145.17), որ աստվածային օրենքներն արդար են, և որ ինքը պետք է խոստովանի դա ամբողջ երկնքի առջև: Եթե նա այդ աներ, կարող էր փրկել իրեն և շատ հրեշտակների: Այդ ժամանակ նա դեռ լիովին անհավատարիմ չէր Աստծուն: Նա արդեն թողել էր ծածկող քերովբեի իր դիրքը, բայց եթե կամենար դառնալ Աստծուն, ճանաչելով Արարչի իմաստությունն ու բավարարվելով Աստծո մեծ ծրագրում իրեն հատկացված տեղով, նա կարող էր վերականգնվել իր պաշտոնում: Եկել էր վերջնական որոշման ժամանակը. կամ նա պետք է լիովին ենթարկվեր աստվածային գերիշխանությանը, կամ էլ պետք է բռներ բացահայտ ապստամբության ուղին: Նա գրեթե որոշել էր ետ կանգնել, բայց հպարտությունը թույլ չտվեց: Նա, ով այդքան բարձր պատիվ էր վայելում, չափազանց մեծ զոհաբերություն համարեց խոստովանել, որ ինքը մոլորվել է, որ իր պատկերացումները սխալ էին, և հնազանդվել այն իշխանությանը, որը նա ձգտել էր անարդար ներկայաց նել: {ԱՄՋ 12.2}

Կարեկից Արարիչը, խղճալով Արուսյակին և նրա հետևորդներին, ջանում էր ետ պահել նրանց կործանման անդունդից, դեպի ուր նրանք գլորվում էին: Բայց Նրա գթասրտությունը սխալ մեկնաբանվեց: Աստծո երկայնամտությունն Արուսյակն ընդունեց որպես ապացույց իր գերազանցության, որպես նշան այն բանի, թե տիեզերքի Արքան դեռ կգա համաձայնության իր գաղափարների հետ: Եթե հրեշտակները հաստատ կանգնեն իր հետ, ասում էր նա, ապա իրենք կհասնեն այն ամենին, ինչին ձգտում են: Համառորեն պաշտպանելով իր տեսակետը՝ նա վերջնականապես բռնեց մեծ պայքարի ուղին իր Արարչի դեմ: Ահա թե ինչպես Արուսյակը՝ «լուսակիրը», Աստծո փառքի մասնակիցը և Նրա գահի սպասավորը, օրինազանցությամբ դարձավ սատանա՝ Աստծո և սուրբ հրեշտակների «հակառակորդը», և նրանց կործանիչը, ում Երկինքը վստահել էր նրա առաջնորդությանն ու պաշտպանությանը: {ԱՄՋ 13.1}

Արհամարհանքով մերժելով հավատարիմ հրեշտակների փաստարկներն ու աղերսները՝ նա պախարակեց նրանց որպես խաբված ստրուկների: Քրիստոսին տրված նախապատվությունը նա հռչակեց որպես անարդարություն ինչպես իր, այնպես էլ ամբողջ երկնքի բնակիչների հանդեպ, և հայտարարեց, որ այլևս չի կարող հանդուրժել իր և նրանց իրավունքների ոտնահարումը: Նա երբեք այլևս չի ճանաչի Քրիստոսի գերազանցությունը: Որոշելով պահանջել այն պատիվը, որն իրեն պետք է տրված լիներ, և, իր վրա վերցնելով բոլոր նրանց հրամանատարությունն, ովքեր իր հետևորդները կդառնան, նա իր բոլոր համախոհներին նոր և ավելի լավ կառավարություն է խոստանում, որի ներքո բոլորն ազատություն կվայելեն: Մեծ թվով հրեշտակներ հաստատեցին, որ մտադիր են նրան ընդունել որպես իրենց

առաջնորդ: Ծոյված այն բարեհաճությունից, որով ընդունվեցին իր առաջարկությունները, Արուսյակը հույս ուներ իր կողմը գրավել բոլոր հրեշտակներին, դառնալ Աստծուն հավասար և իրեն հնազանդեցնել երկնքի ողջ բնակչությանը: {ԱՄՋ 13.2}

Հավատարիմ հրեշտակները դարձյալ փորձեցին համոզել նրան և նրա կողմնակիցներին ենթարկվելու Աստծուն՝ բացատրելով նրանց, թե ինչ անխուսափելի հետևանք կունենա նրանց հրաժարականը: Նա, ով ստեղծել էր նրանց, կարող էր տապալել նրանց իշխանությունն ու պատժել հանդուգն խռովարարներին: Ոչ մի հրեշտակ հաջողության չէր հասնի, ընդդիմանալով Աստծո օրենքին, որը նույնքան սուրբ էր, որքան Ինքն Աստված: Նրանք զգուշացնում էին բոլորին՝ ուշադրություն չդարձնել Արուսյակի խաբուսիկ դատողություններին և համոզում էին նրան ու նրա հետևորդներին՝ անհապաղ փնտրել Աստծո ներկայությունը և խոստովանել Նրա իմաստությունն ու հեղինակությունը վիճարկելու իրենց մոլորությունը: {ԱՄՋ 14.1}

Շատերը տրամադրված էին հետևել այս խորհրդին, զղջալ իրենց դժգոհության համար և կրկին արժանանալ Հոր և Նրա Որդու բարեհաճությանը: Արուսյակը, սակայն, ուներ պատրաստի մեկ այլ խաբեություն: Այդ հզոր խռովարարն այժմ հայտարարում է, որ իրեն միացած հրեշտակները չափից ավելի հեռու են գնացել ետ դառնալու համար, որ ինքը ծանոթ է Աստծո օրենքին և լավ գիտի, որ Աստված իրենց երբեք չի ների: Նա ասաց, որ բոլոր նրանք, ովքեր կհնազանդվեն Երկնքի իշխանությանը, զրկվելու են իրենց պատվից և կորցնելու են իրենց զբաղեցրած դիրքը: Նա ինքն անձամբ հաստատ որոշել էր երբեք չճանաչել Քրիստոսի հեղինակությունը: Միակ ելքը, որ մնացել էր իր և իր հետևորդների համար, ասաց նա, այն է, որ պաշտպանեն իրենց ազատությունը և բռնությամբ ձեռք բերեն այն իրավունքները, որոնք կամավոր չեն տրվել իրենց: {ԱՄՋ 14.2}

Ինչ վերաբերում է անձամբ սատանային, ապա, իրոք, ճիշտ է, որ նա չափազանց հեռու էր գնացել ետ դառնալու համար: Բայց այդպես չէր նրանց համար, ովքեր կուրացել էին նրա խաբեություններից: Նրանց առաջ հավատարիմ հրեշտակների խորհուրդներն ու խնդրանքները հույսի դուռ բացեցին, ու եթե նրանք ուշադրություն դարձնեին նախազգուշացմանը, ապա կարող էին դուրս պրծնել սատանայի որոգայթից: Բայց հպարտությունը, սերն իրենց առաջնորդի հանդեպ և անսահմանափակ ազատության տենչն իրենց ազդեցությունն ունեցան, և աստվածային սիրո աղերսներն ու ողորմությունը վերջնականապես մերժվեցին: {ԱՄՋ 15.1}

Աստված թույլ տվեց սատանային առաջ տանելու իր աշխատանքը, մինչև դժգոհության ոգին վերաճեր գործուն ապստամբության: Անհրաժեշտ էր, որ նա լիովին զարգացներ իր ծրագրերը, որպեսզի դրանց իսկական բնույթն ու ուղղվածությունը հայտնի դառնային ամենքին: Արուսյակը, որպես օծված քերովբե,

խիստ մեծարված էր, երկնային էակները շատ էին սիրում նրան, և նա մեծ ազդեցություն ուներ նրանց վրա: Աստծո տիրապետությունն ընդգրկում էր ոչ միայն երկնքի, այլ նաև Նրա ստեղծած բոլոր աշխարհների բնակիչներին, և Արուսյակը եկել էր այն եզրակացության, որ եթե կարողանա ապստամբության մեջ ներքաշել երկնքի հրեշտակներին, ապա կկարողանա նաև իր կողմը գրավել բոլոր աշխարհները: Դիմելով խորամանկության և խարդախության՝ նա մեծ վարպետությամբ էր ներկայացնում խնդրի վերաբերյալ իր տեսանկյունը, որպեսզի հասնի իր նպատակին: Անչափ մեծ էր նրա խաբեության ուժը: Քողարկելով իր կեղծությունը՝ նա հաջողության էր հասնում: Նրա բոլոր գործողություններն այնքան ծածուկ էին, որ հրեշտակների համար դժվար էր հասկանալ նրա գործի իսկական բնույթը: Մինչև այն լիովին չզարգանար, անհնար կլիներ ապացուցել, թե դա ինչ չարիք է, և նրա դժգոհությունը չէր դիտվի որպես ապստամբություն: Նույնիսկ հավատարիմ հրեշտակները չկարողացան հասկանալ նրա դիտավորությունը կամ էլ տեսնել, թե ուր կհասցնի նրա բռնած գործը: {ԱՄՋ 15.2}

Սկզբում Արուսյակն այնպես էր մատուցում իր փորձությունները, որ ինքն անձամբ մնում էր անմեղադրելի: Այն հրեշտակներին, ում չէր կարողանում իր կողմը գրավել, նա մեղադրում էր երկնաբնակների շահերի նկատմամբ անտարբերության մեջ: Եվ աշխատանքը, որ անձամբ ինքն էր կատարում, նա վերագրում էր հավատարիմ հրեշտակներին: Խորամանկ փաստարկներով աղավաղել Աստծո մտադրությունները. ահա թե ինչ քաղաքականություն էր նա վարում: Ամենապարզ բաներին նա մեծ խորհրդավորություն էր տալիս և, վարպետորեն խեղաթյուրելով դրանք, կասկածի ստվեր էր զցում Եհովայի ամենապարզ խոսքերի վրա: Իսկ նրա բարձր դիրքը՝ այնքան սերտորեն կապված աստվածային կառավարության հետ, ավելի մեծ ուժ էր հաղորդում նրա մեկնաբանություններին: {ԱՄՋ 15.3}

Աստված կարող էր կիրառել միայն այնպիսի միջոց ներ, որոնք չէին հակասում ճշմարտությանն ու արդարությանը: Իսկ սատանան կարող էր օգտագործել այն, ինչը չէր կարող Աստված՝ շողոքորթություն և խաբեություն: Նա ձգտում էր կեղծել Աստծո խոսքը և սխալ ներկայացնել Նրա կառավարման ծրագիրը՝ պնդելով, որ Աստված անարդարացի է հրեշտակների վրա օրենքներ դնելու մեջ, որ հնազանդություն ու խոնարհություն պահանջելով Իր արարածներից՝ Նա միայն Իր փառքն է որոնում: Ուստի անհրաժեշտ էր երկնքի բնակիչների և բոլոր աշխարհների առաջ ցույց տալ, որ Աստծո կառավարությունն արդար է և Նրա օրենքը՝ կատարյալ: Սատանան այնպիսի տպավորություն էր ստեղծել, որ այդ ամենն ինքն անում է տիեզերքի բարօրության համար: Բռնակալի ճշմարիտ էությունն ու իսկական նպատակը պետք է ըմբռնեին բոլորը: Նրան պետք է ժամանակ տրվեր՝ մերկացնելու իրեն իր իսկ ամբարիշտ գործերով: {ԱՄՋ 16.1}

Երկպառակությունը, որ առաջացել էր երկնքում, սատանան վերագրում էր Աստծո կառավարությանը: Նրա հայտարարությամբ՝ այդ ամբողջ չարիքն

աստվածային ղեկավարության արդյունքն էր: Նա պնդում էր, որ իր նպատակն է՝ կատարելագործել Եհովայի օրենսդրությունը: Ուստի Աստված թույլ տվեց, որ նա բացահայտի իր պահանջների բնույթը և ցույց տա, թե ինչի կհասցնեն աստվածային օրենքի՝ նրա առաջարկած փոփոխությունները: Նրան պետք է դատապարտի իր իսկ գործը: Սատանան հենց սկզբից էլ պնդում էր, թե ապստամբություն չի բարձրացրել: Ամբողջ տիեզերքի առջև խաբեբան պետք է մերկացվի: {ԱՄՋ 16.2}

Նույնիսկ այն ժամանակ, երբ սատանան դուրս վռնդվեց երկնքից, Անսահման Իմաստությունը չոչնչացրեց նրան: Քանի որ Աստծուն ընդունելի է միայն սիրո ծառայությունը, Նրա արարածների հավատարմությունը պետք է հիմնված լինի Նրա արդարության և բարության համոզմունքի վրա: Անպատրաստ լինելով հասկանալու մեղքի բնույթը կամ հետևանքները՝ երկնքի և բոլոր աշխարհների բնակիչները չէին կարող տեսնել Աստծո արդարությունը սատանային ոչնչացնելու մեջ: Եթե նա անմիջապես բնաջինջ արվեր, ոմանք Աստծուն կծառայեին ավելի շուտ վախից, քան՝ սիրուց: Խաբեբայի ազդեցությունը լիովին չէր վերանա, ոչ էլ ապստամբության ոգին ամբողջապես արմատախիլ կարվեր: Անվերջանալի դարերի ընթացքում ողջ տիեզերքի բարօրության համար նա պետք է ավելի լիարժեք զարգացներ իր սկզբունքները, որպեսզի ստեղծված բոլոր էակները ճշմարիտ լույսի ներքո տեսնեին աստվածային կառավարության դեմ նրա մեղադրանքները, և որպեսզի Աստծո արդարությունն ու գթասրտությունը և Նրա օրենքի անխախտելիությունը հավիտյան զերծ մնային բոլոր կասկածներից: {ԱՄՋ 16.3}

Սատանայի ապստամբությունը դաս պիտի լիներ տիեզերքի համար գալիք բոլոր դարերի ընթացքում՝ որպես մշտնջենական վկայություն մեղքի բնույթի և դրա հրեշավոր հետևանքների մասին: Սատանայի գաղափարների կիրառումն ինչպես մարդկանց, այնպես էլ հրեշտակների վրա, իր հետևանքներով հանդերձ, պետք է ցույց տար, թե որն է աստվածային հեղինակության ոտնահարման արդյունքը: Դա պիտի վկայեր, որ Աստծո կառավարության գոյության հետ է կապված Նրա ստեղծած բոլոր արարածների բարեկեցությունը: Այդպիսով, ապստամբության այս սոսկալի փորձի պատմությունը հավերժական երաշխիք պիտի լիներ բոլոր սուրբ էակների համար, որպեսզի նրանց ետ պահեր օրենքը խախտելու հարցում խաբվելուց և փրկեր նրանց մեղանչելուց ու դրա պատիժը կրելուց: {ԱՄՋ 17.1}

Նա, ով իշխում է երկնքում, տեսնում է վերջը սկզբից, ում հավասարապես հայտնի են անցյալի և ապագայի գաղտնիքները, մեղքի գործած ավերումից, խավարից ու վշտից այն կողմ տեսնում է սիրո և օրհնության Իր նպատակների իրականացումը: Թեև «ամպ ու մառախուղ կա նրա չորս կողմով, արդարություն և իրավունք են նրա աթոռի հիմունքը» (Սաղմոս 97.2): Եվ սա մի օր կհասկանան տիեզերքի բոլոր բնակիչները՝ հավատարիմ, թե անհավատարիմ: «Տիրոջ գործը կատարյալ է, որովհետև նրա ամեն ճանապարհներն իրավունք են. Աստված

հավատարիմ է և անիրավություն չունի, արդար և ուղիղ է նա» (Երկրորդ Օրինաց 32.4): {ԱՄՋ 17.2}

Գլուխ 2 - Արարումը

Ծննդոց 1 և 2

«Տիրոջ խոսքով երկինքը ստեղծվեց, և նրա բերանի հոգով՝ նրա բոլոր զորքերը»: «Որովհետև նա ասաց, և եղավ, նա հրամայեց, և հաստատվեց» (Սաղմոս 33.6,9): «Նա հաստատեց երկիրն իր հիմունքի վրա, որ տեղից չշարժվի բնավ և հավիտյան» (Սաղմոս 104.5): {ԱՄՋ 18.1}

Չափազանց գեղեցիկ էր երկիրը, երբ դուրս եկավ Արարչի ձեռքերից: Նրա մակերեսը ծածկված էր զանազան լեռներով, բլուրներով և հարթավայրերով, ամեն տեսակ ջինջ գետերով ու սքանչելի լճերով, բայց սարերն ու բլուրները քարքարոտ և խորդուբորդ չէին՝ առատ սարսափելի զառիթափերով ու ահարկու վիհերով, ինչպես հիմա: Երկրի անհարթ կմախքի վերին շերտը թաղված էր բերրի հողի տակ, որն ամենուրեք փարթամ բուսականություն էր աճեցնում: Չկային զզվելի ճահիճներ և չոր անապատներ: Նազանի թփերն ու նրբագեղ ծաղիկներն աչք էին շոյում ամեն քայլափոխի: Բլուրները պատված էին ծառերով՝ շատ ավելի վեհաշուք, քան այսօրվա ծառերը: Օդը՝ զերծ վարակիչ բացիլնե- րից ու թույներից, մաքուր էր և առողջարար: Ամբողջ բնապատկերն իր գեղեցկությամբ գերազանցում էր ամենաշքեղ պալատի զարդարված պարտեզներն անգամ: Այդ տեսարանը հրճվանք էր պատճառում հրեշտակների զորքին, որոնք ցնծում էին Աստծո հրաշագործությունները տեսնելով: {ԱՄՋ 18.2}

Այն բանից հետո, երբ գոյության կոչվեց երկիրն՝ իր հարուստ կենդանական և բուսական աշխարհով, մարդը՝ արարչագործության պսակը, ում համար ստեղծվեց գեղեցիկ երկիրը, մտավ իր իրավունքների մեջ: Նրան իշխանություն էր տրված այն ամենի վրա, ինչ նրա աչքը կարող էր տեսնել, որովհետև «Աստված ասաց. Մեր պատկերով և մեր նմանության պես մարդ շինենք, որ իշխեն ...բոլոր երկրի վրա ...Եվ Աստված ստեղծեց մարդուն իր պատկերով՝ ...արու և էգ ստեղծեց նրանց»: Այստեղ պարզ ներկայացված է մարդկային ցեղի ծագումը, և աստվածային գրությունն այնքան հստակ է շարադրված, որ սխալ եզրակացություններ անելու ոչ մի հիմք չկա: Աստված ստեղծեց մարդուն Իր իսկ պատկերով: Գաղտնիք չկա այստեղ: Ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ մարդն առաջացել է կենդանական կամ բուսական աշխարհի ցածր տեսակներից աստիճանական զարգացման հետևանքով: Նման ուսմունքը նսեմացնում է Արարչի վեհ աշխատանքը մինչև մարդկային սուղ, աշխարհիկ պատկերացումները: Մարդիկ այնքան են հակված բացառելու Աստծուն տիեզերքի գերիշխանությունից, որ նսեմացնում են մարդուն՝ զրկելով նրան իր բարձր ծագման պատվից: Նա, ով բարձրերում ստեղծել է աստղային աշխարհները և վարպետ նկարչի պես զարդարել դաշտի ծաղիկները, ով երկինքն ու երկիրը լցրել է Իր զորության հրաշքներով, հասնելով Իր փառավոր գործի ավարտին՝ չթերացավ ստեղծել մի էակ, որն արժանի կլիներ իր Արարչին ու պետք է իշխեր հիասքանչ երկրին: Մեր ցեղի ծննդաբանությունը, ինչպես գրված է ներշնչված Խոսքում, սկիզբ

է առնում ոչ թե զարգացող սաղմերից, կակղամորթերից կամ չորքոտանիներից, այլ՝ մեծ Արարչից: Ադամը, թեև կազմված հողից, «Աստծո որդին» էր: {ԱՄՋ 18.3}

Նա, որպես Աստծո ներկայացուցիչ, վեր էր դասվում գոյության ցածր կարգերից: Նրանք չէին կարող հասկանալ կամ ճանաչել Աստծո գերիշխանությունը, սակայն ստեղծվել էին մարդուն սիրելու և ծառայելու ունակությամբ: Սաղմոսերգուն ասում է. «Դու իշխան կարգեցիր նրան քո ձեռքի գործերի վրա, ամեն բան նրա ոտքի տակ դրիր՝ ...վայրի գազանները, երկնքի թռչունները ...և ինչ որ ման է գալիս ծովի ճանապարհներում» (Սաղմոս 8.6-8): {ԱՄՋ 19.1}

Ինչպես արտաքուստ, այնպես էլ բնավորությամբ մարդը պիտի կրեր իր Արարչի պատկերը: Քրիստոսն է միմիայն Հոր «էության նկարագիրը» (Եբրայեցիս 1.3), բայց մարդն ստեղծվել է Աստծո նմանությամբ: Նրա բնությունը ներդաշնակ էր Աստծո կամքին, նրա միտքը՝ ընդունակ ըմբռնելու աստվածային բաները: Նրա զգացմունքները մաքուր էին, ախորժակն ու կրքերը՝ ենթարկված բանականության հսկողությանը: Կրելով Աստծո պատկերը և կատարելապես հնազանդվելով Նրա կամքին՝ մարդը սուրբ էր ու երջանիկ: {ԱՄՋ 19.2}

Երբ Արարչի ձեռքն ստեղծեց մարդուն, նա վայելչակազմ էր և կատարելապես համաչափ: Նրա դեմքին առողջարար վարդագույն կար, այն շողում էր կյանքի և ուրախության լույսով: Ադամը շատ ավելի բարձրահասակ էր, քան մարդիկ, որ հիմա բնակվում են երկրում: Եվան նրանից քիչ ցածր էր հասակով, սակայն՝ վայելչակազմ էր և չափազանց գեղեցիկ: Անմեղ զույգն արհեստական հագուստ չէր կրում. նրանք, հրեշտակների պես, լույսի փառավոր հանդերձ էին հագած: Քանի դեռ նրանք հնազանդ էին Աստծուն, այս լուսեղեն հանդերձը միշտ նրանց ծածկոցն էր: {ԱՄՋ 19.3}

Ադամի ստեղծումից հետո բոլոր կենդանի արարածները նրա մոտ բերվեցին՝ ստանալու իրենց անունները: Նա տեսավ, որ դրանցից յուրաքանչյուրն իր զույգի հետ էր, սակայն դրանց մեջ «իրեն նման մի օգնական չգտնվեց»: Երկրում Աստծո ստեղծած բոլոր արարածներից և ոչ մեկը հավասար չէր մարդուն: Եվ Աստված ասեց. «Լավ չէ, որ մարդը մենակ լինի. նրա նման մի օգնական շինեմ իրեն հարմար»: Մարդը չէր ստեղծվել միայնակ ապրելու, նա պետք է հասարակական էակ լիներ: Առանց ընկերակցության՝ Եդեմի գեղեցիկ տեսարաններն ու սքանչելի ստեղծագործությունները չէին կարող կատարյալ երջանկություն պար- գևել: Նույնիսկ հրեշտակների մտերմությունն ի վիճակի չէր լինի բա- վարարելու կարեկցանքի և ընկերության մարդու ցանկությունը: Չկար մեկը նույն բնությամբ՝ նրան սիրելու և նրանից սիրվելու համար: {ԱՄՋ 20.1}

Ինքն Աստված ընկեր տվեց Ադամին: Նա «նրա նման մի օգնական» շինեց՝ նրան համապատասխան, որը կարող էր նրա ընկերը լինել, նրա հետ ներդաշնակ՝ սիրով ու փոխըմբռնումով: Եվան ստեղծվեց Ադամի կողոսկրից. դա նշանակում էր, որ կինը

չպետք է մարդու գլուխը լինի, ոչ էլ պետք է մարդը ոտնահարի նրան որպես ստորադաս անձի, այլ պետք է ընդունի որպես հավասարի, սիրի ու պաշտպանի նրան: Լինելով մարդու մի մասը՝ ոսկր նրա ոսկրից և մարմին նրա մարմնից, կինը նրա երկրորդ «ես»-ն էր, և դա ցույց էր տալիս այն սերտ միությունն ու սիրո կապվածությունը, որ պետք է գոյություն ունենար նրանց միջև: «Որովհետև ոչ ոք իր անձը չի ատում, այլ կերակրում և պահպանում է այն» (Եփեսացիս 5.29): «Սրա համար մարդը կթողնի իր հորն ու իր մորը և կհարի իր կնոջը. և մեկ մարմին կլինեն»: {ԱՄՋ 20.2}

Աստված Ինքը տոնեց առաջին ամուսնությունը: Եվ այսպես՝ այս դրվածքը սահմանել է անձամբ տիեզերքի Արարիչը: «Ամուսնությունը ...պատվական է» (Եբրայեցիս 13.4), դա մարդուն տրված Աստծո առաջին պարգևներից մեկն էր և այն երկու դրվածքներից մեկը, որ մեղանչումից հետո Ադամն իր հետ դուրս բերեց Դրախտից: Երբ այս հարցում համաձայնվում և հնազանդվում են աստվածային սկզբունքներին, ամուսնությունն օրհնություն է բերում, այն պահպանում է մարդկային ցեղի մաքրությունն ու երջանկությունը, դրդում է միջոցներ ձեռնարկել մարդու հասարակական կարիքները հոգալու համար, ազնվացնում է մարդու ֆիզիկական, մտավոր և բարոյական էությունը: {ԱՄՋ 20.3}

«Եվ Եհովա Աստվածը արևելքի կողմում՝ Եդեմի մեջ մի պարտեզ տնկեց և իր շինած մարդուն դրեց այնտեղ»: Այն ամենն, ինչ ստեղծել էր Աստված, կատարյալ էր գեղեցկությամբ, և կարծես պակաս ոչինչ չկար սուրբ զույգի երջանկության համար, սակայն Արարիչը նրանց տվեց Իր սիրո ևս մի նշան՝ հատուկ նրանց համար, որպես տուն, ստեղծելով մի գեղեցիկ պարտեզ: Այս պարտեզում կային ամեն տեսակի ծառեր, որոնցից շատերը կքված էին անուշաբույր և համեղ պտուղների ծանրության տակ: Այնտեղ կային խաղողի սքանչելի որթատունկեր, որոնց ճյուղերից կախված էին ամենահրաշալի և երփներանգ, գայթակղիչ պտուղներ: Ադամն ու Եվան խաղողի ճյուղերն այնպես պետք է թեքեին, որ իրենց համար սաղարթներով և պտուղներով լի կենդանի ծառերից բնակարան ստացվեր: Այնտեղ կային բազմերանգ և անուշաբույր սքանչելի ծաղիկներ: Պարտեզի կենտրոնում կյանքի ծառն էր, որն իր շքեղությամբ գերազանցում էր բոլոր մյուս ծառերին: Դրա պտուղները նման էին ոսկե և արծաթե խնձորների և հավիտենական կյանք տալու հատկություն ունեին: {ԱՄՋ 21.1}

Ահա և ավարտված է արարչագործությունը: «Եվ կատարվեցին երկինքն ու երկիրը և նրա բոլոր զորքը»: «Եվ Աստված տեսավ բոլորը, ինչ որ արել էր, և ահա շատ բարի էր»: Եդեմը ծաղկում էր երկրում: Ադամն ու Եվան ազատ մուտք ունեին դեպի կենաց ծառը: Մեղքի ոչ մի բիծ կամ մահվան ստվեր չէր ապականում հիասքանչ արարչությունը: «Առավոտյան աստղերը միասին ցնծում էին, և Աստծո բոլոր որդիները գովաբանում էին» (Հոբ 38.7): {ԱՄՋ 21.2}

Մեծ Եհովան է դրել երկրի հիմունքը, Նա է գեղեցկությամբ պատել ամբողջ աշխարհը և լցրել այն մարդուն օգտակար բաներով: Նա է ստեղծել երկրի և ծովի բոլոր հրաշքները: {ԱՄՋ 21.3}

Արարչության մեծ աշխատանքն ավարտվեց վեց օրում: Եվ Աստված «յոթերորդ օրը հանգստացավ իր բոլոր գործերից, որ արեց: Եվ ...օրհնեց յոթերորդ օրը և սրբեց այն, որովհետև դրանում հանգստացավ իր բոլոր գործերից, որ Աստված ստեղծեց և արեց»: Աստված բավականությամբ նայեց Իր ձեռքի գործին: Ամեն բան կատարյալ էր, արժանի՝ իր աստվածային Հեղինակին, և Նա հանգստացավ ոչ թե նրա համար, որ հոգնած էր, այլ՝ որ գոհ էր Իր իմաստության ու բարության պտուղներից և Իր փառքի դրսևորումներից: {ԱՄՋ 21.4}

Հանգստանալով յոթերորդ օրը՝ Աստված սրբեց կամ էլ առանձնացրեց այն որպես հանգստի օր մարդու համար: Հետևելով Արարչի օրինակին՝ մարդը պետք է հանգստանար այս սրբազան օրը, որպեսզի, նայելով երկնքին ու երկրին, խորհեր Աստծո արարչության մեծ գործի մասին, ու երբ տեսներ Աստծո իմաստության ու բարության վկայությունները, նրա սիրտը լցվեր սիրով ու պատկառանքով իր Ստեղծողի հանդեպ: {ԱՄՋ 21.5}

Օրհնելով յոթերորդ օրը՝ Աստված Եդեմում արարչագործության հիշատակ սահմանեց: Շաբաթը տրվել էր Ադամին՝ մարդկային ողջ ընտանիքի հորն ու ներկայացուցչին: Բոլոր նրանք, ովքեր պիտի ապրեին երկրի վրա, պահելով այն՝ կհայտնեին իրենց երախտագիտությունը և կճանաչեին, որ Աստված է իրենց Ստեղծողն ու իրենց լիիրավ գերիշխանը, որ իրենք Նրա ձեռքի գործն ու Նրա իշխանության հպատակներն են: Հետևապես, այս դրվածքն ամբողջովին հիշարժան էր՝ տրված ողջ մարդկությանը: Դրանում ոչ մի անհասկանալի բան չկար, և այն չէր սահմանափակվում որևէ առանձին ազգով: {ԱՄՋ 22.1}

Աստված տեսավ, որ Շաբաթն անհրաժեշտ է մարդուն նույնիսկ Եդեմում: Նա կարիք ուներ շաբաթվա օրերից մեկում մի կողմ դնելու իր անձնական շահերն ու առօրյա գործերը, որպեսզի կարողանար ամբողջովին մտածել Աստծո գործերի մասին և խորհել Նրա զորության ու բարության շուրջ: Շաբաթն առավել վառ հիշատակ պիտի լիներ Աստծո մասին և երախտագիտությամբ պետք է լցներ մարդու սիրտը, որովհետև այն ամենն, ինչ նա վայելում էր և ուներ, Արարչի բարերար ձեռքն էր ստեղծել: {ԱՄՋ 22.2}

Աստված կամենում է, որ Շաբաթը մարդկանց դրդի խորհելու Իր արարչագործության մասին: Բնությունը դիմում է նրանց գիտակցությանը՝ հռչակելով, որ կա կենդանի Աստված՝ Արարիչ, ամեն բանի Գերտիրակալը: «Երկինքները պատմում են Աստծո փառքը, և հաստատությունն իմացնում է նրա ձեռքի գործերը: Օրը օրին խոսք է բխում, և գիշերը գիշերին գիտություն է ցույց տալիս» (Սաղմոս 19.1,2): Գեղեցկությունը, որով երկիրը զարդարված է, Աստծո սիրո

վկայությունն է: Մենք կարող ենք դա տեսնել հավերժական բլուրների, վեհասքանչ ծառերի, բացվող բողբոջների և նրբագեղ ծաղիկների մեջ: Այս ամենը վկայում է Աստծո մասին: Շաբաթը, որ մշտապես մատնացույց է անում Նրան, ով ստեղծել է այդ բոլորը, մարդկանց պատվիրում է բացել բնության մեծ գիրքը և հայտնաբերել այնտեղ Արարչի իմաստությունը, զորությունն ու սերը: {ԱՄՋ 22.3}

Սեր նախածնողները, թեև ստեղծված անմեղ և սուրբ, զերծ չէին սխալվելու հնարավորությունից: Աստված ստեղծել էր նրանց որպես ազատ բարոյական էակներ՝ ընդունակ գնահատելու Իր բնավորության քաղցրությունն ու Իր պահանջների արդարացիությունը՝ հնազանդ — վելու կամ չհնազանդվելու լիակատար ազատությամբ: Նրանք պետք է վայելեին հաղորդակցությունն Աստծո և սուրբ հրեշտակների հետ, բայց, նախքան ընդմիշտ ապահով կլինեին, նրանց հավատարմությունը պիտի փորձվեր: Մարդու գոյության ամենասկզբից քննության ենթարկվեց նրա ինքնաբավարարման ցանկությունը՝ այն ճակատագրական տենչը, որը սատանայի անկման հիմքը հանդիսացավ: Գիտության ծառը, որ տնկված էր պարտեզի կենտրոնում՝ կյանքի ծառի կողքին, մեր նախածնողների հնազանդության, հավատի և սիրո ստուգարքը պիտի լիներ: Թեև նրանք ազատ էին ուտելու պարտեզի բոլոր մյուս ծառերից, այս մեկից, սակայն, մահվան սպառնալիքով, նրանց արգելված էր ճաշակել: Նրանք պետք է նաև ենթարկվեին սատանայի փորձություններին, բայց դիմանալով գայթակղությանը՝ նրանք վերջնականապես հեռու կմնային նրա զորությունից և կվայելեին Աստծո հետ լինելու հավիտենական բերկրանքը: {ԱՄՋ 22.4}

Որպես մարդու գոյության պարտադիր պայման՝ Աստված նրան տվել է օրենք: Նա աստվածային կառավարության հպատակ էր, իսկ առանց օրենքի՝ ոչ մի կառավարություն չի կարող լինել: Աստված կարող էր մարդուն ստեղծել այնպիսին, որ նա հնարավորություն չունենար խախտելու Իր օրենքը, Նա կարող էր ետ պահել Ադամի ձեռքն արգելված պտղից, բայց այդ դեպքում մարդը կլիներ ոչ թե ազատ բարոյական էակ, այլ, պարզապես, մի մեխանիզմ: Նրա հնազանդությունն, առանց ընտրելու ազատության, կլիներ ոչ թե կամավոր, այլ՝ ստիպողական: Բնավորության զարգացում չէր լինի: Դա կհակասեր մյուս աշխարհների բնակիչների հետ վարվելու Աստծո մրագրին: Մարդը չէր կարող բանական էակ կոչվել, և սատանայի այն մեղադրանքը, որ Աստծո կառավարությունը բռնատիրական է, կարդարացվեր: {ԱՄՋ 23.1}

Աստված մարդուն ստեղծել է ուղիղ՝ բնավորության ազնիվ գծերով և առանց որևէ հակման դեպի չարը: Նա օժտել է նրան մտավոր բարձր կարողություններով և հայտնել հավատարիմ լինելու հնարավոր ամենաուժեղ դրդումները: Հավիտենական երջանկության նախապայմանը կատարյալ և մշտական հնազանդությունն էր: Միայն այս դեպքում նա կարող էր օգտվել կյանքի ծառից: {ԱՄՋ 23.2}

Սեր նախածնողների տունն օրինակ պիտի լիներ նրանց բոլոր զավակների համար, երբ վերջիններս տարածվեին ամբողջ երկրով մեկ: Այդ տունը, որն Աստված Ինքն էր զարդարել, հոյակերտ պալատ չէր: Մարդիկ զմայլվում ու հպարտանում են՝ կանգնեցնելով շքեղ և վեհաշուք կառույցներ, որոնք իրենց ձեռքի գործն են, իսկ Աստված Ադամին բնակեցրեց պարտեզում: Դա էր նրա տունը: Կապույտ երկինքն էր դրա տանիքը, երկիրն՝ իր նրբերանգ ծաղիկներով ու թարմ խոտերի գորգով՝ դրա հատակը, իսկ վեհասքանչ ծառերի սաղարթախիտ ճյուղերը՝ դրա վարագույրները: Պատերը զարդարված էին հրաշագեղ նկարներով՝ մեծ Վարպետի ձեռքի գործերով: Սուրբ զույգի շրջապատը դաս էր բոլոր ժամանակների համար, որ ճշմարիտ երջանկությունը ոչ թե հպարտության և փառասիրության բավարարման, այլ՝ Աստծո հետ Նրա ստեղծագործության միջոցով հաղորդակցվելու մեջ է: Եթե մարդիկ ավելի քիչ ուշադրություն դարձնեին արհեստական բաների վրա և ավելի շատ ձգտեին պարզության, ապա շատ ավելի կհամապատասխանեին այն նպատակին, որի համար Աստված ստեղծել էր նրանց: Հպարտությունն ու փառասիրությունը երբեք չեն բավարարվում, բայց նրանք, ովքեր իսկապես իմաստուն են, օգտակար և ազնվացնող հաճույք կգտնեն այն վայելքների մեջ, որ Աստված մատչելի է դարձրել ամենքի համար: {ԱՄՋ 23.3}

Եդեմի բնակիչներին հանձնարարված էր հոգ տանել պարտեզի մասին՝ «մշակել և պահել այն»: Նրանց այդ զբաղմունքը ոչ թե հոգնե- ցուցիչ էր, այլ՝ հաճելի և առողջարար: Աստված աշխատանքը տվել է մարդուն որպես օրհնություն՝ զբաղեցնելու նրա միտքը, ուժեղացնելու նրա մարմինն ու զարգացնելու նրա կարողությունները: Ադամը մտավոր և ֆիզիկական աշխատանքի մեջ էր գտնում իր սուրբ գոյության մեծագույն հաճույքը: Ու երբ անհնազանդության հետևանքով վտարվեց իր գեղեցիկ տնից, նա ստիպված էր երեսի քրտինքով վաստակել իր հանապազօրյա հացը: Այն նույն աշխատանքը, որը թեև բոլորովին տարբեր էր իր հաճելի զբաղմունքից պարտեզում, նրա պաշտպանությունն էր փորձության դեմ և նրա երջանկության աղբյուրը: Նրանք, ովքեր աշխատանքն անեծք են համարում, քանի որ այն հաճախ ուղեկցվում է հոգնածությամբ ու ցավով, մեծապես սխալվում են: Հարուստները հաճախ արհամարհանք են տածում դեպի աշխատավոր դասակարգը, բայց սա ամբողջովին հակասում է մարդուն ստեղծելու Աստծո ծրագրին: Ի՞նչ է ամենահարուստ մարդկանց ունեցվածքն այն ժառանգության համեմատ, որ տրված էր արքայական Ադամին: Սակայն Ադամը չպետք է պարապ մնար: Սեր Արարիչը, ով հասկանում է, թե ինչ է անհրաժեշտ մարդու երջանկության համար, Ադամին տվել էր իր աշխատանքը: Կյանքում իսկական ուրախություն կարող են գտնել միայն աշխատող տղամարդիկ և կանայք: Հրեշտակները ժրաջան աշխատողներ են, նրանք ծառայում են Աստծուն՝ սպասավորություն անելով մարդկանց որդիներին: Արարիչը ոչ մի տեղ չի պատրաստել ձրիակերների համար: {ԱՄՋ 24.1}

Քանի դեռ հավատարիմ էին Աստծուն, Ադամն ու նրա ընկերուհին պետք է իշխեին երկրին: Անսահմանափակ իշխանություն էր տրված նրանց ամեն մի կենդանություն ունեցողի վրա: Առյուծը դառան հետ հաշտ խաղում էր նրանց շուրջը կամ էլ միասին պառկում էին նրանց ոտքերի մոտ: Ուրախ թռչուններն առանց վախի ճախրում էին նրանց շուրջը, ու երբ զվարթ դայլայլով փառաբանում էին իրենց Ստեղծողին, Ադամն ու Եվան միանում էին նրանց՝ զովերգելով Հորը և Որդուն: {ԱՄՋ 25.1}

Սուրբ զույգը ոչ միայն Աստծո հայրական խնամքի տակ գտնվող զավակներ էին, այլ նաև՝ ուսանողներ, որոնք դասեր էին ստանում ամենագետ Արարչից: Նրանց այցելում էին հրեշտակները, և նրանք իրենց Ստեղծողի հետ անմիջական հաղորդակցության առավելությունն ունեին: Նրանք լի էին կյանքի ծառի կենարար ուժով և մտավոր կարողությամբ քիչ էին զիջում հրեշտակներին: Տեսանելի տիեզերքի գաղտնիքները՝ «գիտությամբ Կատարյալի հրաշքները» (Հոբ 37.16), նրանց համար գիտելիքների և հիացմունքի անսպառ աղբյուր էին: Բնության օրենքներն ու երևույթները, որոնք ահա արդեն վեց հազար տարի է զբաղեցնում են մարդկային միտքը, բացահայտում էր նրանց անսահման և ամենակալ Արարիչը: Նրանք ուսումնասիրում էին տերևները, ծաղիկներն ու ծառերը՝ պարզելով դրանցից յուրաքանչյուրի կյանքի գաղտնիքները: Ադամը ծանոթ էր ամեն մի կենդանու հետ՝ ջրերում լողացող վիթխարի լևիաթանից մինչև աննշան միջատը, որ սավառնում էր արեգակի ճառագայթների ներքո: Դրանցից յուրաքանչյուրին նա տվել էր անուն և ծանոթ էր բոլորի բնավորությանն ու սովորություններին: Աստծո փառքը երկնքում, անհամար աշխարհներն՝ իրենց կարգավորված պտույտի մեջ, «ամպերի հավասարակշռությունը», լույսի և ձայնի, ցերեկվա և գիշերվա գաղտնիքները՝ այս ամենը մեր նախածնողների ուսումնասիրության առարկան էին: Անտառի ամեն մի տերևի կամ լեռան քարերի, ամեն մի շողացող աստղի վրա՝ երկրում, օդում և երկնքում, գրված էր Աստծո անունը: Արարչագործության կարգն ու ներդաշնակությունը նրանց վկայում էին անսահման իմաստության և զորության մասին, ու երբ նրանք ինչ-որ հրապուրիչ բան էին հայտնաբերում, դա նրանց սրտերը լցնում էր ավելի ջերմ սիրով ու երախտագիտության ավելի խոր զգացումներով: {ԱՄՋ 25.2}

Քանի դեռ նրանք հավատարիմ էին աստվածային օրենքին՝ ճանաչելու, վայելելու և սիրելու նրանց ունակություններն անընդհատ պիտի աճեին: Նրանք պետք է մշտապես գիտության նոր գանձեր ձեռք բերեին, երջանկության նորանոր աղբյուրներ հայտնաբերեին և Աստծո անմատչելի ու անփոփոխ սիրո ավելի ու ավելի հստակ վկայություններ գտնեին: {ԱՄՋ 25.3}

Գլուխ 3 - Բառացի շաբաթը

Յոթնօրյա շաբաթը, շաբաթ օրվա պես, սահմանվել է արարչության ժամանակ և պահպանվել ու հասել է մինչև մեր օրերը աստվածաշնչյան պատմության միջոցով: Աստված Ինքն է սահմանել առաջին շաբաթը որպես նմուշ բոլոր հետագա շաբաթների համար՝ մինչև ժամանակների վերջը: Ինչպես և բոլոր մյուսները, այն բաղկացած էր յոթ տառացի օրերից: Վեց օր օգտագործելով արարչագործության համար՝ Աստված հանգստացավ յոթերորդ օրը, հետո օրհնեց այն և առանձնացրեց որպես հանգստի օր մարդու համար: {ԱՄՋ 27.1}

Սինայից տրված օրենքով Աստված հաստատեց շաբաթը և այն փաստերը, որոնց վրա այն հիմնված էր: Պատվիրելով՝ «Հիշիր շաբաթ օրը, որ սուրբ պահես այն», և նշելով, թե ինչ պետք է արվի վեց օրվա ընթացքում և ինչ չպետք է արվի յոթերորդ օրը, Նա հայտնում է շաբաթն այդպես պահելու պատճառը՝ ցույց տալով Իր իսկ օրինակը. «Որովհետև Եհովան վեց օրվա մեջ ստեղծեց երկինքն ու երկիրը՝ ծովն ու բոլոր նրանց մեջ եղածները, և յոթերոդ օրը հանգստացավ. դրա համար Եհովան օրհնեց հանգստության օրը և սրբացրեց այն» (Ելից 20.8-11): Այս փաստարկն առավել գեղեցիկ և համոզիչ է երևում, երբ արարչության օրերը դիտում ենք որպես տառացի: Յուրաքանչյուր շաբաթվա առաջին վեց օրը մարդուն տրված են աշխատելու համար, որովհետև Աստված առաջին շաբաթվա նույն ժամանակամիջոցն անցկացրեց արարչագործության մեջ: Յոթերորդ օրը՝ ի հիշատակ Արարչի հանգստյան, մարդը պետք է ձեռնպահ մնա աշխատանքից: {ԱՄՋ 27.2}

Բայց այն ենթադրությունը, թե առաջին շաբաթվա իրադարձությունները տևել են հազար հազարավոր տարիներ, հիմնովին հակասում է չորրորդ պատվիրանին: Ստացվում է, թե Արարիչը մարդկանց պատվիրում է յոթ տառացի օրերից բաղկացած շաբաթը պահել ի հիշատակ հարատև, անորոշ ժամանակահատվածների: Սա նման չէ Իր արարածների հետ Նրա վարվելաձևին: Դա անորոշ և անհասկանալի է դարձնում այն, ինչը Նա շատ պարզ և հստակ է արել: Դա անհավատություն է՝ իր ամենախորամանկ և, միաժամանակ, ամենավտանգավոր ձևով, և դրա իրական բնույթն այնքան անճանաչելի է, որ ընդունում և սովորեցնում են շատերը, ովքեր դավանում են, թե հավատում են Աստվածաշնչին: {ԱՄՋ 27.3}

«Տիրոջ խոսքով երկինքները ստեղծվեցին, և նրա բերանի հոգով՝ դրանց բոլոր զորքերը»: «Որովհետև նա ասաց, և եղավ, նա հրամայեց, և հաստատվեց» (Սաղմոս 33.6,9): Աստվածաշունչը չի ասում, որ երկիրը երկար դարերի ընթացքում դանդաղ զարգացել է քաոսային վիճակից: Սրբազան Գրությունը հայտնում է, որ արարչության ամեն մի օրը կազմված է եղել երեկոյից և առավոտից, ինչպես և հետագա բոլոր մյուս օրերը: Յուրաքանչյուր օրվա գրառման վերջում նշվում է Արարչի աշխատանքի արդյունքը: Առաջին շաբաթվա մասին գրությունն

ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Սրանք են երկնքի և երկրի ծնունդները նրանց ստեղծված ժամանակ այն օրը, որ Եհովա Աստվածը երկիրն ու երկինքն արարեց» (Ծննդոց 2.4): Բայց սա հակասում է այն տեսությանը, որ արարչագործության օրերը տառացի չեն եղել: Ամեն մի օրը ծնունդ է կոչվել, որովհետև ամեն մեկում Աստված Իր աշխատանքի մի նոր մասն է կատարել: {ԱՄՋ 28.1}

Երկրաբանները պնդում են, թե հենց երկրից ապացույց են գտել, որ այն շատ ավելի հին է, քան գրել է Մովսեսը: Մարդկանց և կենդանիների ոսկորները, ինչպես նաև պատերազմի զենքերը, կարծրացած ծառերը և այլն, ինչպես պարզվել է, շատ ավելի մեծ են եղել, քան նրանք, որ այսօր գոյություն ունեն կամ գոյություն են ունեցել հազարավոր տարիներ, և սրանից հետևում է, որ երկիրը բնակեցված է եղել ավելի վաղ ժամանակներում, քան նշում է արարչության մասին գրությունը, և այն էլ մարդկային այնպիսի էակներով, որոնք իրենց չափերով լիովին գերազանցում են բոլոր նրանց, ովքեր ապրում են հիմա: Այս տեսությունը շատերին, ովքեր դավանում են, թե հավատում են Աստվածաշնչին, դրդել է ընդունել այն դիրքորոշումը, թե արարչության օրերը եղել են երկար, անորոշ ժամանակամիջոցներ: {ԱՄՋ 28.2}

Բայց Աստվածաշնչի պատմությունից դուրս՝ երկրաբանությունը ոչինչ ապացուցել չի կարող: Նրանք, ովքեր այդքան վստահորեն հիմնվում են այդ հայտնագործությունների վրա, ճիշտ պատկերացում չունեն Ջրհեղեղից առաջ եղած մարդկանց, կենդանիների և ծառերի կամ էլ այն մեծ փոփոխությունների մասին, որոնք տեղի են ունեցել Ջրհեղեղից հետո: Երկրում գտած մնացուկներն իրոք վկայում են, որ անցյալում իրավիճակը շատ բաներում տարբեր է եղել ներկայինից, բայց այն ժամանակվա մասին, երբ այդ պարագաները գոյություն են ունեցել, կարող ենք իմանալ միայն Ներշնչյալ Գրքից: Ջրհեղեղի պատմության մեջ Աստծո Հոգին բացատրել է այն, ինչ երկրաբանությունն ինքնին երբեք չէր կարող հասկանալ: Նոյի օրերում մարդիկ, կենդանիներն ու ծառերը՝ շատ անգամ ավելի մեծ, քան ներկայումս են, թաղվել են հողում և, այդպիսով, պահպանվել որպես վկայություն գալիք սերունդներին այն մասին, որ մինչջրհեղեղյան աշխարհի բնակիչները կործանվել են հեղեղով: Աստված նախատեսել էր, որ այս բաների հայտնագործությունը կամրապնդի հավատը ներշնչված պատմության նկատմամբ, բայց մարդիկ իրենց ունայն դատողությամբ ընկան այն նույն մոլորության մեջ, ինչպես ժողովուրդը Ջրհեղեղից առաջ. այն ամենն, ինչ Աստված տվել էր նրանց որպես բարիք, նրանք, սխալ օգտագործելով, անեծքի էին վերածել: {ԱՄՋ 28.3}

Սատանայի հնարքներից մեկն է՝ դրդել ժողովրդին ընդունելու անհավատության առասպելները, քանի որ այդպիսով նա կարող է աղավաղել Աստծո օրենքը, որն ինքնին շատ պարզ է, և խրախուսել մարդկանց՝ ապստամբելու աստվածային կառավարության դեմ: Նրա ջանքերն առանձնապես ուղղված են

ընդդեմ չորրորդ պատվիրանի, որովհետև այն հստակորեն մատնանշում է կենդանի Աստծուն՝ երկնքի և երկրի Արարչին: {ԱՄՋ 29.1}

Անդադար փորձեր են արվել բացատրելու արարչագործությունը որպես բնական երևույթների արդյունք, և մարդկային այս դատողությունն ընդունում են նույնիսկ քրիստոնյա կոչեցյալները՝ հակառակ Սուրբ Գրոց պարզ փաստարկների: Կան շատերը, ովքեր դեմ են մարգարեությունների ուսումնասիրությանը, հատկապես Դանիելի և Հայտնության, հայտարարելով, որ դրանք այնքան խորհրդավոր են, որ մենք չենք կարող հասկանալ, և միաժամանակ այդ նույն անձինք եռանդագին ընդունում են երկրաբանների ենթադրությունները՝ հակառակ Մովսեսի գրության: Բայց եթե այն, ինչ Աստված հայտնել է, այդքան բարդ է հասկանալու համար, ապա որքա՜ն ավելի անխոհեմ է ընդունել սոսկ ենթադրություններն այն բաների վերաբերյալ, ինչ Աստված չի հայտնել: {ԱՄՋ 29.2}

«Ծածուկ բաները մեր Եհովա Աստծո համար են, բայց հայտնի բաները՝ մեզ և մեր որդկանց համար հավիտյան» (Երկրորդ Օրինաց 29.29): Այն, թե ինչպես է կատարվել արարչագործությունը, Աստված երբեք չի հայտնել մարդկանց, և մարդկային գիտությունն անկարող է պարզել Ամենաբարձրյալի գաղտնիքները: Նրա ստեղծագործ զորությունը նույնքան անըմբռնելի է, որքան Նրա գոյությունը: {ԱՄՋ 29.3}

Աստված թույլ է տվել, որ լույսի հեղեղներ թափվեն աշխարհի վրա՝ ինչպես գիտության, այնպես էլ արվեստի բնագավառներում, բայց երբ գիտնականներն այս հարցերին նայում են սոսկ մարդկային տեսանկյունից, ապա, անշուշտ, կհանգեն սխալ եզրակացության: Մեղք չէ խորհել այն մասին, ինչ հայտնում է Աստծո խոսքը, եթե մեր տեսությունները չեն հակասում Սուրբ Գրքի փաստերին, բայց նրանք, ովքեր թողնելով Աստծո խոսքը, փորձում են բացատրել Նրա արարչագործությունը գիտական սկզբունքներով՝ առանց քարտեզի և կողմնացույցի՝ թափառում են անծանոթ օվկիանոսում: Ամենահանճարեղ մարդիկ, եթե իրենց ուսումնասիրության մեջ չեն առաջնորդվում Աստծո խոսքով, գիտության և հայտնության փոխհարաբերությունները պարզերս իրենց ջանքերում կհասնեն փակուղու: Եվ որովհետև Արարիչն ու Նրա գործերը նրանց հասկացողությունից այնքան վեր են, որ նրանք անկարող են բացատրել դրանք բնական օրենքների միջոցով, աստվածաշնչյան պատմությունը նրանք անստույգ են համարում: Ովքեր կասկածում են Հին և Նոր Կտակարանների ստույգությանը, կանեն ևս մեկ քայլ և կսկսեն կասկածել Աստծո գոյությանը, և ապա, կորցներով իրենց խարիսխը, կթողնվեն ջախջախվելու՝ բախվերով անհավատության ժայռերին: {ԱՄՋ 30.1}

Այդ անձինք կորցրել են հավատի պարզությունը: Պետք է հաստատ հավատալ Աստծո Սուրբ Խոսքի աստվածային հեղինակությանը: Աստվածաշունչը չպետք է ստուգվի մարդկանց գիտական տեսություններով: Մարդկային գիտությունն անհուսալի ուղեցույց է: Կասկածամիտները, որոնք Աստվածաշունչը կարդում են

այն քննադատելու համար, կարող են, չհասկանալով ոչ գիտությունը, ոչ էլ հայտնությունը, պնդել, թե դրանց միջև հակասություններ կան, սակայն դրանք, ճիշտ հասկացվելու դեպքում, կատարյալ ներդաշնակության մեջ են: Մովսեսը գրել է Աստծո Հոգու ներշնչմամբ, և երկրաբանության ճիշտ տեսությունը երբեք չի կարող չհամապատասխանել նրա գրածներին: Ամբողջ ճշմարտությունն, ինչպես բնության, այնպես էլ հայտնության մեջ, ինքնին ներդաշնակ է իր բոլոր դրսևորումներում: {ԱՄՋ 30.2}

Աստծո խոսքում այնպիսի հարցեր են բարձրացվում, որոնց ամե- նափայլուն գիտնականներն անգամ երբեք չեն կարող պատասխանել: Այս թեմաներին ուշադրություն է դարձվում մեզ ցույց տալու համար, թե որքան շատ բաներ կան նույնիսկ մեր առօրյա կյանքում, որ սահմանափակ մարդկային միտքն իր ողջ պարծենկոտ իմաստությամբ երբեք չի կարող լիովին հասկանալ: {ԱՄՋ 30.3}

Սակայն որոշ գիտնականներ կարծում են, թե կարող են ըմբռնել Աստծո իմաստությունը, այն, ինչ Նա արել է և ինչ կարող է անել: Լայն տարածում է գտել այն գաղափարը, թե Նա սահմանափակված է Իր իսկ օրենքներով: Մարդիկ կամ մերժում, կամ անտեսում են Նրա գոյությունը, կամ էլ խորհում են բացատրել ամեն բան, նույնիսկ այն, թե ինչպես է Նրա Հոգին ներգործում մարդկային սրտի վրա, և նրանք այլևս ոչ երկյուղում են Նրա անունից և ոչ էլ վախենում Նրա զորությունից: Նրանք չեն հավատում գերբնականին, չեն հասկանում Աստծո օրենքները կամ էլ դրանց միջոցով Իր կամքը կատարելու Նրա անսահման կարողությունը: Ինչպես սովորաբար ընդունված է՝ «բնության օրենքներ» արտահայտությունն իր մեջ ընդգրկում է այն, ինչ մարդիկ ընդունակ են եղել հայտնաբերելու այն օրենքների վերաբերյալ, որոնք կառավարում են ֆիզիկական աշխարհը, բայց որքա՜ն աղքատ են նրանց գիտելիքները և որքա՜ն ընդարձակ այն ոլորտը, որում կարող է գործել Արարիչն Իր իսկ օրենքների համաձայն: Այն ամբողջովին վեր է սահմանափակ էակների հասկացողությունից: {ԱՄՋ 31.1}

Շատերը սովորեցնում են, թե մատերիան կենսական ուժ է պարունակում, որ նյութն օժտված է որոշակի հատկություններով, որ այն գործում է իրեն հատուկ էներգիայի միջոցով, և որ բնության երևույթները ներդաշնակ ղեկավարվում են այնպիսի հաստատուն օրենքներով, որոնց Աստված Ինքն էլ չի կարող միջամտել: Սա կեղծ գիտություն է և չի հաստատվում Աստծո խոսքով: Բնությունն իր Ստեղծողի ծառան է: Աստված չեղյալ չի համարում Իր օրենքները կամ էլ գործում հակառակ դրանց, այլ շարունակ օգտագործում է դրանք որպես Իր գործիքները: Բնությունը վկայում է բանականության, ակտիվ էներգիայի ներկայության մասին, որը գործում է իր օրենքների մեջ և դրանց միջոցով: Հայրն ու Որդին անդադար գործում են բնության մեջ: Քրիստոսն ասում է. «Իմ Հայրը մինչև հիմա գործում է, և ես էլ գործում եմ» (Հովհաննես 5.17): {ԱՄՋ 31.2}

Ղևտացիները Նեեմիայի գրառած իրենց օրհներգում երգում էին. «Դու, միայն դու ես Եհովա. դու ստեղծեցիր երկինքը, երկինքների երկինքը և երկրի բոլոր զորքերը ...և դու ես նրանց բոլորին կենդանություն տվողը» (Նեեմիա 9.6): Ինչ վերաբերում է այս աշխարհին, Աստծո արարչագործությունն ավարտված է: Որովհետև «գործերն աշխարհի սկզբից կատարված էին» (Եբրայեցիս 4.3): Բայց Նրա էներգիան մինչև հիմա գործում է՝ պահելով Նրա արարչության առարկաները: Ոչ թե ինչպես մի մեխանիզմ, որը, մեկ անգամ լարված, շարունակում է գործել իր ներքին էներգիայով, կամ ինչպես զարկերակն է բաբախում և շնչառությունը շարունակվում, այլ ամեն մի շունչ և սրտի ամեն մի զարկ վկայում է Նրա անսահման հոգատարության մասին, ում շնորհիվ մենք «ապրում, շարժվում ենք և կանք» (Գործք Առաքելոց 17.28):

Իր ներքին էներգիայով չէ, որ երկիրը տարեցտարի տալիս է իր առատությունները՝ շարունակելով իր պտույտն արեգակի շուրջը: Աստծո ձեռքն է շարժման մեջ դնում մոլորակները և ղեկավարում դրանց կարգավորված երթը երկինքների մեջ: Նա է երկնքի «զորքերը թվով հանողը, որ դրանց ամենքին կանչում է անունով՝ մեծ իշխանությամբ և սաստիկ զորությամբ. մեկը չի կորչում» (Եսայիա 40.26): Այդ Նրա ուժով է, որ ծաղկում է բուսականությունը, որ հայտնվում են տերևները և փթթում՝ ծաղիկները: Նա է, ով «սարերին խոտ է բուսցնել տալիս» (Սաղմոս 147.8),

և Նրանով են բերք տալիս դաշտերը: «Անտառի բոլոր գազաններն» «Աստծուց են խնդրում իրենց կերակուրը», և ամեն կենդանի արարած՝ ամենափոքր միջատից մինչև մարդը, ամեն օր կախված է Նրա մշտարթուն հոգատարությունից: Գեղեցիկ են սաղմոսերգուի խոսքերը. «Սրանք ամենքը քեզ են սպասում ...Դու տալիս ես նրանց, և նրանք հավաքում են. դու բաց ես անում քո ձեռքը, և կշտանում են բարիքով» (Սաղմոս 104.20,21,27,28): Նրա խոսքը հսկում է տարերքը, Նա երկինքները ծածկում է ամպերով և անձրև է պատրաստում երկրի համար: «Նա բրդի պես ձյուն է տալիս և եղյամ է ցանում մոխրի փոշու պես» (Սաղմոս 147.16): «Նա ձայն տալիս՝ ջրերի բազմություն է լինում երկնքում, և նա վեր է հանում գոլորշիները երկրի ծայրերից, կայծակներ է շինում անձրևի համար և հողմը հանում է իր շտեմարաններից» (Երեմիա 10.13): {ԱՄՋ 31.3}

Աստված է ամեն բանի հիմքը: Ամեն ճշմարիտ գիտություն ներդաշնակ է Նրա գործերի հետ, և իսկական կրթությունը կդրդի հնազանդվելու Նրա իշխանությանը: Գիտությունը նոր հրաշքներ է հայտնում մեզ, այն սավառնում և նոր բարձունքներ ու խորություններ է նվաճում, բայց ոչինչ չի հայտնաբերում իր հետազոտության մեջ, որը հակասի աստվածային հայտնությանը: Տգիտությունը գիտական կոչերով կարող է պաշտպանել Աստծո մասին սխալ պատկերացումները, բայց բնության գիրքը և գրված խոսքը լույս են սփռում մեկը մյուսի վրա: Մենք, այդպիսով, մղվում ենք պաշտելու Արարչին և գիտակցաբար վստահելու Նրա խոսքին: {ԱՄՋ 32.1}

Ոչ մի սահմանափակ միտք չի կարող ըմբռնել Անսահմանի գոյությունը, ուժը, իմաստությունն ու գործերը: Սրբազան հեղինակն ասում Է. «Կարո՞ղ ես Աստծո խորհուրդը գտնել կամ Ամենակարողի էությանը հասնել: Նա երկնքի բարձրությունն ունի, ի՞նչ կանես դու, դժոխքից խոր է նա, ի՞նչ կիասկանաս: Նրա չափը երկրից երկայն է և լայն է ծովից» (Հոբ 11.7-9): Երկրի ամենահանճարեղ մտածողները չեն կարող ըմբռնել Աստծուն: Մարդիկ կարող են անվերջ հետազոտել, անվերջ սովորել, և միևնույն է՝ դրանից այն կողմ անսահմանություն է: {ԱՄՋ 32.2}

Սակայն արարչագործությունը վկայում է Աստծո զորության և մեծության մասին: «Երկինքները պատմում են Աստծո փառքը, և հաստատությունն իմացնում է նրա ձեռքի գործերը» (Սաղմոս 19.1): Նրանք, ովքեր իրենց խորհրդականն են դարձնում գրված Խոսքը, գիտության մեջ օգնություն կգտնեն՝ հասկանալու Աստծուն: «Նրա աներևույթ բաները, աշխարհի սկզբից ստեղծվածներով իմացվելով՝ տեսնվում են, այսինքն՝ նրա մշտնջենավոր զորությունը և աստվածությունը» (Հռոմեացիս 1.20): {ԱՄՋ 33.1}

Գլուխ 4 - Փորձություն & անկում

Ծննդոց 3

Այլևս չկարողանալով ազատ ապստամբություն բորբոքել երկրն- քում՝ սատանան որոշեց իր թշնամությունն Աստծո դեմ շարունակել երկրի վրա՝ հուսալով կործանման հասցնել մարդկային ցեղը: Եդեմում սուրբ զույգի երջանկության ու խաղաղության մեջ նա տեսավ այն երանությունը, որն ընդմիշտ կորած էր իր համար: Նախանձից դրդված՝ նա վճռեց նրանց մղել անհնազանդության և նրանց վրա բերել մեղքի ու հանցանքի պատիժը: Նա ուզում էր նրանց սերն իրենց Արարչի հանդեպ փոխել անվստահության և նրանց գովասանքի երգերը՝ նախատինքի: Այսպիսով՝ նա կկարողանար այս անմեղ էակներին ոչ միայն գցել նույն դժբախտության մեջ, որում ինքն էր գտնվում, այլ նաև՝ անարգանք կհասցներ Աստծուն և վիշտ կպատճառեր երկնքին: {ԱՄՋ 34.1}

Սեր նախածնողներն առանց նախազգուշացման չթողնվեցին իրենց սպառնացող վտանգի վերաբերյալ: Երկնային լրաբերները հայտնեցին նրանց սատանայի մեղանչման պատմությունը և նրանց կործանելու՝ նրա դավադրությունները՝ ավելի հստակ բացատրելով նրանց աստվածային այն կառավարության բնույթը, որը սատանան փորձում էր տապալել: Աստծո արդար պատվիրաններին չհնազանդվելու հետևանքով է, որ սատանան և նրա զորքը մեղանչեցին: Որքա՜ն կարևոր էր, ուրեմն, որ Ադամն ու Եվան պատվեին այն օրենքը, որի միջոցով միայն կարելի էր կարգ ու արդարություն պահպանել: {ԱՄՋ 34.2}

Աստծո օրենքը նույնքան սրբազան է, որքան՝ Ինքն Աստված: Դա Նրա կամքի հայտնությունն է, Նրա բնավորության պատճենը, աստվածային սիրո և իմաստության արտահայտությունը: Արարչության ներդաշնակությունը կախված է բոլոր արարածների՝ շնչավոր, թե անշունչ, կատարյալ հնազանդությունից Արարչի օրենքին: Աստված օրենքներ է սահմանել ոչ միայն կենդանի էակների, այլ նաև բնության բոլոր երևույթների կառավարման համար: Ամեն բան ղեկավարվում է հաստատուն օրենքներով, որոնք չպետք է անտեսվեն: Բայց մինչ բնության մեջ ամեն բան գործում է բնական օրենքներով, երկրի բոլոր բնակիչներից միայն մարդն է, որ ենթակա է բարոյական օրենքին: Մարդուն, որն արարչագործության պսակն է, Աստված ունակություն է տվել հասկանալու Իր պահանջները, ըմբռնելու Իր օրենքի արդարությունն ու բարությունը, իսկ նրանից, ի պատասխան, պահանջվում է հնազանդություն այդ օրենքի սրբազան պատվիրաններին: {ԱՄՋ 34.3}

Եդեմի բնակիչները, հրեշտակների նման, պետք է քննության ենթարկվեին, նրանց երջանկությունը կարող էր պահպանվել միայն Արարչի օրենքին հավատարիմ մնալու պայմանով: Նրանք կարող էին հնազանդվել և ապրել, կամ՝ չենթարկվել և կորչել: Աստված առատ օրհնություններ էր պարգևել նրանց, բայց եթե նրանք չենթարկվեին Նրա կամքին, Նա, ով չխնայեց մեղանչած հրեշտակներին, չէր խնայի

նաև նրանց: Օրինազանցությունն անեծքի կվերածեր Նրա պարգևները, իսկ նրանց կհասցներ թշվառության ու կորստյան: {ԱՄՋ 35.1}

Հրեշտակներն զգուշացրին նրանց՝ զգոն լինել սատանայի հնարքների դեմ, քանի որ նա ոչ մի ջանք չէր խնայի նրանց թակարդը գցելու համար: Քանի դեռ նրանք հնազանդ էին Աստծուն, չարագործը չէր կարող վնասել նրանց, որովհետև անհրաժեշտության դեպքում երկնքի բոլոր հրեշտակներն օգնության կուղարկվեին նրանց: Եթե նրանք վճռականորեն ետ վանեին նրա առաջին շշնջոցները, ապա նույնքան ապահով կլինեին, որքան երկնային լրաբերները: Բայց եթե զեթ մեկ անգամ զիջեին փորձությանը, նրանց էությունն այնպես կայլասերվեր, որ այլևս ոչ ուժ կունենային դիմակայելու սատանային, ոչ էլ՝ ցանկու- թյուն: {ԱՄՋ 35.2}

Գիտության ծառը նախատեսված էր Աստծո հանդեպ նրանց սերն ու հնազանդությունը փորձելու համար: Ինչ վերաբերում է պարտեզում աճած պտուղները ճաշակելուն՝ Տերն անհրաժեշտ էր զտել ընդամենը մեկ արգելք դնել նրանց վրա, բայց եթե նրանք անտեսեին Աստծո կամքն այս հարցում, ապա իրենց վրա կբերեին անօրենության պատիժը: Սատանան չէր կարող ամենուրեք հետապնդել նրանց իր փորձություններով, նա կարող էր նրանց մոտենալ միայն արգելված ծառի մոտ: Եթե նրանք փորձեին ուսումնասիրել դրա էությունը, ապա կընկնեին նրա ազդեցության տակ: Նրանց հորդորել էին միշտ հիշել Աստծո նախազգուշացումը և հետևել այն ցուցումին, որ Նա հարմար էր զտել տալ: {ԱՄՋ 35.3}

Իր գործն աննկատելիորեն իրականացնելու համար սատանան որպես միջնորդ ընտրեց օձին՝ մի դիմակ, որը խիստ հարմար էր խաբեության իր նպատակին հասնելու համար: Օձն այն ժամանակ երկրի ամենաիմաստուն և ամենագեղեցիկ արարածներից մեկն էր: Նա ուներ թևեր, և օդում թռչելիս ապշեցուցիչ պայծառության տեսարան էր ներկայացնում, ինչպես ողորկ ու շողշողուն ոսկին: Նստած արգելված ծառի սաղարթախիտ ճյուղերին և ճաշակելով նրա համեղ պտուղը՝ նա մի ուշագրավ և դյութիչ տեսարան էր նայողի համար: Խաղաղ պարտեզում այսպես ծպտվել էր չարագործը՝ սպասելով իր զոհին: {ԱՄՋ 35.4}

Հրեշտակները նախազգուշացրել էին Եվային, որ նա, պարտեզում առօրյա գործերով զբաղված ժամանակ, չբաժանվի ամուսնուց, ում կողքին փորձության մեջ ընկնելու ավելի քիչ վտանգ կսպառնար, քան եթե միայնակ լիներ: Բայց, կլանված իր հաճելի զբաղմունքով, նա անգիտակցաբար հեռացավ ամուսնու կողքից: Նկատելով, որ միայ նակ է, կինը վտանգի կանխազգացում ունեցավ, բայց դեն վանեց իր երկյուղը՝ մտածելով, որ բավական իմաստուն և ուժեղ է՝ նկատելու չարը և դիմակայելու նրան: Մոռացած հրեշտակների նախազգուշացումը՝ նա հանկարծ սթափվեց, գիտակցելով, որ հափշտակված հետաքրքրությամբ նայում է արգելված ծառին: Զգալով այդ՝ նա շուտով մի պահ սթափվեց: Պտուղը չափազանց գեղեցիկ էր, և նա ինքն իրեն հարցրեց, թե ինչու է Աստված արգելել դա իրենց: Այժմ հիանալի

հնարավորություն էր փորձիչի համար: Ընդունակ ասես կարդալու կնոջ մտքերը՝ նա դիմեց նրան. «Իրա՞վ Աստված ասեց, որ պարտեզի ոչ մի ծառից չուտեք»: Եվան զարմանքից ցնցվեց՝ կարծես լսելով իր մտքերի արձագանքը: Բայց օձը շարունակեց՝ քաղցրաձայն ու քնքշորեն գովաբանելով նրա հիասքանչ գեղեցկությունը, և կինը ոչ առանց հաճույքի լսեց նրա խոսքերը: Այդտեղից փախչելու փոխարեն՝ նա շվարած կանգ առավ՝ լսելու օձի խոսքերը: Եթե նրան դիմեր հրեշտակի պես մի էակ, կինը սարսափահար կլիներ, բայց նրա մտքով անգամ չէր անցնում, որ հրապուրիչ օձը կարող էր դառնալ ընկած թշնամու միջնորդը: {ԱՄՋ 36.1}

Փորձիչի խորամանկ հարցին նա պատասխանեց. «Պարտեզի ծառերի պտղից ուտում ենք, բայց այն ծառի պտղից, որ պարտեզի մեջտեղում է, Աստված ասաց՝ մի° ուտեք դրանից և դրան մի° դիպչեք, որ չմեռնեք: Եվ օձը կնոջն ասաց. Բնավ չեք մեռնի: Այլ Աստված գիտի, թե այն օրը, որ դրանից ուտեք, ձեր աչքերը կբացվեն, և Աստծո պես կլինեք՝ չարն ու բարին իմացող»: {ԱՄՋ 36.2}

Ճաշակելով այս ծառից, ասաց նա, նրանք գոյության ավելի բարձր մակարդակի կհասնեն և կմտնեն գիտության ավելի լայն ասպարեզ: Նա ինքն էլ ճաշակել է արգելված պտուղը և, որպես արդյունք, խոսելու ունակություն է ստացել: Եվ նա ներշնչում էր, թե Տերը դիտավորյալ է այն թաքցրել նրանցից, որպեսզի, ուտելով, չհավասարվեն Իրեն: Իմաստությամբ ու զորությամբ օժտելու հատկության պատճառով է, որ Նա արգելել է նրանց ճաշակել այն և, նույնիսկ, դիպչել նրան: Փորձիչն ակնարկեց, որ աստվածային նախազգուշացումն իրականում չի կատարվի, այն նախատեսվել է միայն նրանց վախեցնելու համար: Ինչպե՞ս կարող էին նրանք մեռնել: Մի՞թե իրենք չեն կերել կյանքի ծառից: Աստված ձգտում է ետ պահել նրանց զարգացման ավելի գերազանց աստիճանի և ավելի մեծ երջանկության հասնելուց: {ԱՄՋ 36.3}

Ահա թե ինչպես է գործել սատանան Ադամի օրերից մինչև այժմ, և դա նրան մեծապես հաջողվել է: Նա մարդկանց դրդում է չհավատալ Աստծո սիրուն և կասկածել Նրա իմաստությանը: Նա անդադար փորձում է անհարգալից հետաքրքրասիրության ոգի արթնացնել՝ անհանգիստ, քննախույզ մի ցանկություն՝ ներթափանցելու աստվածային իմաստության և զորության գաղտնիքների մեջ: Փորձելով պարզել այն խորհուրդները, որոնք Աստված նպատակահարմար է գտել թաքցնել, հազարավորներն անտեսում են այն ճշմարտությունները, որ Նա արդեն հայտնել է և որոնք էական են փրկության համար: Գայթակղելով մարդկանց՝ սատանան մղում է նրանց անհնազանդության՝ դրդելով հավատալ, թե իրենք գիտության մի հրաշալի ասպարեզ են մտնում: Այս ամենը, սակայն, մոլորություն է: Խանդավառված զարգացման իրենց գաղափարներով՝ նրանք, ոտնահարելով Աստծո պահանջները, բռնում են այն ուղին, որը տանում է դեպի այլասերում և մահ: {ԱՄՋ 37.1}

Սատանան սուրբ զույգին ներշնչեց, որ խախտելով Աստծո օրենքը՝ նրանք միայն կշահեն: Մի՞թե այսօր էլ նույնը չենք լսում: Շատերը խոսում են նրանց հետամնացության մասին, ովքեր հնազանդվում են Աստծո պատվիրաններին, միաժամանակ պնդելով, թե իրենք ավելի լայն մտահորիզոն ունեն և վայելում են ավելի մեծ ազատություն: Ուրեմն ի՞նչ է սա, եթե ոչ Եդեմում լսված այս ձայնի արձագանքը՝ «Այն օրը, որ դրանից ուտեք», այսինքն՝ ոտնահարեք աստվածային պատվիրանը, «Աստծո պես կլինեք»: Սատանան հավաստիացրեց, որ մեծ բարիք է ստացել՝ ճաշակելով արգելված պտուղը, սակայն ցույց չտվեց, որ իր անօրենության պատճառով վտարվել է երկնքից: Թեև արդեն գիտեր, որ մեղքի արդյունքը հավիտենական կորուստ է, նա, այնուամենայնիվ, իր թշվառությունը թաքցրեց, որպեսզի մյուսներին էլ գցի նույն վիճակի մեջ: Հիմա էլ, նույն ձևով, մեղսագործ մարդը ձգտում է թաքցնել իր իսկական էությունը: Նա կարող է հավակնել, որ սուրբ է, և այդ վեհ հավակնությունը նրան, որպես խաբեբայի, միայն ավելի վտանգավոր է դարձնում: Ոտնահարելով Աստծո օրենքը և դրդելով մյուսներին էլ նույնն անել իրենց անձերի կորստյան համար՝ նա կատարում է սատանայի կամքը: {ԱՄՋ 37.2}

Եվան անկեղծորեն հավատաց սատանայի խաբեությանը, բայց այդ հավատը չփրկեց նրան մեղքի պատժից: Նա չհավատաց Աստծո խոսքերին և արդյունքում՝ մեղանչեց: Դատաստանի ժամանակ մարդիկ դատապարտվելու են ոչ թե նրա համար, որ անկեղծորեն հավատացել են ստին, այլ՝ որ չեն հավատացել ճշմարտությանը և մերժել են այն իմանալու հնարավորությունը: Չնայած սատանայի իմաստախոսությանը՝ Աստծուն չհնազանդվելը միշտ էլ կործանարար է: Մենք պետք է սրտանց փափագենք իմանալ ճշմարտությունը: Աստծո խոսքի բոլոր դասերը մեզ նախազգուշացնելու և խրատելու համար են: Դրանք տրված են մոլորությունից մեզ ետ պահելու համար: Մերժելով դրանք՝ մենք կդատապարտվենք կորստյան: Կարող ենք համոզված լինել, որ այն ամենն, ինչ հակասում է Աստծո խոսքին, սատանայից է: {ԱՄՋ 38.1}

Պոկելով արգելված ծառի պտուղը՝ օձը դրեց այն կիսով չափ դժկամ Եվայի ձեռքերի մեջ: Հետո հիշեցրեց նրան իր իսկ խոսքերը, որ Աստված արգելել է նրանց դիպչել դրան, որպեսզի չմեռնեն: Պտուղն ուտելը նույնքան անվնաս է, հայտարարեց նա, որքան՝ դրան դիպչելը: Չզգալով իր արածի չար հետևանքները՝ Եվան ավելի համարձակ դարձավ: Երբ «կինը տեսավ, որ ծառը լավ էր ուտելու համար, հաճելի էր աչքերին և փափագելի՝ իմաստություն տալու համար, առավ դրա պտղից և կերավ» (Ծննդոց 3.6, աԱգլ. թարգմ.): Պտուղը հիանալի համ ուներ, և ուտելով այն՝ կինն ասես կենդանացնող զորություն զգաց և պատկերացրեց, թե հայտնվում է գոյության ավելի բարձր վիճակում: Առանց երկյուղի՝ նա քաղեց և կերավ: Եվ հիմա, դառնալով օրինազանց, նա սատանայի գործիքը դարձավ իր ամուսնուն կործանելու մեջ: Հայտնված տարօրինակ և անբնականորեն գրգռված վիճակում՝ նա, ձեռքերը լի արգելված պտուղներով, որոնեց նրան և պատմեց ամբողջ պատահածը: {ԱՄՋ 38.2}

Ադամի դեմքին տխրություն իջավ: Նա զարմացած ու տագնապած էր երևում: Եվայի խոսքերին նա պատասխանեց, որ դա, հավանաբար, այն թշնամին է եղել, որի մասին իրենց զգուշացրել էին, և աստվածային դատավճռի համաձայն՝ կինը պետք է մեռնի: Ի պատասխան՝ Եվան համոզեց նրան ուտել՝ կրկնելով օձի այն խոսքերը, որ իրենք բնավ չեն մեռնի: Նա փաստարկեց, թե դա պետք է որ ճիշտ լինի, քանի որ ինքն Աստծո կողմից դժգոհության ոչ մի վկայություն չի տեսել, այլ, ընդհակառակը, զգացել է հաճելի, աշխուժացնող մի ազդեցություն, որն ասես նոր կյանք է տվել ամեն մի ունակությանը, այնպիսի կյանք, ինչպիսին, նրան թվում էր, ունեն երկնային հրեշտակները: {ԱՄՋ 38.3}

Ադամը հասկացավ, որ իր ընկերուհին խախտել է Աստծո հրամանը՝ հաշվի չառնելով այն միակ արգելքը, որ դրված էր իրենց սերն ու հավատարմությունը փորձելու համար: Նրա մտքում սարսափելի պայքար սկսվեց: Նա ողրաց, որ թույլ էր տվել Եվային՝ հեռանալ իր կողքից: Սակայն հիմա արդեն ուշ էր, նա պետք է քաժանվեր նրանից, ում մտերմությունն իր ուրախությունն էր: Բայց ինչպե՞ս կարող էր այդ անել: Ադամը վայելել էր Աստծո և սուրբ հրեշտակների ընկերակցությունը: Նա տեսել էր Արարչի փառքը: Նա հասկացել էր այն վսեմ ապագան, որին կհասներ մարդկային ցեղը, եթե հավատարիմ մնար Աստծուն: Սակայն այդ քոլոր օրհնությունները մոռացության տրվեցին, և նա վախեցավ կորցնել այն մեկ պարգևը, որն իր աչքին քոլոր մյուսներից ավելի թանկ էր: Սերը, երախտագիտությունն ու հավատարմությունն առ Աստված՝ այս ամենը զոհաքերվեց հանուն սիրո Եվայի հանդեպ: Նա իր էության մի մասն էր, և քաժանման միտքն անտանելի էր նրա համար: Նա չգիտակցեց, որ այն նույն Անսահման Զորությունը, ով հողի փոշուց ստեղծել էր իրեն՝ մի կենդանի, գեղեցիկ էակի, և մեծ սիրով իրեն մի ընկերուհի էր տվել, կարող էր մի ուրիշ կին ստեղծել Եվայի փոխարեն: Նա որոշեց կիսել կնոջ ճակատագիրը. եթե նա մեռնելու է, ինքն էլ կմեռնի նրա հետ: Եվ վերջապես, մտածեց նա, գուցե ճիշտ լինեն իմաստուն օձի խոսքերը: Եվան նրա առջև էր՝ նույնքան գեղեցիկ և առերևույթ անմեղ, որքան մինչև այդ խախտումը: Նա ավելի մեծ սեր էր տածում իր հանդեպ, քան առաջ: Մահվան ոչ մի հետք չէր երևում կնոջ վրա, և ինքն էլ որոշեց արհամարհել հետևանքները: Նա արագորեն վերցրեց պտուղը և անմիջապես կերավ: {ԱՄՋ 39.1}

Անօրենություն գործելուց հետո Ադամին սկզբում թվաց, թե մտնում է գոյության մի ավելի քարձր ասպարեզ, քայց շուտով մեղքի գիտակցումը սարսափով լցրեց նրան: Օդը, որ մինչ այդ մեղմ և անփոփոխ ջերմություն ուներ, հիմա կարծես մրսեցրեց հանցավոր զույգին: Սերն ու խաղաղությունը չքացել էին նրանց սրտերից, իսկ փոխարենը նրանք զգում էին խղճի խայթոց, ապագայի հանդեպ սարսափ և հոգու դատարկություն: Նրանց պարուրող լուսեղեն հանդերձն այժմ անհետացել էր, և դրա փոխարեն նրանք փորձեցին իրենց համար ծածկոցներ շինել, որովհետև չէին կարող մերկ վիճակում հայտնվել Արարչի և սուրբ հրեշտակների աչքին: {ԱՄՋ 39.2}

Միայն հիմա նրանք սկսեցին հասկանալ իրենց մեղքի իսկական էությունը: Ադամը նախատեց իր ընկերուհուն այն խենթության համար, որ հեռացել էր իր կողքից և թույլ տվել օձին՝ խաբել իրեն: Նրանք երկուսն էլ հույս էին տածում, թե Նա, ով իրենց այնքան շատ վկայություններ էր տվել Իր սիրո մասին, կների այս մեկ անօրենությունը կամ էլ չի ենթարկի այդքան սոսկալի պատժի, որից խիստ վախենում էին: {ԱՄՋ 40.1}

Սատանան ցնծում էր իր հաջողությունից: Նա գայթակղել էր կնոջը՝ չվստահելու Աստծո սիրուն, կասկածելու Նրա իմաստությանը և խախտելու Նրա օրենքը, իսկ նրա միջոցով էլ մեղքի մեջ էր գցել Ադամին: {ԱՄՋ 40.2}

Բայց մեծ Օրենսդիրը քիչ հետո Ադամին ու Եվային իմացնում է իրենց անօրենության հետևանքները: Ահա աստվածային ներկայությունը հայտնվում է պարտեզում: Իրենց անմեղության ու սրբության մեջ նրանք ցնծությամբ էին ողջունում Արարչին, բայց հիմա սարսափահար փախան և փորձեցին թաքնվել այգու ամենախուլ անկյուններում: Բայց «Աստված կանչեց Ադամին և ասաց նրան. Ու՞ր ես. Եվ նա ասաց. Ձայնը լսեցի պարտեզում և վախեցա, որովհետև մերկ էի, և թաքնվեցի: Եվ ասաց. Ո՞վ պատմեց քեզ, թե դու մերկ ես, արդյո՞ք այն ծառից, որի համար քեզ պատվիրեցի, որ նրանից չուտես, կերար»: {ԱՄՋ 40.3}

Ադամը չկարողացավ ոչ մերժել և ոչ էլ արդարացնել իր մեղքը, բայց զղջալու փոխարեն՝ փորձեց մեղքը գցել իր կնոջ և, հետևապես, հենց Աստծո վրա: «Այն կինը, որին տվիր՝ ինձ հետ լինելու, նա տվեց ինձ այն ծառից, և ես կերա»: Նա, ով, կուրացած Եվայի սիրուց, գիտակցաբար նախընտրեց զրկվել Աստծո բարեհաճությունից, իր դրախտային տնից և հավիտենական երջանիկ կյանքից, կարողացավ հիմա՝ մեղանչելուց հետո, իր անօրենության պատասխանատվությունը գցել իր ընկերուհու և, նույնիսկ, հենց Արարչի վրա: Այդքան սոսկալի է մեղքի զորությունը: {ԱՄՋ 40.4}

Երբ կնոջը հարց տրվեց՝ «Այդ ի՞նչ ես արել», նա պատասխանեց. «Օձն ինձ խաբեց, և ես կերա»: «Ինչու՞ դու ստեղծեցիր օձին: Ինչու՞ թույլ տվիր նրան մտնելու Եդեմ», ահա այս հարցերն էր ակնարկում նա՝ արդարացնելով իր մեղքը: Այդպես նա էլ, Ադամի պես, իրենց մեղանչման պատասխանատվությունը գցեց Աստծո վրա: Սեր նախածնողները, հենց որ տրվեցին սատանայի ազդեցությանը, փայփայեցին ինքնարդարացման ոգին, որը ծնվել էր ստության հոր մեջ, և մինչև այժմ էլ դրսևորվում է Ադամի բոլոր որդիների և դուստրերի կյանքում: Իրենց մեղքերը խոնարհությամբ խոստովանելու փոխարեն՝ նրանք փորձում են իրենց պաշտպանել՝ մեղքը գցելով ուրիշների, հանգամանքների կամ Աստծո վրա՝ Նրա դեմ տրտնջալու պատճառ դարձնելով անգամ Նրա տված օրհնությունները: {ԱՄՋ 40.5}

Եվ ապա Տերը կայացրեց օձի դատավճիռը. «Որովհետև արեցիր այս, դու անիծյալ լինես բոլոր անասուններից և դաշտի բոլոր կենդանիներից, փորիդ վրա

գնաս և հող ուտես կյանքիդ բոլոր օրերում»: Այն պահից ի վեր, երբ օգտագործվեց որպես սատանայի միջնորդ, օձը պիտի կրեր աստվածային դատավճիռը: Դաշտի կենդանիներից ամենագեղեցիկն ու հիանալին պետք է դառնար դրանցից ամենաստորաքարշն ու զզվելին՝ զարհուրելի և ատելի ինչպես մարդկանց, այնպես էլ գազանների համար: Այն խոսքերը, որ ասվեցին օձին դիմելուց անմիջապես հետո, վերաբերում էին անձամբ սատանային՝ ցույց տալով ապագայում նրա վերջնական պարտությունն ու կործանումը: «Ես թշնամություն եմ դնում քո և կնոջ մեջտեղը, քո սերնդի և նրա սերնդի մեջտեղը. նա քո գլուխը կջախջախի, իսկ դու նրա գարշապարը կխայթես»: {ԱՄՋ 41.1}

Եվային ասվեց, որ այսուհետև վիշտն ու ցավը կլինեն նրա բաժինը: Եվ Տերն ասաց. «Դեպի քո մարդը լինի քո փափագը, և նա իշխի քեզ վրա»: Աստված կնոջն Ադամին հավասար էր ստեղծել: Եթե նրանք հավատարիմ մնային Աստծուն՝ ներդաշնակ Նրա սիրո մեծ օրենքին, ապա ընդմիշտ միաբան կլինեին իրար հետ, բայց մեղքը տարաձայնություն մտցրեց, և հիմա նրանց միությունն ու համաձայնությունը կարող էին պահպանվել միայն մեկի կամ մյուսի ենթակայությամբ: Եվան առաջինն էր մեղանչել: Նա, հակառակ աստվածային նախազգուշացման, հեռացել էր ամուսնու կողքից՝ ընկնելով փորձության մեջ: Նրա միջնորդությամբ է, որ Ադամը մեղանչեց, և հիմա կինը պիտի ենթարկվեր իր ամուսնուն: Եթե ընկած մարդկային ցեղն ընդուներ Աստծո օրենքի սկզբունքները, այս վճիռը, որ թեև չարաշահվելու էր մեղքի հետևանքով, օրհնություն կլիներ նրանց համար, բայց տղամարդկանց տրված այս գերազանցությունը շատ հաճախ դառնացնում ու ծանր բեռ է դարձնում բազմաթիվ կանանց կյանքը: {ԱՄՋ 41.2}

Եվան դրախտային իր տանը կատարելապես երջանիկ էր իր ամուսնու կողքին, բայց, ներկայիս անհանգիստ եվաների պես, հույս փայփայեց գոյության ավելի բարձր մակարդակի հասնել, քան այն, որ Աստված էր նախատեսել նրա համար: Ջանալով վեր բարձրանալ իր սկզբնական դիրքից՝ նա դրանից շատ ավելի ցած ընկավ: Նույնն էլ սպասվում է բոլոր նրանց, ովքեր չեն կամենում սիրով կրել իրենց կյանքի բեռը՝ Աստծո ծրագրի համաձայն: Ձգտելով հասնել այնպիսի բարձունքների, որոնք Աստված հարմար չի գտել մատչելի դարձնել նրանց համար, շատերն ազատ են թողնում այն տեղը, որտեղ իրենք կարող էին օրհնություն լինել: Ավելի բարձր դիրք զբաղեցնելու ցանկությունը շատերին դրդել է զոհաբերել իրենց կանացի արժանապատվությունն ու բնավորության ազնվությունը՝ անավարտ թողնելով այն աշխատանքը, որ Երկինքը հանձնարարել է նրանց: {ԱՄՋ 41.3}

Տերն Ադամին ասաց. «Որովհետև դու լսեցիր քո կնոջ խոսքը և կերար այն ծառից, որի համար պատվիրեցի քեզ, ասելով՝ դրանից չուտես, անիծյալ լինի երկիրը քո պատճառով, նեղությունով ուտես դրանից կյանքիդ բոլոր օրերում, այն փուշ ու տատասկ բուսցնի քեզ համար, և դաշտի խոտն ուտես: Երեսիդ քրտինքով հաց

ուտես, մինչև որ ետ դառնաս դեպի երկիրը, որովհետև դրանից առնվեցիր. նրա համար, որ հող էիր դու, և դեպի հողը դառնաս»: {ԱՄՋ 42.1}

Աստծո կամքը չէր, որ անմեղ զույգը որևէ բան իմանար չարի մասին: Նա բարին է ազատ առաջարկել նրանց՝ թաքցնելով չարը: Բայց, հակառակ Նրա հրամանի, նրանք կերան արգելված ծառից, և արդեն պիտի շարունակեին ուտել, պիտի ճանաչեին չարն իրենց կյանքի բոլոր օրերում: Այդ պահից ի վեր մարդկային ցեղը պիտի տառապեր սատանայի փորձություններից: Նրանց պիտի բաժին հասնեին դժվարություններն ու չարքաշ աշխատանքը այն երջանիկ աշխատանքի փոխարեն, որ մինչ այդ ունեին: Նրանց սպասվում էր հիասթափություն, վիշտ ու ցավ և, ի վերջո, մահ: {ԱՄՋ 42.2}

Ընկնելով մեղքի անեծքի տակ՝ ամբողջ բնությունը մարդուն պիտի վկայեր Աստծո դեմ բարձրացված ապստամբության բնույթի ու հետևանքների մասին: Ստեղծելով մարդուն՝ Աստված նրան իշխան կարգեց երկրի և բոլոր կենդանի արարածների վրա: Քանի դեռ Ադամը հավատարիմ էր Երկնքին, ամբողջ բնությունը ենթակա էր նրան, բայց երբ նա ապստամբեց աստվածային օրենքի դեմ, ստորադաս արարածները դադարեցին հնազանդվել նրա իշխանությանը: Այդպես Տերն Իր մեծ գթասրտությամբ մարդկանց կամեցավ ցույց տալ Իր օրենքի սրբությունը և օգնել նրանց իրենց սեփական փորձով հասկանալու օրենքի ոտնահարման վտանգը, որքան էլ չնչին թվա այն: {ԱՄՋ 42.3}

Եվ չարքաշ ու հոգսերով լի կյանքը, որ այսուհետև պետք է մարդու բաժինը լիներ, օրհնություն էր՝ տրված նրան սիրով: Դա մի ուղղիչ պատժամիջոց էր՝ խիստ անհրաժեշտ մեղքի պայմաններում, նախատեսված ախորժակն ու կրքերը սանձահարելու և ինքնատիրապետման սովորություն ձևավորելու համար: Դա Աստծո մեծ ծրագրի մի մասն էր՝ մեղքի քայքայումից ու կործանումից մարդուն վերականգնելու համար: {ԱՄՋ 42.4}

Մեր նախածնողներին տրված նախազգուշացումը՝ «Դրանից կերածդ օրը մահով պիտի մեռնես»(Ծննդոց 2.17), նկատի չուներ, որ նրանք պետք է մեռնեին հենց այն օրը, երբ ճաշակեցին արգելված պտուղը: Բայց հենց այդ օրը պիտի կայացվեր անդառնալի դատավճիռը: Անմահությունը նրանց խոստացված էր միայն հնազանդության պայմանով, իսկ այն խախտելու դեպքում՝ նրանք պետք է զրկվեին հավիտենական կյանքից: Այդ նույն օրը նրանք կդատապարտվեին մահվան: {ԱՄՋ 43.1}

Իր հավերժական գոյությունը պահպանելու համար մարդը շարունակ պետք է օգտվեր կենաց ծառի պտուղներից: Հակառակ դեպքում նրա կենսունակությունը պիտի աստիճանաբար նվազեր, մինչև որ կյանքը վերջապես հանգչեր նրանում: Սատանայի մրագիրն էր, որ Ադամն ու Եվան անհնազանդության պատճառով արժանանային Աստծո դժգո- հությանը, և ապա, եթե ներում չստանային Նրանից,

նա հուսով էր, որ նրանք կուտեն կյանքի ծառից, և այդպիսով մեղքի ու դժբախտության գոյությունը կհավերժացվի: Բայց մարդու մեղանչումից անմիջապես հետո սուրբ հրեշտակներին կարգադրվեց պահպանել կյանքի ծառը: Այս հրեշտակների շուրջ լույսի ճառագայթներ էին փայլատակում, որոնք բոցեղեն սրերի տեսք ունեին: Ադամի ընտանիքից և ոչ մեկին թույլ չի տրվել անցնել սահմանը և ուտել կենսատու ծառի պտղից, հետևաբար անմահ մեղավոր գոյություն չունի: {ԱՄՋ 43.2}

Այն անեծքը, որին ենթարկվեցին մեր նախածնողներն իրենց անօրենության հետևանքով, շատերին չափազանց սարսափելի պատիժ է թվում՝ այդքան չնչին մեղքի համար, և նրանք կասկածի են ենթարկում մարդու հետ այդպես վարվելու Աստծո իմաստությունն ու արդարությունը: Բայց եթե նրանք ավելի խորը քննեին այս հարցը, ապա կարող էին նկատել իրենց սխալը: Աստված ստեղծել էր մարդուն Իր իսկ պատկերով՝ ազատ ամեն մի մեղքից: Երկիրը պետք է բնակեցվեր այնպիսի էակներով, որոնք մի փոքր էին ցածր հրեշտակներից, բայց նրանց հնազանդությունը պիտի փորձվեր, քանի որ Աստված թույլ չէր տա, որ աշխարհը լցվեր նրանցով, ովքեր կանարգեին Իր օրենքը: Սակայն Իր մեծ գթասրտությամբ՝ Նա Ադամին խիստ փորձության չենթարկեց: Եվ հենց արգելքի փոքրությունն է, որ չափազանց մեծ դարձրեց մեղքը: Եթե Ադամը չդիմացավ ամենափոքր փորձությանը, չէր կարող ընդդիմանալ նաև ավելի մեծին, եթե նրանից ավելի բարձր պատասխանատվություն պահանջվեր: {ԱՄՋ 43.3}

Եթե Ադամն ավելի ծանր փորձության ենթարկվեր, ապա նրանք, ովքեր չար հակումներ ունեն, կարդարացնեին իրենց՝ ասելով. «Սա չնչին բան է, Աստված ուշադրություն չի դարձնում նման մանրուքների վրա»: Եվ անընդհատ խախտումներ կլինեին այն հարցերում, որոնք փոքր են թվում և չեն դատապարտվում մարդկանցից: Բայց Տերն ակնհայտ դարձրեց, որ մեղքի ամենաչնչին դրսևորումն անգամ վիրավորական է Իրեն: {ԱՄՋ 44.1}

Եվայի աչքին աննշան բան թվաց անհնազանդությունն Աստծուն, երբ նա ճաշակեց արգելված պտուղը և գայթակղեց իր ամուսնուն՝ նույնպես մեղք գործելու, մինչդեռ նրանց մեղքը վշտի հեղեղ բերեց ամբողջ աշխարհին: Ո՞վ կարող է փորձության պահին իմանալ այն սոսկալի հետևանքները, որոնց կհանգեցնի միակ սխալ քայլը: {ԱՄՋ 44.2}

Նրանցից շատերն, ովքեր սովորեցնում են, թե մարդը պարտավոր չէ պահել Աստծո օրենքը, պնդում են, որ անհնար է հնազանդվել դրա պահանջներին: Բայց եթե դա ճիշտ լիներ, էլ ինչո՞ւ Ադամը կրեց մեղքի պատիժը: Մեր նախածնողների մեղքը հանցանքով ու տառապանքով լցրեց ողջ երկիրը, և եթե չլիներ Աստծո գթասրտությունն ու բարությունը, մարդկային ցեղը կընկներ հուսահատության մեջ: Ոմն ոչ ոք չխաբի իրեն: «Մեղքի վարձքը մահն է» (Հռոմեացիս 6.23): Այսօր նույնքան

անհնար է առանց պատիժ կրելու ոտնահարել Աստծո օրենքը, որքան այն ժամանակ, երբ կայացվեց մարդկության նախահոր դատավճիռը: {ԱՄՋ 44.3}

Սեղանչելուց հետո Ադամն ու Եվան այլևս չպետք է բնակվեին Եդեմում: Նրանք թախանձագին խնդրեցին, որ մնան անմեղության ու բերկրանքի իրենց տանը: Նրանք խոստովանեցին, որ կորցրել են այդ երջանիկ բնակավայրում ապրելու բոլոր իրավունքները, բայց խոստացան այսուհետև խստորեն հնազանդվել Աստծուն: Սակայն նրանց ասվեց, որ նրանց էությունն արդեն ապականված է մեղքով, որ չարին դիմակայելու նրանց ուժը թուլացել է, և ճանապարհ է բացվել սատանայի համար դեպի իրենց սրտերը: Իրենց անմեղության մեջ նրանք տրվել էին փորձությանը, և հիմա, մեղավոր վիճակում, ավելի քիչ ուժ կունենային պահպանելու իրենց մաքրությունը: {ԱՄՋ 44.4}

Աննկարագրելի տխրությամբ ու վշտով նրանք հրաժեշտ տվին իրենց սքանչելի տանը և գնացին ապրելու մի երկրում, որն ընկած էր մեղքի անեծքի տակ: Մթնոլորտը, որ մի ժամանակ մեղմ ու կայուն ջերմություն էր ապահովում, հիմա արդեն նկատելիորեն փոխվել էր, և Տերը ողորմածաբար կաշվե հանդերձներ պատրաստեց նրանց հա — մար, որպեսզի նրանք պաշտպանվեն արևի կիզիչ ճառագայթներից և ցրտից: {ԱՄՋ 44.5}

Թառամող ծաղկի և վայր ընկնող տերևի մեջ տեսնելով ապականության առաջին նշանները՝ Ադամն ու նրա ընկերուհին ավելի դառնագին ողբացին, քան մարդիկ այսօր ողբում են իրենց մեռածների վրա: Քնքուշ ու նրբագեղ ծաղիկների մահն իրոք թախծոտ տեսարան էր, բայց երբ վեհաշուք ծառերից տերևներն սկսեցին թափվել, նրանք հստակ գիտակցեցին այն փաստը, որ ամեն մի կենդանի էակի վախճանը մահն է: {ԱՄՋ 45.1}

Եդեմի պարտեզը մարդու վտարվելուց հետո դեռ երկար ժամանակ մնաց երկրի վրա: Ընկած ցեղին թույլ տրվեց դեռ շատ տարիներ նայել իրենց անմեղության տանը, որի մուտքը հսկում էին պահապան հրեշտակները: Դրախտի դարպասների մոտ, որտեղ մշտարթուն հսկում էին քերովբեները, հայտնվում էր Աստծո փառքը: Ադամն իր որդիների հետ այստեղ էր գալիս երկրպագելու Աստծուն: Այստեղ նրանք նորոգում էին հնազանդության իրենց խոստումն այն օրենքին, որի խախտման հետևանքով վտարվել էին Եդեմից: Երբ անօրենությունը տարածվեց ամբողջ երկրով մեկ, և մարդկությունն իր ամբարշտության համար պիտի կործանվեր ջրհեղեղով, Նրա ձեռքը, ով տնկել էր Եդեմը, վերցրեց այն երկրից: Բայց երբ ամեն բան վերջնականապես վերականգնվի, երբ ստեղծվի «նոր երկինք և նոր երկիր» (Հայտնություն 21.1), դրախտն էլ ավելի փառավոր և հիասքանչ տեսք կունենա, քան սկզբում էր: {ԱՄՋ 45.2}

Այն ժամանակ նրանք, ովքեր պահել են Աստծո պատվիրանները, անմահություն ու առույգություն կվայելեն կյանքի ծառի տակ, և անվերջանալի դարերի ընթացքում

անմեղ աշխարհների բնակիչները, ազատ մեղքի անեծքից, այդ հրաշք պարտեզի մեջ կտեսնեն Աստծո ստեղծագործական աշխատանքի կատարյալ օրինակը, մի նմուշ, որպիսին կդառնար մեր ամբողջ երկիրը, եթե միայն մարդն իրականացներ Արարչի փառավոր ծրագիրը: {ԱՄՋ 45.3}

Գլուխ 5 - Փրկության ծրագիրը

Մարդու անկումը վշտով լցրեց ողջ երկինքը: Աշխարհը, որ Աստված ստեղծել էր, ընկավ մեղքի անեծքի տակ, և նրա բնակիչները դատապարտվեցին թշվառության ու մահվան: Թվում էր, թե ոչ մի ելք չկա նրանց համար, ովքեր խախտել էին օրենքը: Հրեշտակները դադարեցին երգել իրենց օրհներգերը: Երկնային ապարանքներում սկսեցին ողբալ մեղքի գործած ավերածության համար: {ԱՄՋ 46.1}

Աստծո Որդին՝ երկնքի փառավոր Հրամանատարը, խղճահարությամբ լցվեց ընկած ցեղի հանդեպ: Նրա սիրտը կսկծաց անսահման կարեկցանքից, երբ կորուսյալ աշխարհի աղաղակը հասավ մինչև երկինք: Բայց աստվածային սերը մի ծրագիր էր նախատեսել, որով մարդը կարող էր փրկվել: Աստծո խախտված օրենքը պահանջում էր մեղավորի մահը: Ամբողջ տիեզերքում կար միայն Սեկը, ով կարող էր հանուն մարդու բավարարել դրա պահանջները: Քանի որ աստվածային օրենքը նույնքան սրբազան է, որքան Ինքն Աստված, ուստի միայն Նա, ով հավասար է Աստծուն, կարող էր քավել օրենքի խախտումը: Քրիստոսից բացի ուրիշ ոչ ոք չէր կարող փրկագնել ընկած մարդուն օրենքի անեծքից և նրան կրկին ներդաշնակության բերել երկնքի հետ: Քրիստոսն Իր վրա պետք է վերցներ մեղքի հանցանքն ու ամոթը, մեղքի, որն այնքան զազրելի է սուրբ Աստծո համար, որը պետք է բաժանի Հորն Իր Որդուց: Քրիստոսը պետք է իջներ թշվառության անդունդը՝ կորած ցեղին փրկելու համար: {ԱՄՋ 46.2}

Երբ Նա մտավ Հոր մոտ բարեխոսելու մարդու համար, երկնքի ողջ զորքը սպասում էր դրա արդյունքին այնպիսի լարված հետաքրքրությամբ, որ բառերով անհնար է արտահայտել: Երկարատև էր առեղծվածային այդ բանակցությունը՝ «խաղաղության խորհուրդը» (Զաքա- րիա 6.13), մարդկանց ընկած որդիների համար: Փրկության ծրագիրը կար դեռևս մինչև երկրի ստեղծագործությունը, քանի որ Քրիստոսը Գառ է՝ «աշխարհի սկզբից հետո մորթված» (Հայտնություն 13.8), սակայն տիեզերքի Թագավորն առանց պայքարի չէ, որ համաձայնվեց տալ Իր Որդուն՝ մեռնելու հանցավոր ցեղի համար: Բայց «Աստ — ված այնպես սիրեց աշխարհը, որ իր միածին Որդին տվեց, որպեսզի ամեն նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհաննես 3.16): Օ՛ փրկության խորհուրդ, աստվածային սերը մի աշխարհի հանդեպ, որը չսիրեց Նրան: Ո՞վ կարող է իմանալ այն սիրո խորությունը, որ «ամեն գիտությունից գերազանց է»: Անվերջանալի դարերի ընթացքում անմահ էակները, փորձելով ըմբռնել այդ անմատչելի սիրո գաղտնիքը, պիտի հիանան ու զմայլվեն: {ԱՄՋ 46.3}

Աստված պիտի հայտնվեր Քրիստոսում, «որ աշխարհը հաշտեց ներ իր հետ» (Բ Կորնթացիս 5.19): Մարդն այնպես էր այլասերվել մեղքից, որ նրա համար անհնար էր սեփական ուժերով կրկին ներդաշ նակվել Նրա հետ, ում էությունը սրբություն և բարություն է: Բայց Քրիստոսը, փրկելով մարդուն օրենքի պատժից, կարող էր աստվածային զորություն շնորհել նրան՝ ի օգնություն մարդկային ջանքերի:

Այդպես, ապաշխարելով ու դարձի գալով առ Աստված և հավատալով Քրիստոսին՝ Ադամի ընկած զավակները կարող են նորից դառնալ «Աստծո որդիներ» (Ա Հովհաննես 3.2): {ԱՄՋ 47.1}

Այն ծրագիրը, որով միայն կարող էր ապահովվել մարդու փրկությունը, ողջ երկնքի ուշադրությունը հրավիրեց Նրա անպատմելի զոհաբերության վրա: Հրեշտակները դադարեցին ուրախանալ, երբ Քրիստոսը հայտնեց նրանց փրկության ծրագիրը, քանի որ մարդու փրկությունը պիտի իրագործվեր իրենց սիրելի Հրամանատարի անպատմելի տառապանքների գնով: Նրանք զարմանքով ու ցավով լսեցին Նրա այն խոսքերը, թե ինչպես Ինքը պետք է թողնի երկնքի մաքրությունը, խաղաղությունը, ուրախությունը, փառքն ու անմահությունը և ապրի ապականված երկրում՝ կրելով վիշտ, անարգանք և մահ: Նա Ինքը պետք է մեղավորի փոխարեն կրի մեղքի պատիժը, և չնայած դրան՝ քչերն են ընդունելու Նրան որպես Աստծո Որդի: Նա պետք է թողնի Իր բարձր դիրքը որպես երկնքի Վեհափառ, որպեսզի իջնի երկիր և, մարդու կերպարանք առնելով, խոնարհեցնի Իրեն և Իր անձնական փորձով ծանոթանա այն վշտերին ու փորձություններին, որոնց պիտի ենթարկվեր մարդը: Այս ամենն անհրաժեշտ էր նրա համար, որ Նա կարողանար օգնել փորձվողներին (Եբրայեցիս 2.18): Երբ Նրա ուսուցչական առաքելությունն ավարտվեր, Նա պիտի մատնվեր ամբարիշտ մարդկանց ձեռքը, որոնք սատանայի ներշնչմամբ Նրան ենթարկելու էին ամեն տեսակ վիրավորանքների ու տանջանքների: Նա պետք է մեռներ ամենասոսկալի մահով՝ կախված երկնքի ու երկրի միջև որպես ոճրագործ: Նա երկար ժամեր պիտի անցկացներ այնպիսի սոսկալի հոգեվարքի մեջ, որ հրեշտակներն անկարող էին լինելու նայել ղրան՝ շրջելով իրենց երեսներն այդ տեսարանից: Նա պետք է հոգեկան աննկարագրելի տառապանք կրեր՝ զգալով, թե ինչպես է Հայրը երես թեքում Իրենից, երբ անօրենության պատիժը՝ ողջ աշխարհի մեղքերի ծանրությունը, բարդվեր Իր վրա: {ԱՄՋ 47.2}

Ընկնելով իրենց Հրամանատարի ոտները՝ հրեշտակներն առաջարկեցին իրենց կյանքը՝ որպես զոհ մարդու փրկության համար: Բայց հրեշտակի կյանքը չէր կարող վճարել փրկագինը, միայն Նա կարող էր փրկել մարդուն, ով ստեղծել էր նրան: Սակայն հրեշտակները պետք է մասնակցություն ունենային փրկության ծրագրում: Քրիստոսը պետք է «հրեշտակներից մի քիչ ցածրանար... մահվան չարչարանքի համար» (Եբրայեցիս 2.9): Իր վրա առնելով մարդկային բնություն՝ Նա ուժով ավելի թույլ կլինի նրանցից, և նրանք պետք է ծառայեն Նրան, մխիթարեն ու զորացնեն Իր չարչարանքներում: Նրանք նաև պետք է սպասավոր հոգիներ լինեն՝ ուղարկված ծառայելու նրանց, ովքեր պիտի ժառանգեն փրկությունը (Եբրայեցիս 1.14): Նրանք պետք է շնորհն ընդունողներին պահպանեն չար հրեշտակների իշխանությունից և այն խավարից, որով սատանան անդադար շրջապատելու էր նրանց: {ԱՄՋ 48.1}

Տեսնելով իրենց Տիրոջ հոգեվարքն ու անարգանքը՝ հրեշտակները վշտով ու զայրույթով էին լցվելու՝ կամենալով ազատել Նրան Իրեն սպանողների ձեռքից, բայց նրանք չպետք է միջամտեին այն ամենին, ինչին ականատես էին լինելու: Փրկության ծրագրի մի մասն էլ այն էր, որ Քրիստոսը ենթարկվեր չարագործների ծաղրուծանակին, և Նա համաձայնվեց ղառնալ մարդու Փրկիչը, թեև գիտեր, թե ինչ է սպասվելու Իրեն: {ԱՄՋ 48.2}

Քրիստոսը հավաստիացրեց հրեշտակներին, որ Իր մահով Նա շատերին կփրկագնի և կորստյան կմատնի մահվան իշխանությունն ունեցողին: Նա կվերականգնի այն արքայությունը, որ մարդը կորցրել էր օրենքը խախտելու հետևանքով, և փրկվածները Նրա հետ միասին կժառանգեն այն ու կապրեն այնտեղ հավիտյան: Մեղքն ու մեղավորը կոչնչանան, որպեսզի այլևս երբեք չխախտեն երկնքի կամ երկրի անդորրը: Նա պատվիրեց հրեշտակների զորքին համաձայնել այն ծրագրին, որ Հայրն ընդունել էր, և ուրախանալ, որ Իր մահվան շնորհիվ ընկած մարդը կարող է հաշտվել Աստծո հետ: {ԱՄՋ 48.3}

Այդ ժամանակ ողջ երկինքը լցվեց անարտահայտելի ուրախությամբ: Փրկագնված աշխարհի փառքն ու երանությունը գերազանցում էր նույնիսկ կյանքի Իշխանի տառապանքն ու զոհաբերությունը: Ճքեղ ապարանքներով մեկ հնչեց այն երգի մեղեդին, որ պիտի զրնգար Բեթլեհեմի բլուրների վրա՝ «Փառք Աստծուն բարձունքում, երկրի վրա՝ խաղաղություն և մարդկանց մեջ՝ հաճություն» (Ղուկաս 2.14): Հիմա ավելի մեծ ցնծությամբ, քան նոր արարչության բերկրանքն էր, «առավոտյան աստղերը միասին ցնծում էին, և Աստծո բոլոր որդիները... գովաբանում էին» (Հոբ 38.7): {ԱՄՋ 48.4}

Առաջին անգամ փրկության մասին մարդը տեղեկացավ այն դատավճռից, որը կայացվեց պարտեզում՝ սատանայի վրա: Տերը հայտարարեց. «Ես թշնամություն եմ դնում քո և կնոջ մեջտեղը, քո սերնդի և նրա սերնդի մեջտեղը. նա քո գլուխը կջախջախի, իսկ դու նրա գարշապարը կխայթես» (Ծննդոց 3.15): Այս դատավճիռը, որ կայացվեց մեր նախածնողների ներկայությամբ, խոստում էր նրանց համար: Կանխագուշակելով պայքար մարդու և սատանայի միջև՝ այն միաժամանակ հռչակեց, որ հակառակորդի իշխանությունը վերջնականապես կտապալվի: Ադամն ու Եվան կանգնած էին որպես հանցագործներ արդար Դատավորի առջև՝ լսելու իրենց անօրենության դատավճիռը, բայց նախքան կլսեին չարքաշ կյանքի ու վշտի մասին, որն իրենց բաժինը պիտի լիներ, կամ որ իրենք դեպի հողը պետք է դառնային, նրանք լսեցին հուսադրող խոսքեր: Ճիշտ է, նրանք չարչարվելու էին իրենց հզոր թշնամու իշխանությունից, սակայն կարող էին հույսով նայել առաջ՝ դեպի վերջնական հաղթանակը: {ԱՄՋ 49.1}

Լսելով, որ թշնամություն պետք է լինի իր և կնոջ, իր սերնդի և կնոջ սերնդի միջև, սատանան հասկացավ, որ մարդկային բնությունն ապականելու իր աշխատանքը պետք է ընդհատվի, որ ինչ-որ կերպ մարդն ընդունակ է լինելու դիմակայել իր

իշխանությանը: Սակայն, երբ փրկության ծրագիրն ավելի պարզ բացահայտվեց, սատանան ցնծաց իր հրեշտակների հետ, որ մեղքի դրդելով մարդուն՝ կարողացավ Իր բարձր դիրքից ցած բերել Աստծո Որդուն: Նա հայտարարեց, որ իր ծրագրերը մինչև հիմա հաջողվել էին երկրում, ու երբ Քրիստոսն Իր վրա առնի մարդկային բնութունը, Նա ևս կպարտվի, և այդպես՝ ընկած ցեղի փրկությունը կխափանվի: {ԱՄՋ 49.2}

Երկնային հրեշտակները մեր առաջին ծնողներին ավելի պարզ բացատրեցին այն ծրագիրը, որ կազմվել էր նրանց փրկության համար: Ադամին ու նրա ընկերուհուն հավաստիացրին, որ չնայած իրենց մեծ մեղքին՝ նրանք չէին թողնվելու սատանայի տիրապետության տակ. Աստծո Որդին համաձայնել էր Իր կյանքի գնով քավել նրանց մեղքը: Փորձության ժամանակ էր տրվելու նրանց, և, ապաշխարելով ու հավատալով Քրիստոսին, նրանք կրկին կարող էին դառնալ Աստծո որդիներ: {ԱՄՋ 49.3}

Իրենց անօրենության համար պահանջվող զոհը Ադամին ու Եվային բացահայտեց Աստծո օրենքի սրբազան բնույթը, և նրանք, ինչպես երբեք առաջ, տեսան մեղքի հրեշավորությունն ու դրա սոսկալի հետևանքները: Տանջվելով խղճի խայթոցներից՝ նրանք աղերսեցին, որ պատիժը չընկնի Նրա վրա, ում սերն իրենց ողջ ուրախության աղբյուրն էր, ավելի լավ է՝ իրենք և իրենց հետնորդները կրեն այն: {ԱՄՋ 50.1}

Նրանց ասվեց, որ Եհովայի օրենքը Նրա կառավարության հիմքն է ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա, ուստի նույնիսկ հրեշտակի կյանքը չէր կարող ընդունվել որպես զոհ՝ մեղքի համար: Դրա պատվիրաններից և ոչ մեկը չէր կարող հայտարարվել չեղյալ կամ փոփոխվել, որպեսզի հարմարեցվեր մարդու ընկած վիճակին, բայց միայն Աստծո Որդին, ով ստեղծել էր մարդուն, կարող էր քավել նրա մեղքերը: Ինչպես Ադամի մեղքը թշվառություն և մահ բերեց, այնպես էլ Քրիստոսի զոհաբերությունը պիտի կյանք ու անմահություն պարգևի: {ԱՄՋ 50.2}

Մեղքի հետևանքով չարագործի իշխանության տակ ընկավ ոչ միայն մարդը, այլ նաև երկիրը, որը պետք է վերականգնվեր փրկության ծրագրի միջոցով: Արարչության ժամանակ Ադամն իշխան կարգվեց երկրի վրա, սակայն, տեղի տալով փորձությանը, նա ընկավ սատանայի տիրապետության տակ: «Ինչ բանով որ մեկը հաղթվի, նա դրան էլ ծառա է» (Բ Պետրոս 2.19): Երբ մարդը սատանայի գերին դարձավ, նրա տիրապետությունն անցավ հաղթողին: Այդպես սատանան դարձավ «այս աշխարհի աստվածը» (Բ Կորնթացիս 4.4): Նա զավթեց այն տերությունը, որն ի սկզբանե տրված էր Ադամին: Բայց Քրիստոսն Իր զոհաբերությամբ վճարելով մեղքի վարձը՝ ոչ միայն կփրկագնի մարդուն, այլ նաև կվերականգնի նրա կորցրած տիրապետությունը: Այն ամենն, ինչ կորցրել էր առաջին Ադամը, կվերականգնի երկրորդը: Մարգարեն ասում է. «Եվ դու, ով հոտի աշտարակ՝ Սիոնի աղջկա բլուրը, մինչև քեզ է գալու և հասնելու առաջին իշխանությունը» (Միքիա 4.8): Եվ Պողոս

առաքյալն էլ մատնացույց է անում առաջ՝ դեպի «ստացվածքի փրկությունը» (Եփեսացիս 1.14): Աստված երկիրն ստեղծել էր որպես բնակավայր սուրբ ու երջանիկ էակների համար: Տերը «կազմեց երկիրը և արարեց այն. նա չստեղծեց այն դատարկ, այլ՝ բնակվելու համար» (Եսայիա 45.18): Այդ նպատակը կիրականանա, երբ, նորոգված Աստծո զորությամբ և ազատ՝ մեղքից ու վշտից, այն կդառնա փրկվածների հավիտենական տունը: «Արդարները կժառանգեն երկիրը և հավիտյան կբնակվեն այնտեղ»: «Եվ այլևս նզովք բնավ չի լինի, այլ Աստծո և Գառան աթոռը կլինի այնտեղ, և նրա ծառաները կպաշտեն նրան» (Սաղմոս 37.29, Հայտնություն 22.3): {ԱՄՋ 50.3}

Ադամն իր անմեղության մեջ Արարչի հետ հաղորդակցվում էր դեմառդեմ, բայց մեղքը մարդուն բաժանեց Աստծուց, և միայն Քրիստոսի զոհաբերությունը կարող էր միացնել անդունդի երկու կողմերը և հնարավոր դարձնել փրկությունը կամ հաղորդակցության օրհնությունը երկնքի ու երկրի միջև: Մարդը չէր կարող ուղղակիորեն մոտենալ իր Արարչին, բայց Աստված կհաղորդակցվի նրա հետ Քրիստոսի և հրեշտակների միջոցով: {ԱՄՋ 51.1}

Այսպես՝ Ադամին բացահայտվեցին մարդկության պատմության կարևոր իրադարձություններն՝ սկսած այն պահից, երբ դրախտում կայացավ աստվածային դատավճիռը, մինչև Ջրհեղեղը և Աստծո Որդու առաջին գալուստը: Նրան ցույց տրվեց, որ թեև Քրիստոսի զոհը բավարար կլինի փրկագնելու ողջ աշխարհը, շատերն, այնուամենայնիվ, կնախընտրեն մեղավոր կյանքը, քան ապաշխարությունն ու հնազանդությունը: Հանցագործությունները կաճեն սերնդեսերունդ, և մեղքի անեծքն ավելի ու ավելի կծանրանա մարդկային ցեղի, կենդանիների ու երկրի վրա: Մարդու կյանքի տևողությունը կկրճատվի իր իսկ մեղքի պատճառով, կթուլանան նրա ֆիզիկական, բարոյական և մտավոր ուժերը, մինչև որ երկիրը կլցվի ամեն տեսակ թշվառությամբ: Հազուրդ տալով իրենց ախորժակին ու կրքերին՝ մարդիկ անընդունակ կլինեն գնահատելու փրկության մրագրի վսեմ ճշմարտությունները: Սակայն Քրիստոսը, հավատարիմ Իր նպատակին, որի համար լքել էր երկինքը, կշարունակի հոգ տանել մարդկանց մասին և կառաջարկի նրանց՝ իրենց թուլություններն ու թերությունները թաքցնել Իրենում: Նա կբավարարի բոլոր նրանց կարիքներն, ովքեր հավատով Նրա մոտ կգան: Եվ միշտ էլ կլինեն մարդիք, ովքեր գերիշխող անօրենության մեջ կպահպանեն Աստծո գիտությունը և կմնան անարատ: {ԱՄՋ 51.2}

Ջոհաբերությունները սահմանեց Աստված, որպեսզի, մշտապես հիշեցնելով մարդուն իր մեղքը, դրդի նրան ապաշխարելու և հավատալու խոստացված Փրկչին: Դրանք նախատեսված էին ընկած ցեղի մեջ տպավորելու այն հանդիսավոր ճշմարտությունը, որ մահվան պատճառը մեղքն է: Ադամի համար առաջին զոհաբերությունը խիստ ցավալի արարողություն էր: Նրա ձեռքը պիտի բարձրանար՝ խլելու կյանքը, որ միայն Աստված կարող էր տալ կամ վերցնել: Առաջին

անգամ է, որ նա տեսնելու էր մահը, և գիտեր, որ եթե հավատարիմ մնար Աստծուն, ոչ մարդիկ կմեռնեին, ոչ էլ կենդանիները: Մորթելով անմեղ զոհին՝ նա ցնցվեց այն մտքից, որ իր մեղքի պատաճառով պետք է թափվի Աստծո անբիծ Գառան արյունը: Այս տեսարանից նա ավելի խորն ու ավելի հստակ գիտակցեց իր մեղքի մեծությունը, որը, բացի Աստծո սիրելի Որդու մահից, ուրիշ ոչ մի կերպ հնարավոր չէր քավել: Եվ նա ապշեց Նրա անսահման բարության վրա, ով այդպիսի փրկագին պիտի վճարեր մեղավորին փրկելու համար: Հույսի մի շող լուսավորեց խավար ու սոսկալի ապագան՝ ցույց տալով ելքը լիակատար կործանումից: {ԱՄՋ 51.3}

Բայց փրկության ծրագիրն ավելի մեծ և խորը նպատակ ուներ, քան մարդու փրկագնումն է: Քրիստոսն աշխարհ եկավ ոչ միայն նրա համար, որ այս փոքրիկ երկրի բնակիչներն, ինչպես հարկն է, հարգեին Աստծո օրենքը, այլ որպեսզի ամբողջ տիեզերքի առջև արդարացնի Աստծո բնավորությունը: Հենց դա նկատի ուներ Քրիստոսը՝ կանխատեսելով Իր մեծ զոհաբերության ազդեցությունն ինչպես մյուս աշխարհների բնակիչների, այնպես էլ՝ մարդու վրա, երբ Իր խաչելությունից անմիջապես առաջ ասաց. «Հիմա դատաստանն է այս աշխարհի: Հիմա այս աշխարհի իշխանը դուրս կգցվի: Եվ ես, երբ որ բարձրանամ երկրից, ամենքին կքաշեմ ինձ մոտ» (Հովհաննես 12.31,32): Քրիստոսի մահը հանուն մարդու փրկության ոչ միայն ճանապարհ կբացեր մարդկանց համար դեպի երկինք, այլ նաև ողջ տիեզերքի առջև կարդարացներ Աստծո և Նրա Որդու վերաբերմունքը սատանայի ապստամբության հանդեպ: Այն կհաստատեր Աստծո օրենքի անխախտելիությունը և կբացահայտեր մեղքի բնույթն ու հետևանքները: {ԱՄՋ 52.1}

Հենց սկզբից մեծ պայքարի հիմքում ընկած է եղել Աստծո օրենքը: Սատանան փորձել էր ապացուցել, որ Աստված արդար չէ, որ Նրա օրենքն անկատար է, և որ հանուն տիեզերքի բարօրության՝ այն պետք է փոխել: Քննադատելով օրենքը՝ նա հույս ուներ վարկաբեկել Օրենսդիրի հեղինակությունը: Պայքարը պիտի բացահայտեր՝ արդյո՞ք աստվածային դրվածքները թերի են և ենթակա փոփոխության, թե՞ կատարյալ են ու անփոփոխ: {ԱՄՋ 52.2}

Վտարվելով երկնքից՝ սատանան որոշեց երկիրը դարձնել իր թագավորությունը: Գայթակղելով ու մեղքի մեջ գցելով Ադամին ու Եվային՝ նա կարծեց, թե ձեռք է բերել այս աշխարհի տիրապետությունը, «որովհետև,- ասաց նա,- նրանք իրենք են ինձ ընտրել՝ լինելու իրենց իշխանը»: Նա պնդում էր, որ անհնար է ներում շնորհել մեղավորին, ուստի ընկած մարդիկ պետք է իր օրինավոր հպատակները լինեն, իսկ աշխարհը պիտի պատկանի իրեն: Բայց Աստված տվեց Իր սիրելի {ԱՄՋ 52.3}

Որդուն՝ Նրան, ով հավասար էր Իրեն՝ կրելու անօրենության պատիժը և այդպիսով մի ճանապարհ բացեց, որով նրանք կարող էին կրկին արժանանալ Նրա բարեհաճությանը և վերադառնալ իրենց Եդեմական տունը: Քրիստոսը որոշեց

փրկագնել մարդուն և ազատել աշխարհը սատանայի ճանկերից: Մեծ պայքարը, որն սկսվել էր երկնքում, պիտի վճռվեր երկրի վրա՝ հենց այն դաշտում, որը սատանան իրենն էր համարում: {ԱՄՋ 53.1}

Ողջ տիեզերքը զարմացած էր, որ Քրիստոսը պետք է խոնարհեցնի Իրեն՝ ընկած մարդուն փրկելու համար: Այն, որ Նա, ով անցնում էր աստղից աստղ, աշխարհից աշխարհ, կառավարելով այդ բոլորը և Իր նախախնամությամբ հոգալով Իր հսկայական արարչագործության յուրաքանչյուր էակի կարիքները, համաձայն էր թողնել Իր փառքը և մարդկային բնություն հագնել, մի առեղծված էր, որ մյուս աշխարհների անմեղ բանական էակները ցանկանում էին հասկանալ: Երբ Քրիստոսը մարդկային կերպարանքով մեր երկիր իջավ, բոլորը լարված հետաքրքրությամբ հետևում էին Նրան, երբ Նա քայլ առ քայլ անցնում էր Իր արյունոտ ճամփան՝ մսուրից մինչև Գողգոթա: Երկինքը տեսավ այն անարգանքն ու ծաղրը, որ Նա կրեց, և բոլորն իմացան, որ այդ ամենը սատանան էր ներշնչում: Նրանք տեսան հակառակորդի գործակալների աշխատանքը, սատանային, որը խավար, վիշտ ու տառապանք էր բերում մարդկային ցեղին, տեսան, թե ինչպես էր Քրիստոսը հաղթում թշնամուն: Նրանք ականատես եղան լույսի և խավարի միջև մղվող պայքարին, որը գնալով սրվում էր: Եվ երբ Քրիստոսը խաչի վրա Իր հոգեվարքի վերջին պահին բացականչեց՝ «Կատարված է» (Հովհաննես 19.30), հաղթության մի ճիչ թնդացրեց բոլոր աշխարհներն ու երկինքը: Այնքա՜ն երկար ժամանակ այս աշխարհում մղվող պայքարի ելքը հիմա վճռված էր. Քրիստոսը հաղթող էր դուրս եկել: Նրա մահը պատասխանեց այն հարցին, թե արդյո՞ք Հայրն ու Որդին բավարար սեր են տածում մարդու հանդեպ՝ նրան դրդելով անձնուրացության ու ինքնազոհության: Սատանան բացահայտեց իր իսկական էությունը որպես խաբեբա և մարդասպան: Ակնհայտ էր, որ նա, եթե դա իրեն թույլ տրվեր, երկնքի բնակիչների նկատմամբ էլ կդրսևորեր նույն ոգին, որով ղեկավարում էր իր իշխանության տակ գտնվող մարդկանց: Եվ հավատարիմ տիեզերքը միաձայն փառաբանեց աստվածային կառավարությունը: {ԱՄՋ 53.2}

Եթե հնարավոր լիներ օրենքը փոխել, մարդը կարող էր փրկվել առանց Քրիստոսի զոհաբերության, բայց այն փաստը, որ Քրիստոսին անհրաժեշտ էր զոհել Իր կյանքը հանուն ընկած ցեղի, վկայում է, որ մեղավորը չի կարող ազատվել Աստծո օրենքի պահանջներից: Դա ցույց տվեց, որ մեղքի վարձքը մահն է: Երբ Քրիստոսը մեռավ, սատանան դատապարտվեց ոչնչացման: Բայց եթե օրենքը խափանվել է խաչի վրա, ինչպես շատերը պնդում են, ուրեմն Աստծո սիրելի Որդին տառապանք և մահ կրեց միայն նրա համար, որպեսզի սատանային տար հենց այն, ինչ նա ուզում էր: Այդ դեպքում խավարի իշխանը հաղթանակ կտոներ, և նրա մեղադրանքներն աստվածային կառավարության դեմ կհաստատվեին: Այն փաստը, որ Քրիստոսը կրեց մարդու անօրենության պատիժը, մի հզոր փաստարկ է բոլոր բանական արարածների համար, որ օրենքն անփոփոխելի է, որ Աստված արդար է, ողորմած ու

անձնազոհ, և որ Նրա կառավարության հիմքում ընկած են անսահման արդարությունն ու գթասրտությունը: {ԱՄՋ 53.3}

Գլուխ 6 - Ջրհեղեղ

Ծննդոց 6 և 7

Նոյի օրերում Ադամի օրինազանցության և Կայենի գործած սպանության հետևանքով կրկնակի անեծք էր ընկած երկրի վրա: Սակայն դրանից բնությունն այնքան էլ շատ չէր փոխվել: Ակնհայտ էին քայքայման նշանները, բայց երկիրն առաջվա պես հարուստ էր և գեղեցիկ Աստծո նախախնամության պարգևներով: Բլուրները պսակված էին վեհաշուք ծառերով, որոնց ճյուղերին փաթաթված էին պտուղների ծանրությունից կքված խաղողի ողկույզները: Լայնատարած պարտեզանման հարթավայրերը զմրուխտ կանաչ էին հագած, օդը լցված էր հազարավոր ծաղիկների անուշահոտությամբ: Երկիրը շռայլորեն բազմատեսակ պտուղներ էր ընծայում: Ծառերն իրենց չափով, գեղեցկությամբ ու կատարյալ համաչափությամբ անհամեմատ ավելի գերազանց էին բոլոր նրանցից, որ կարող են գտնվել հիմա: Բարակ մանրաթելերից կազմված և ամրությամբ քար հիշեցնող դրանց փայտանյութն աչքի էր ընկնում դիմացկունությամբ: Ամենուրեք կարելի էր առատորեն ոսկի, արծաթ և թանկարժեք քարեր տեսնել:

Մարդկային ցեղն էլ դեռ պահպանել էր իր նախկին ուժն ու կորովը: Սի քանի սերունդներ էին անցել այն պահից, ինչ Ադամը ճաշակել էր կյանքի ծառից, բայց մարդու կյանքի տևողությունը դեռևս հարյուրամյակներով էր հաշվվում: Եթե այդ երկարակյաց մարդիկ ծրագրելու և իրագործելու իրենց հազվագյուտ կարողությամբ նվիրվեին Աստծո ծառայությանը, ապա կփառավորեին իրենց Արարչի անունը երկրի վրա և կիրականացնեին այն նպատակը, որի համար Նա կյանք էր տվել նրանց: Բայց նրանք թերացան այդ անել: Այդ ժամանակ ապրում էին հսկաներ՝ վիթխարահասակ և ահռելի ուժի տեր մարդիկ, որոնք հայտնի էին իմաստությամբ և ամենաբարդ ու զարմանահրաշ գյուտարարություններ անելու վարպետությամբ: Նրանց մեղքը, սակայն, որն աճող անօրենության հանդեպ անտարբերությունն էր, ուղիղ համեմատական էր նրանց վարպետությանն ու հանճարին: {ԱՄՋ 55.1}

Սինչջրհեղեղյան աշխարհի այս բնակիչներին Աստված բազմաթիվ ու հարուստ պարգևներ էր շնորհել, բայց նրանք Նրա օրհնություններն օգտագործեցին իրենց փառավորելու համար և անեծքի վերածեցին՝ սիրելով ավելի շատ պարգևները, քան Տվողին: Ոսկին, արծաթը, թանկարժեք քարերն ու ընտիր փայտը նրանք օգտագործում էին իրենց համար շքեղ պալատներ կառուցելու նպատակով՝ ձգտելով գերազանցել մեկը մյուսին՝ իրենց բնակարանները զարդարելու հմտության ու վարպետության մեջ: Նրանք ձգտում էին միայն բավարարել իրենց հպարտ սրտերի ցանկությունները՝ թաղված խրախճանքների ու անառակության մեջ: Չկամենալով Աստծուն ունենալ իրենց մտքի մեջ՝ նրանք շուտով հերքեցին Նրա գոյությունը՝

բնության Արարչի փոխարեն պաշտելով բնությունը: Նրանք փառաբանում էին մարդկային հանՙ ճարը, երկրպագում էին իրենց ձեռքի գործերին և իրենց երեխաներին սովորեցնում էին պաշտել արձաններին: {ԱՄՋ 56.1}

Կանաչ դաշտերում և սաղարթախիտ ծառերի ստվերի տակ նրանք զոհասեղաններ էին կանգնեցնում իրենց կուռքերին: Ընդարձակ, մշտականաչ պուրակները նախատեսված էին կեղծ աստվածներին պաշտելու համար: Այս պուրակներին կցվում էին արձաններով զարդարված գեղեցիկ այգիներ, որոնց երկար, ոլորապտույտ ծառուղիների վրա կախվում էին ամեն տեսակ պտղատու ծառերի սաղարթները: Այստեղ ամեն բան դասավորված էր այնպես, որ կարող էր գրգռել մարդկանց հեշտասիրական ցանկություններն ու կրքերը՝ գայթակղելով նրանց մասնակցելու կուռքերի պաշտամունքին: {ԱՄՋ 56.2}

Մարդիկ իրենց գիտակցությունից հանեցին Աստծուն ու երկրպագեցին իրենց երևակայության մարմնացումներին, և որպես արդյունք՝ գնալով ավելի այլասերվեցին: Սաղմոսերգուն այսպես է նկարագրում կռապաշտության ներգործությունը երկրպագուի վրա. «Նրանց շինողներն էլ նրանց նման են, և ամենքը, ովքեր հույս են դնում նրանց վրա» (Սաղմոս 115.8): Մարդկային մտքի օրենքն է, որ նայելով՝ մենք փոխվում ենք: Մարդը չի կարող ճշմարտության, մաքրության և սրբության իր պատկերացումներից ավելի վեր բարձրանալ: Եթե միտքը երբեք չի բարձրանում մարդկային չափանիշներից, եթե այն չի ազնվանում՝ ընկալելու անսահման իմաստությունն ու սերը, մարդը գնալով ավելի ու ավելի է նսեմանում: Կեղծ աստվածների երկրպագուներն իրենց կուռքերին վերագրում էին մարդկային հատկանիշներ և զգացմունքներ, այդ պատճառով էլ նրանց բնավորության չափանիշը ցածրացավ մինչև մեղավոր մարդու նմանությունը, և արդյունքում՝ նրանք այլասերվեցին: «Եվ Եհովան տեսավ, որ շատացել էր մարդկանց չարությունը երկրի վրա, և նրանց սրտի խորհուրդների բոլոր գաղափարները չար էին ամեն օր: ...Եվ երկիրն Աստծո առաջ ապականվեց, և երկիրն անօրենությամբ լցվեց»: Աստված Իր պատվիրանները տվել էր մարդկանց որպես կյանքի չափանիշ, բայց Նրա օրենքը ոտնահարվեց, որի հետևանքով առաջացան ամեն տեսակի մեղքեր: Մարդկանց այլանդակությունը բացահայտ էր և հանդուգն: Արդարությունը ոտնակոխ արվեց, և ճնշվածների աղաղակները հասան մինչև երկինք: {ԱՄՋ 56.3}

Գրեթե հենց սկզբից՝ հակառակ աստվածային որոշման, սահմանվեց բազմակնություն: Տերն Ադամին մեկ կին տվեց՝ ցույց տալով Իր դիրքորոշումն այդ հարցում: Բայց մեղանչելուց հետո՝ մարդիկ նախընտրեցին հետևել իրենց ստոր ցանկություններին, որի արդյունքում արագորեն աճեցին հանցագործություններն ու դժբախտությունները: Չէին հարգվում ոչ ամուսնական կապերը, ոչ էլ՝ սեփականության իրավունքը: Ցանկության դեպքում ամեն ոք բռնությամբ տիրանում էր իր հարևանի կնոջը կամ ունեցվածքին, և մարդիկ հրճվում էին իրենց

բռնարարքներից: Կենդանիներին սպանելը նրանց հաճույք էր պատճառում, և մսի օգտագործումը կերակրի մեջ էլ ավելի դաժան ու արնախում դարձրեց նրանց, մինչև որ նրանք մարդկային կյանքին սկսեցին վերաբերվել զարմանալի անտարբերությամբ: {ԱՄՋ 57.1}

Աշխարհը դեռ շատ երիտասարդ էր, բայց անօրենությունն այնքան խորացավ ու տարածվեց, որ Աստված այլևս չկարողացավ համբերել և ասաց. «Երկրի երեսից ջնջեմ մարդուն, որին ստեղծեցի»: Նա հայտարարեց, որ Իր Հոգին միշտ չի պայքարելու մեղավոր ցեղի դեմ: Եթե նրանք չդադարեն իրենց մեղքերով պղծել երկիրն ու նրա հարուստ գանձերը, Նա կբնաջնջի նրանց և կկործանի այն բոլոր օրհնությունները, որոնք մեծ հաճույքով տվել էր նրանց, Նա կոչնչացնի դաշտի բոլոր գազաններին ու ողջ բուսական աշխարհը, որն այնքան առատ էր ուտելիքներով, և չքնաղ երկիրն ամայի ու ավերակ կդարձնի: {ԱՄՋ 57.2}

Գերիշխող այլասերվածության մեջ Մաթուսաղան, Նոյը և շատ ուրիշներ ջանում էին կենդանի պահել ճշմարիտ Աստծո գիտությունը և կասեցնել բարոյական անկումը: Ջրհեղեղից հարյուր քսան տարի առաջ Տերը սուրբ հրեշտակի միջոցով հայտնեց Նոյին Իր մտադրությունը և պատվիրեց նրան մի տապան շինել: Տապանը կառուցելու ընթացքում նա պիտի քարոզեր, որ Աստված ջրհեղեղ է բերելու երկրի վրա՝ ամբարիշտներին կործանելու համար: Ովքեր կհավատային նախազգուշացմանը և զղջումով ու ապաշխարությամբ կպատրաստվեին այդ իրադարձությանը, ներում կստանային ու կփրկվեին: Ենոքն իր զավակներին պատմել էր, թե ինչ էր Աստված հայտնել իրեն ջրհեղեղի վերաբերյալ, և Մաթուսաղան ու նրա որդիները, որոնք ապրում էին Նոյի քարոզչության ժամանակ, օգնեցին նրան տապանի շինության գործում: {ԱՄՋ 57.3}

Աստված Նոյին հաղորդեց տապանի ճշգրիտ չափերը և մանրամասն ցուցումներ տվեց դրա կառուցման վերաբերյալ: Մարդկային իմաստությունը չէր կարող այդպիսի հզոր և դիմացկուն կառույց նախագծել: Նախագծի հեղինակը Աստված էր, իսկ Նոյը՝ վարպետ շինարարը: Այդ շինությունը նավի նման էր կառուցված, որպեսզի կարողանա լողալ ջրի վրա, բայց որոշ առումով այն ավելի շատ տուն էր հիշեցնում: Այն երեք հարկանի էր և ուներ ընդամենը մեկ դուռ, որը գտնվում էր նավակողին: Լույսը ներս էր թափանցում վերևից, և նավամիջի տարբեր բաժիններն այնպես էին դասավորված, որ բոլորն էլ լուսավորվում էին: Տապանի շինության համար օգտագործվեց նոճի կամ խիժաբեր փայտ, որը հարյուրավոր տարիների ընթացքում չէր քայքայվի: Այս վիթխարի կառույցի շինարարությունը երկարատև ու դժվարին գործընթաց էր: Հաշվի առնելով ծառերի մեծ չափերը և փայտանյութի տեսակը, այն ժամանակ տախտակներ շինելու համար ավելի շատ աշխատանք էր պահանջվում, քան հիմա, թեև մարդիկ շատ ավելի ուժեղ էին: Մարդն ամեն ինչ արեց, որպեսզի աշխատանքը կատարյալ լինի, սակայն տապանն ինքնին

չէր դիմանա այն արհավիրքին, որ պիտի գար երկրի վրա: Մոլեգնած ջրերի մեջ միայն Աստված կարող էր պահպանել Իր ծառաներին: {ԱՄՋ 58.1}

«Հավատով Նոյը, պատգամ առնելով դեռ չերևացած բաների համար և երկյուղած լինելով՝ շինեց տապանն իր տան փրկության համար, որով աշխարհս դատապարտեց, և ժառանգ եղավ հավատով լինող արդարությանը» (Եբրայեցիս 11.7): Մինչ Նոյն իր նախազգուշացման լուրն էր հաղորդում աշխարհին, նրա գործերը վկայում էին նրա անկեղծության մասին: Հենց դրանով էր նրա հավատը կատարյալ և ակնհայտ: Նա Աստծո խոսքերին անվերապահ վստահության օրինակ թողեց աշխարհին: Իր բոլոր կարողությունները նա նվիրեց տապանի շինարարությանը: Երբ նա սկսեց չոր հողի վրա կառուցել վիթխարի նավը, բազմաթիվ մարդիկ ամեն տեղերից գալիս էին տեսնելու այդ տարօրինակ տեսարանը և լսելու միայնակ քարոզչի ներշնչված ու կրակոտ խոսքերը: Մուրճի ամեն մի հարվածը տապանի շինության ժամանակ վկայություն էր ժողովրդին: {ԱՄՋ 58.2}

Սկզբում թվաց, թե շատերն ընդունել են նախազգուշացումը, սակայն դեռ անկեղծ ապաշխարությամբ դարձի չէին եկել առ Աստված: Նրանք չէին կամեցել թողնել իրենց մեղքերը: Այն ժամանակահատվածում, որ մնացել էր մինչև ջրհեղեղը, նրանց հավատը փորձության ենթարկվեց, բայց նրանք չդիմացան ղրան: Հաղթված գերիշխող անհավատությունից՝ նրանք վերջապես միացան իրենց նախկին ընկերներին՝ մերժելով հանդիսավոր լուրը: Ոմանք խորապես ազդվել էին, և ուշադրություն կդարձնեին նախազգուշացման խոսքերին, բայց այնքան շատերն էին ծաղրում և ծիծաղում, որ նրանք էլ լցվեցին նույն ոգով, մերժեցին ողորմության կոչը և շուտով հայտնվեցին ամենահանդուգն ու լկտի ծաղրողների շարքում, որովհետև ոչ ոք այնքան անխոհեմ չէ և այնքան խորը չի թաղվում մեղքի մեջ, որքան նա, ով մի ժամանակ լույս է ունեցել, բայց հակառակվել է Աստծո Հոգու ազդեցությանը: {ԱՄՋ 58.3}

Այդ սերնդի մարդկանցից բոլորը չէ, որ կռապաշտներ են եղել բառիս բուն իմաստով: Շատերը դավանում էին, թե երկրպագում են Աստծուն: Նրանք պնդում էին, թե իրենց կուռքերը Աստվածության պատկերներ են, և որ դրանց միջոցով մարդիկ կարող են ավելի հստակ պատկերացում կազմել աստվածային էակի մասին: Այս մարդիկ առաջինը մերժեցին Նոյի քարոզը: Մինչ նրանք ջանում էին Աստծուն ներկայացնել նյութական առարկաների միջոցով, նրանց մտքերը խավարել էին՝ ընբռնելու Նրա վեհությունն ու հզորությունը, և նրանք դադարեցին գիտակցել Նրա էության սրբությունը կամ Նրա պահանջների սրբազան, անփոփոխ բնույթը: Որքան ավելի համատարած էր դառնում մեղքը, այնքան ավելի քիչ հրեշավոր էր թվում, և նրանք վերջապես հայտարարեցին, որ աստվածային օրենքն այլևս ուժի մեջ չէ, որ օրինազանցներին պատժելը հակասում է Աստծո բնավորությանը, և ժխտեցին, որ Նրա դատաստանները շուտով երկրի վրա կթափվեն: Եթե այդ սերնդի մարդիկ

հնազանդվեին աստվածային օրենքին, ապա կճանաչեին Աստծո ձայնը Իր ծառայի նախազգուշացման մեջ, բայց նրանց բանականությունն այնպես էր մթագնել լուրը մերժելու հետևանքով, որ նրանք իսկապես կարծեցին, թե Նոյի լուրը մոլորություն է: Միայն քչերն էին ճշմարտության կողմը, մեծամասնությունը մերժեց այն: Աշխարհն ըմբոստացել էր Աստծո արդարության ու Նրա օրենքների դեմ, և Նոյին համարեցին մոլեռանդ: Եվային դրդելով չհնազանդվել Աստծուն՝ սատանան նրան ասաց. «Բնավ չեք մեռնի» (Ծննդոց 3.4): Աշխարհի հռչակավոր, մեծապատիվ ու իմաստուն մարդիկ կրկնում էին նույնը: «Աստծո սպառնալիքները,- ասում էին նրանք,- միայն վախեցնելու համար են, դրանք երբեք չեն իրականանա: Պետք չէ խուճապի մատնվել: Սի այնպիսի իրադարձություն, ինչպիսին աշխարհի կործա նումն է և Արարչի կողմից Իր ստեղծած էակների բնաջնջումը, երբեք տեղի չեն ունենա: Հանգիստ եղեք, մի° վախեցեք: Նոյը մի ցնորված մոլեռանդ է»: Աշխարհը ծիծաղեց «խաբված» ծերուկի հիմարության վրա: Իրենց սրտերն Աստծո առջև խոնարհեցնելու փոխարեն՝ նրանք շարունակեցին իրենց չարությունն ու անհնազանդությունը, կարծես Աստված չէր էլ զգուշացրել նրանց Իր ծառայի միջոցով: {ԱՄՋ 59.1}

Բայց Նոյը կանգնած էր ինչպես ժայռը փոթորկի մեջ: Շրջապատված համընդհանուր ծաղրով ու արհամարհանքով՝ նա աչքի էր ընկնում իր անբիծ մաքրությամբ և անսասան հավատարմությամբ: Նրա խոսքերը հնչում էին զորությամբ, որովհետև Աստված էր դիմում մարդկանց Իր ծառայի շուրթերով: Մինչ հարյուր քսան տարվա ընթացքում նրա հանդիսավոր ձայնն զգուշացնում էր իր ժամանակակիցներին այն իրադարձությունների մասին, որոնք մարդկային դատողությամբ անհնարին էին, կապն Աստծո հետ անչափ հզոր դարձրեց նրան: {ԱՄՋ 60.1}

Աշխարհը ջրհեղեղից առաջ պնդում էր, թե բնության օրենքները դարեր շարունակ չեն փոփոխվել: Ամեն ինչ ընթանում էր իր կարգով: Մինչ այդ անձրև երբեք չէր թափվել, երկիրը ոռոգվում էր մշուշով կամ ցողով: Գետերը երբեք դուրս չէին եկել իրենց ափերից, այլ հանդարտ հոսում էին դեպի ծովը: Հաստատուն օրենքներն արգելում էին, որ գետերը դուրս գան իրենց հունից: Բայց այս «գիտակները» չճանաչեցին Նրա ձեռքը, ով կասեցրել էր ջրերն՝ ասելով. «Մինչև այստեղ գաս, և էլ չանցնես» (Հոբ 38.11): {ԱՄՋ 60.2}

Ժամանակն անցնում էր, բայց բնության մեջ տեսանելի փոփոխություններ չէին նկատվում, և այն մարդիկ, ում սրտերը ժամանակ առ ժամանակ ահ էր սողոսկում, դադարեցին անհանգստանալ: Նրանք, ինչպես շատերն այսօր, պատճառաբանեցին, թե բնությունը վեր է Աստծուց, և որ նրա օրենքներն այնքան հաստատուն են, որ Աստված Ինքն էլ չի կարող դրանք փոխել: Մտածելով, որ եթե Նոյի լուրը ճիշտ լիներ, ապա բնությունը պիտի շեղվեր իր հունից, նրանք համոզեցին աշխարհին, թե դա կեղծիք է և մեծ մոլորություն: Վարվելով ճիշտ այնպես, ինչպես նախքան

նախազգուշացման հռչակումը՝ նրանք արհամարհեցին Աստծո կոչը: Շարունակելով որկրամոլությունն իրենց խնջույքներում ու խրախճանքներում՝ նրանք ուտում էին և խմում, տնկում էին և շինում, ծրագրեր էին կազմում ապագայում մեծ եկամուտներ ստանալու ակնկալիքով: Եվ նրանք ավելի խորն ընկղմվեցին անօրենության մեջ՝ լկտիաբար արհամարհելով Աստծո պահանջներն ու վկայելով, որ չեն վախենում Անսահմանից: Նրանք պնդում էին, որ եթե ինչ-որ ճշմարտություն լիներ Նոյի խոսքերում, ապա ճանաչված մարդիկ՝ իմաստուններն ու գիտունները, Գլուխ կհանեին դրանից: {ԱՄՋ 60.3}

Եթե մինչջրհեղեղյան աշխարհի բնակիչները հավատային նախազգուշացմանը և թողնեին իրենց չար գործերը, ապա Տերը ետ կպահեր Իր բարկությունը, ինչպես հետագայում վարվեց Նինվեի հետ: Բայց համառորեն մերժելով իրենց խղճի հանդիմանությունն ու Աստծո մարգարեի նախազգուշացումները՝ նրանք լցրին իրենց անօրենության գավաթը, և կործանումն անխուսափելի էր: {ԱՄՋ 61.1}

Նրանց փորձության ժամանակն արդեն վերջանում էր: Նոյը հավատարմորեն էր կատարել այն ամենն, ինչ Աստված կարգադրել էր նրան: Տապանը կառուցված էր ճիշտ այնպես, ինչպես Տերը հրամայել էր, և մարդկանց ու կենդանիների համար բավարար սնունդ էր պահեստավորված: Եվ հիմա Աստծո ծառան իր վերջին հանդիսավոր կոչն արեց ժողովրդին: Մի այնպիսի կրքոտ ցանկությամբ, որ բառերով անկարելի է արտահայտել, նա աղաչեց նրանց ապաստարան փնտրել, քանի դեռ հնարավորություն կար, բայց նրանք կրկին մերժեցին կոչը, և ի պատասխան՝ միայն ծաղրանք ու ծիծաղ լսվեց: Հանկարծ լռություն իջավ ծաղրող բազմության վրա: Ամեն տեսակ գազաններ՝ ինչպես ամենակատաղի, այնպես էլ ամենաանվնաս, սկսեցին իջնել սարերից և դուրս գալ անտառից՝ հանդարտ ուղղվելով դեպի տապանը: Հետո աղմուկ լսվեց, որը նման էր քամու շառաչի, և ահա ամեն կողմից թռչուններ հավաքվեցին, այնքան շատ, որ երկինքը սևացավ, և կատարյալ կարգապահությամբ սկսեցին ներս մտնել տապան: Կենդանիները հնազանդվեցին Աստծո հրամանին, մինչդեռ մարդիկ մնացին անհնազանդ: Սուրբ հրեշտակների ղեկավարությամբ նրանք «զույգ-զույգ՝ արու և էգ, գնացին Նոյի մոտ՝ տապանի մեջ », իսկ մաքուր անասուններից՝ յոթ-յոթ հատ:

Մարդիկ, զարմանքից ապշած, ոմանք էլ սարսափած, նայում էին այդ տեսարանին: Իմաստուններ կանչվեցին՝ բացատրելու կենդանիների այդ արտասովոր վարքը, բայց՝ իզուր: Դա մի առեղծված էր, որը նրանք անկարող էին հասկանալ: Բայց մարդիկ, համառորեն մերժելով լույսը, այնքան էին խստացրել իրենց սրտերը, որ նույնիսկ այս տեսարանը նրանց վրա հարկ եղած տպավորությունը չթողեց: Դատապարտված ցեղը, նայելով իր փառքի մեջ շողշողացող արեգակին և գրեթե եդեմական գեղեցկություն հագած երկրին, աղմկոտ զվարճությամբ վանեց իրենից վախը: Եվ իրենց բռնարարքներով նրանք,

թվում էր, իրենց վրա են հրավիրում արդեն թափվելու պատրաստ Աստծո բորբոքված զայրույթը: {ԱՄՋ 61.2}

Աստված պատվիրեց Նոյին. «Մտիր դու և քո բոլոր տունը տապանի մեջ, որովհետև այս դարում քեզ տեսա արդար իմ առաջին»: Աշխարհը մերժեց Նոյի նախազգուշացումները, բայց նրա ազդեցությունն ու օրինակը մեծ օրհնություն բերեցին նրա ընտանիքին: Ի վարձատրություն նրա նվիրվածության ու ազնվության՝ Աստված Նոյի հետ փրկեց նաև նրա ընտանիքի բոլոր անդամներին: Ծնողական հավատարմության ինչպիսի՛ պարգևատրում: {ԱՄՋ 62.1}

Ողորմության աղերսները դադարեցին մեղավոր ցեղի համար: Դաշտի գազաններն ու երկնքի թռչունները մտել էին իրենց ապաստարանը: Նոյը իր ընտանիքի հետ տապանի մեջ էր, և Աստված «փակեց դուռը նրա ետևից»: Կուրացուցիչ լույսի բռնկում երևաց, և փառավոր մի ամպ՝ կայծակից ավելի պայծառ, երկնքից իջավ ու կանգնեց տապանի մուտքի մոտ: Անտեսանելի ձեռքերը դանդաղ ծածկեցին վիթխարի դուռը, քանի որ դա անհնար էր ներսում գտնվողների համար: Նոյը փակվեց ներսում, իսկ Աստծո ողորմությունը մերժողները մնացին դրսում: Երկնքի կնիքն էր դրված այդ դռան վրա: Աստված Ինքը փակեց այն, և միայն Աստված էլ կարող էր այն բացել: Այդպես էլ, երբ Քրիստոսն ավարտի Իր բարեխոսությունը մեղավորների համար, նախքան Իր վերադարձը երկնային ամպերի վրա՝ ողորմության դուռը կփակվի: Այն ժամանակ աստվածային շնորհն այլևս չի զսպի ամբարիշտներին, և սատանան լիակատար իշխանություն ձեռք կբերի նրանց վրա, ովքեր մերժել են ողորմությունը: Նրանք կձգտեն կործանել Աստծո ժողովրդին, բայց ինչպես Նոյը ծածկվեց տապանում, այնպես էլ արդարները կպաշտպանվեն աստվածային զորությամբ: {ԱՄՋ 62.2}

Այն բանից հետո, երբ Նոյն ու իր ընտանիքը մտան տապան, յոթ օր շարունակ մոտեցող փոթորկի ոչ մի նշան չէր երևում: Այդ ընթացքում նրանց հավատը փորձության ենթարկվեց: Դա հաղթության ժամանակ էր արտաքին աշխարհի համար: Թվացյալ ուշացումն ավելի խորացրեց նրանց այն համոզմունքը, որ Նոյի պատգամը մոլորություն է և որ ջրհեղեղ երբեք չի լինի: Չնայած այն հանդիսավոր տեսարաններին, որոնց նրանք ականատես էին եղել, երբ կենդանիներն ու թռչունները մտել էին տապան և Աստծո հրեշտակը փակել էր դուռը, նրանք առաջվա պես շարունակում էին իրենց զվարճություններն ու խրախճանքները՝ ծիծաղելով նույնիսկ Աստծո զորության այդ ակնհայտ դրսևորումների վրա: Խումբ-խումբ հավաքվելով տապանի մոտ՝ նրանք այնպիսի հանդուգն լկտիությամբ սկսեցին ծաղրել ներսի բնակիչներին, որ նախկինում երբեք չէին համարձակվել: {ԱՄՋ 62.3}

Բայց ութերորդ օրը եկինքը ծածկվեց մութ ամպերով, հետո ճայթեց ամպրոպն, ու փայլատակեցին կայծակները: Շուտով անձրևի խոշոր կաթիլներ սկսեցին թափվել: Աշխարհը երբեք նման բան չէր տեսել, և մարդկանց սրտերը սարսափով լցվեցին: Ամենքի մտքում մի հարց էր. «Մի՞թե Նոյն իրավացի էր, և աշխարհը

դատապարտված է կործանման»: Երկինքը գնալով մթնեց, և անձրևն սկսեց սաստկանալ: Կենդանիները վայրի սարսափով այս ու այն կողմ էին նետվում և իրենց վայնասունով ասես ողբում սեփական բախտն ու մարդու ճակատագիրը: Այդ ժամանակ «մեծ անդունդի բոլոր աղբյուրները ճեղքվեցին, և երկնքի պատուհանները բացվեցին»: Ամպերից ասես ջրի հեղեղներ թափվեցին: Գետերը, դուրս գալով իրենց ափերից, ողողեցին դաշտերը: Երկրի ընդերքից աննկարագրելի ուժով սկսեցին դուրս ցայտել ջրի շիթեր՝ հարյուրավոր ոտնաչափ վեր նետելով վիթխարի ժայռակտորներ, որոնք, վայր ընկնելով, խոր թաղվում էին հողի մեջ: {ԱՄՋ 63.1}

Մարդիկ առաջին անգամ տեսան, թե ինչպես են ավերվում իրենց ձեռքի գործերը: Նրանց վեհաշուք պալատները, գեղեցիկ պարտեզներն ու պուրակները, որտեղ նրանք դրել էին իրենց կուռքերը, քարուքանդ եղան երկնային կայծակով, և ամեն ինչ ավերակների վերածվեց: Չոհասեղանները, որոնց վրա մարդկային պատարագներ էին մատուցվում, կործանվեցին: Կենդանի Աստծո զորությունից զարհուրեցին երկրպագուները՝ գիտակցելով, որ իրենց անառակության ու կռապաշտության հետևանքով է վրա հասել այս աղետը: {ԱՄՋ 63.2}

Փոթորիկն ավելի կատաղորեն մոլեգնեց՝ ցիրուցան անելով ծառերը, տները, ժայռերն ու հողակտորները: Մարդկանց և կենդանիների սոսկումն անհնար է նկարագրել: Փոթորկի շառաչյունից ավելի բարձր լսվում էր ժողովրդի ողբը, որն արհամարհել էր Աստծո հեղինակությունը: Սատանան ինքն էլ, ով ստիպված էր մնալ բորբոքված տարերքի մեջ, սարսափում էր իր սեփական կյանքի համար: Նա հաճույք էր ստա- նում՝ իշխելով մարդկային հզոր ցեղի վրա, և շատ էր փափագում, որ նրանք ապրեն ու շարունակեն իրենց պղծությունները՝ ապստամբելով երկնքի Կառավարչի դեմ: Հիմա նա անիծում էր Աստծուն՝ մեղադրելով Նրան անարդարության ու դաժանության մեջ: Մարդկանցից շատերը, սատանայի նման, հայհոյում էին Աստծուն, և եթե կարողանային, կտապալեին Նրան զորության աթոռից: Մյուսներն էլ, սարսափից խենթացած, իրենց ձեռքերը դեպի տապանն էին պարզում՝ աղաչելով ներս թողնել, բայց՝ ապարդյուն: Վերջապես խիղճն արթնացել էր ճանաչելու Աստծուն՝ երկնքի Տիրակալին: Նրանք թախանձագին խնդրում էին, բայց Նա չէր լսում նրանց աղաղակները: Միայն այդ սոսկալի պահին նրանք հասկացան, որ իրենց կործանման է հասցրել Աստծո օրենքի խախտումը: Բայց, թեև պատժից վախենալով, նրանք խոստովանեցին իրենց մեղքը, սակայն անկեղծորեն չէին զղջում չարագործության համար և ոչ էլ զզվում էին դրանից: Նրանք կշարունակեին ապստամբել երկնքի դեմ, եթե մնային անպատիժ: Այդպես էլ աշխարհը կրակով կործանվելուց առաջ, երբ Աստծո դատաստանները թափվեն երկրի վրա, անզեղջ չարագործները կհասկանան, որ իրենց մեղքը Նրա սուրբ օրենքի ոտնահարումն է եղել: Սակայն նրանց այդ խոստովանությունն ավելի անկեղծ չի լինի, քան հին աշխարհի մեղավորներինը: {ԱՄՋ 63.3}

Ոմանք հուսահատված փորձում էին ուժով ներխուժել տապան, բայց նրա շինվածքն այնքան ամուր էր, որ դիմացավ նրանց փորձերին: Մյուսները կառչում էին տապանից, մինչև որ կատաղի ալիքները քշում էին նրանց, կամ էլ պոկվում էին՝ ընդհարվելով ժայռերին ու ծառերին: Վիթխարի տապանն ամբողջովին ցնցվում էր՝ ծեծվելով վայրագ քամիներից, և այս ու այն կողմ էր նետվում՝ բախվելով հսկայական ալիքներին: Ներսից լսվող գազանների վայնասունն արտահայտում էր նրանց տառապանքն ու սարսափը: Տապանը, սակայն, շարունակում էր անվնաս լողալ բորբոքված տարերքի մեջ: Ջորավոր հրեշտակներին հրամայված էր պահպանել այն: {ԱՄՋ 64.1}

Փոթորկից վախեցած կենդանիները նետվում էին դեպի մարդիկ՝ ասես օգնություն խնդրելու նրանցից: Ոմանք իրենց և իրենց երեխաներին կապում էին ուժեղ կենդանիներին՝ հուսալով, որ նրանք, մագլցելով ամենաբարձր գագաթները, կխուսափեն բարձրացող ջրերից: Մյուսներն իրենց կապում էին բլուրների ու լեռների գագաթներին աճած վիթխարի ծառերին, բայց դրանք արմատախիլ էին լինում՝ իրենց կապված մարդկանց հետ միասին ընկղմվելով փրփրադեզ ալիքների մեջ: Փրկություն խոստացող բարձունքները խորտակվում էին մեկը մյուսի ետևից: Երբ ջրերն ավելի ու ավելի բարձրացան, մարդիկ փախան դեպի ամենաբարձր սարերը: Հաճախ մարդ ու կենդանի պայքարի մեջ էին մտնում մի ոտնաչափ հողի համար, մինչև որ երկուսն էլ քշվում էին: {ԱՄՋ 64.2}

Ամենաբարձր գագաթներից մարդիկ նայում էին դեպի անեզր օվկիանոսի հեռուները: Աստծո ծառայի հանդիսավոր նախազգուշացումներն այլևս ծիծաղելի ու արհամարհելի չէին թվում: Դատապարտված մեղսագործներն ինչպե՜ս էին փափագում վերադարձնել այն հնարավորությունները, որ անտեսել էին: Ինչպե՜ս էին աղաչում փորձության գեթ մեկ ժամի, ողորմություն ստանալու ևս մեկ առավելության և Նոյի շուրթերից միայն մեկ կոչ լսելու համար: Բայց նրանց այլևս վիճակված չէր լսելու ողորմության քաղցրահնչյուն ձայնը: Սերը, ոչ պակաս, քան արդարությունը, պահանջում էր, որ Աստծո դատաստանները վերջ տային մեղքին: Վրիժառության ջրերը ծածկեցին վերջին ապաստարանները, և Աստծուն արհամարհողները կորան մռայլ հորձանուտի մեջ: {ԱՄՋ 64.3}

«Աստծո խոսքով... այն հին աշխարհը ջրհեղեղով ապականված՝ կորավ: Եվ այժմյան երկինքն ու երկիրս, նույն խոսքով պահպանված, պահվում են կրակի համար դատաստանի և ամբարիշտ մարդկանց կորստյան օրում» (Բ Պետրոս 3.5-7): Մոտենում է հաջորդ փոթորիկը: Երկիրը նորից կմաքրվի Աստծո ավերիչ զայրույթով, և մեղքն ու մեղավորները կոչնչանան: {ԱՄՋ 65.1}

Այն նույն մեղքերը, որոնք մինչջրհեղեղյան աշխարհի կորստյան պատճառը հանդիսացան, գոյություն ունեն նաև այսօր: Աստծո երկյուղը չքացել է մարդկանց սրտերից, և Նրա օրենքին վերաբերվում են անտարբերությամբ ու արհամարհանքով: Այն սերնդին բնորոշ սանձարձակությունը յուրահատուկ է նաև

ներկա սերնդին: Քրիստոսն ասել է. «Ինչպես որ ջրհեղեղից առաջ եղած օրերին էին ուտում և խմում, կին առնում և մարդի գնում, մինչև այն օրը, որ Նոյը մտավ տապան, և չիմացան, մինչև որ ջրհեղեղը եկավ ու ամենքին վեր առավ, այդպես կլինի նաև մարդի Որդու գալուստը» (Մատթեոս 24.38,39): Աստված չդատապարտեց հին աշխարհի բնակիչներին ուտելու և խմելու համար, այդ Նա էր առատորեն երկրի պտուղները պարգևել նրանց, որպեսզի հոգան իրենց ֆիզիկական կարիքները: Նրանց մեղքն այն էր, որ օգտագործելով այդ բարիքները՝ շնորհակալ չեղան Տվողին և ապական- վեցին՝ անզուսպ ագահությամբ բավարարելով իրենց փչացած ախորժակը: Ամուսնությունն օրինավոր էր նրանց համար, քանզի Աստված Ինքն էր սահմանել այն: Դա Նրա առաջին դրվածքներից մեկն էր: Նա հատուկ ցուցումներ էր տվել այդ դրվածքի վերաբերյալ՝ օժտելով այն սրբությամբ ու գեղեցկությամբ, բայց այդ ցուցումները մոռացվել էին, ամուսնությունն աղավաղվել ու սկսել էր ծառայել ստոր կրքերին: {ԱՄՋ 65.2}

Նույն իրավիճակն է տիրում նաև հիմա: Այն, ինչը ինքնին օրինավոր է, վեր է ածվում ստոր կրքերի բավարարման: Ախորժակը հագեցվում է առանց սահմանափակման: Քրիստոսի կոչեցյալ հետևորդներն ուտում և խմում են հարբեցողների հետ, մինչդեռ նրանց անունները գրանցված են եկեղեցական պատվավոր գրքերում: Անզսպությունը բթացնում է հոգևոր ու բարոյական ունակությունները և ճամփա է բացում ստոր ցանկությունների բավարարման համար: Հազարավորները բարոյական պարտավորություն չեն զգում սանձելու իրենց զգացմունքային ցանկությունները, և դառնում են կրքի ստրուկներ: Մարդիկ ապրում են զգացմունքային հաճույքներ ստանալու համար՝ միայն հանուն այս աշխարհի և այս կյանքի: Շռայլությունը բնորոշ է դառնում հասարակության բոլոր խավերին: Ազնվությունը զոհաբերվում է հանուն շքեղության և ցուցամոլության: Նրանք, ովքեր շտապում են հարստանալ, ոտնահարում են արդարությունը և ճնշում աղքատներին, իսկ «մարմիններն ու մարդկանց հոգիները» մինչև հիմա վաճառվում և գնվում են: Խարդախությունը, կաշառակերությունն ու ավազակությունը անարգել տարածվում են ինչպես վերին, այնպես էլ ստորին խավերում: Զանգվածային լրատվության միջոցներն ամեն օր հաղորդում են սպանությունների և այնքան սառնասրտորեն կատարված անիմաստ ոճրագործությունների մասին, որ թվում է, թե վերացել է մարդկայնության ամեն մի զգացում: Եվ այս գազանություններն այնքան սովորական երևույթ են դարձել, որ այլևս ոչ զարմանք են հարուցում, ոչ էլ վրդովմունք: Անիշխանության ոգին թևածում է բոլոր ազգերի վրա, և այն պատերազմները, որոնք ժամանակ առ ժամանակ սարսափեցնում են աշխարհը, կուտակված կրքերի և անօրենության դրսևորումներն են, որոնք մեկ անգամ դուրս գալով հսկողությունից՝ երկիրն ավերածությամբ ու դժբախտությամբ կլցնեին: Սինչջրհեղեղյան աշխարհի նկարագիրը՝ տրված ներշնչյալ Գրքի էջերում, ճշտորեն արտացոլում է այն իրավիճակը, որին արագորեն շտապում է արդի հասարակությունը: Նույնիսկ հիմա՝ մեր դարաշրջանում, այսպես կոչված

քրիստոնեական երկրներում ամեն օր կատարվում են այն նույն դաժան ու սոսկալի հանցագործությունները, որոնց պատճառով կործանվեցին հին աշխարհի մեղսագործները: Ջրհեղեղից առաջ Աստված ուղարկեց Նոյին նախազգուշացնելու աշխարհին, որպեսզի մարդիկ ապաշխարեն և այդպիսով խուսափեն սոսկալի կործանումից: Մոտենում է Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակը, և Տերն Իր ծառաների միջոցով նախազգուշացման լուր է ուղարկում աշխարհին՝ այդ մեծ իրադարձությանը պատրաստվելու համար: Միլիոնավոր մարդիկ ոտնահարում են Աստծո օրենքը, և հիմա Նա գթասրտորեն կոչ է անում նրանց հնազանդվելու նրա սրբազան պատվիրաններին: Բոլոր նրանք, ովքեր ապաշխարությամբ և հավատով առ Քրիստոս կթողնեն իրենց մեղքերը, ներում կստանան: Բայց շատերին թվում է, թե մեղքից հրաժարվելը չափազանց մեծ զոհ է պահանջում: Եվ քանի որ նրանց կյանքը ներդաշնակ չէ Աստծո բարոյական կառավարության վեհ սկզբունքներին, նրանք մերժում են Նրա նախազգուշացումները և արհամարհում Նրա օրենքի հեղինակությունը: {ԱՄՋ 65.3}

Մինչջրհեղեղյան աշխարհի բազմահազար բնակիչներից միայն ութ հոգի հավատացին և հնազանդվեցին Աստծո խոսքին՝ տրված Նոյի միջոցով: Հարյուր քսան տարի շարունակ արդարության այդ քարոզիչը նախազգուշացնում էր աշխարհին վերահաս կործանման մասին, բայց նրա լուրն արհամարհվեց ու մերժվեց: Նույնը կրկնվելու է նաև հիմա: Նախքան Օրենսդիրը կգա պատժելու անհնազանդներին, նրանց ապաշխարության կոչ է արվում, բայց մեծամասնության համար այդ կոչը ապարդյուն կլինի: Պետրոս առաքյալն ասում է. «Վերջին օրերում ծաղր անողներ կգան, որ իրենց ցանկությունների պես կվարվեն, և կասեն. Ու՞ր է նրա գալստյան խոստումը, քանի որ այն ժամանակից ի վեր, ինչ հայրերը վախճանվեցին, ամեն բան նույնն է մնում, ինչպես եղել է աշխարհի ստեղծագործությունից հետո» (Բ Պետրոս 3.3,4): Մի՞թե այսօր մեր երկրում չենք լսում այդ նույն խոսքերը ոչ միայն բացահայտ անաստվածների, այլ նաև շատ քարոզիչների շուրթերից: «Անհանգստանալու կարիք չկա,- բացականչում են նրանք,- նախքան Քրիստոսի վերադարձը ամբողջ երկիրը պետք է դարձի գա, և արդարությունը պետք է իշխի հազար տարի: Խաղաղությո՛ւն, խաղաղությո՛ւն, ամեն բան նույնն է մնում աշխարհի ստեղծագործությունից հետո: Ոչ ոք չի չանհանգստացնի այդ խուճապարարների լուրը»: Սակայն հազարամյայի մասին այս ուսմունքը հակասում է Քրիստոսի և առաքյալների վարդապետությանը: Խորհրդաստ էր Հիսուսի հարցը. «Սակայն մարդի Որդին գալիս՝ արդյոք հավատ կգտնի՞ երկրի վրա» (Ղուկաս 18.8): Եվ, ինչպես արդեն տեսանք՝ Նա հայտնում է, որ աշխարհի վիճակը նույնն է լինելու, ինչ որ եղել է Նոյի օրերում: Պողոսը մեզ նախազգուշացնում է, որ անօրենությունն աճելու է վախճանի մոտեցմանը զուգընթաց. «Հոգին հայտնի ասում է, որ վերջին ժամանակներում ոմանք հավատից կհեռանան և մտիկ կտան մոլար ոգիների ու դևերի վարդապետությունների», որ «վերջին օրերում չար ժամանակներ կգան» (Ա Տիմոթեոս 4.1, Բ Տիմոթեոս 3.1): Եվ

նա ներկայացնում է մեղքերի մի ցնցող ցուցակ, որոնք բնորոշ կլինեն աստվածապաշտի կերպարանք ունեցող մարդկանց: {ԱՄՋ 67.1}

Երբ իրենց փորձության ժամանակը մոտեցավ ավարտին, մարդիկ ջրհեղեղից առաջ տրվեցին զվարճությունների և խրախճանքների: Հեղինակավոր անձինք ջանք չէին խնայում ժողովրդի ուշադրությունը հաճույքների և քեֆերի վրա կենտրոնացնելու համար, որպեսզի հանկարծ չընդունեն վերջին հանդիսավոր նախազգուշացումը: Չե՞նք տեսնում արդյոք այսօր էլ այդ նույն պատկերի կրկնությունը: Մինչ Աստծո ծառաները հռչակում են, որ ամեն ինչի վերջը մոտ է, աշխարհը թաղվում է զվարճությունների ու հաճույքների մեջ, որոնց անվերջանալի հոսքը, ներքաշելով մարդկանց իր շրջապտույտի մեջ, դրդում է անտարբեր մնալու Աստծո ճշմարտության նկատմամբ, որը նրանց կործանումից փրկելու միակ ուղին է: {ԱՄՋ 67.2}

Նոյի օրերում փիլիսոփաները պնդում էին, որ անհնար է աշխարհը կործանել ջրով: Նույնպես էլ այսօր՝ գիտնականները փորձում են ապացուցել, որ աշխարհը չի կարող ոչնչացվել կրակով, այլապես դա կհակասի բնության օրենքներին: Բայց բնության Աստվածը՝ դրա օրենքների Ստեղծողն ու Կառավարիչը, Իր ձեռքի գործերը կարող է ծառայեցնել Իր նպատակներին: {ԱՄՋ 68.1}

Երբ անվանի և իմաստուն մարդիկ, ի բավականություն իրենց, հավաստիացրին, որ աշխարհը չի կարող կործանվել ջրով, երբ ժողովրդի երկյուղը ցրվեց և ամենքը, Նոյի մարգարեությունը մոլորություն համարելով, նրան մոլեռանդի տեղ դրին, եկավ Աստծո գործելու ժամանակը: «Մեծ անդունդի բոլոր աղբյուրները ճեղքվեցին, և երկնքի պատուհանները բացվեցին», և ծաղրողները կորան հեղեղի ջրերում: Իրենց պարծենկոտ գիտությամբ մարդիկ չափազանց ուշ համոզվեցին, որ իրենց իմաստությունը հիմարություն է, որ Օրենսդիրը մեծ է բնության օրենքներից, և որ Ամենակարողն Իր ծրագրերի իրականացման համար միջոցների պակասություն չի զգում: «Եվ ինչպես եղավ Նոյի օրերում», ճիշտ «նույն կերպ էլ կլինի այն օրը, երբ մարդի Որդին կհայտնվի» (Ղուկաս 17.26,30): «Տիրոջ օրը գիշերվա գողի պես կգա, որում երկինքը շառաչյունով կանցնի, և տարերքը կրակով վառված կհալվեն, երկիրը և նրանում եղած բաներն էլ կայրվեն» (Բ Պետրոս 3.10): Երբ գիտական տեսությունները կցրեն վախն Աստծո դատաստանների հանդեպ, երբ կրոնական ուսուցիչները կքարոզեն խաղաղության ու բարգավաճման երկար հարյուրամյակների մասին, և աշխարհը կլանված կլինի իր գործարքներով ու հաճույքներով, տնկելով ու շինելով, տոնախմբություններով ու քեֆերով՝ մերժելով Աստծո նախազգուշացումները և ծաղրելով Նրա լրաբերներին՝ «այն ժամանակ հանկարծակի նրանց վրա կհասնի կորուստը... և նրանք չեն պրծնի» (Ա Թեսաղոնիկեցիս 5.3): {ԱՄՋ 68.2}

Գլուխ 7 - Ջրհեղեղից հետո

Ծննդոց 7.20 - 9.17

Ջրերն ամենաբարձր սարերից տասնհինգ կանգուն ավելի վեր բարձրացան: Հաճախ տապանի բնակիչներին թվում էր, թե իրենք մեռնելու են, երբ հինգ երկար ամիսների ընթացքում նրանց նավն ասես թողնված էր քամու և ալիքների քմահաճույքին: Դա մի ծանր փորձություն էր, բայց Նոյի հավատը չսասանվեց, քանզի նա վստահ էր, որ աստվածային ձեռքն է ղեկի վրա: {ԱՄՋ 69.1}

Երբ ջրերն սկսեցին նվազել, Տերը տապանը քշեց մի ապահով տեղ՝ պաշտպանված մի խումբ սարերով, որոնք պահպանվել էին Նրա զորությամբ: Այդ սարերն իրարից քիչ հեռու էին գտնվում, և տապանը լողալով մտավ այս հանգիստ ապաստարանը, որպեսզի այլևս դուրս չքշվի անեզր օվկիանոսը: Սա մեծ թեթևություն բերեց հոգնած ու փոթորկածեծ ուղևորներին: {ԱՄՋ 69.2}

Նոյը և նրա ընտանիքն անհամբեր սպասում էին, թե երբ են ջրերը պակասելու, որովհետև փափագում էին կրկին ոտք դնել ամուր հողի վրա: Քառասուն օր անց այն բանից, երբ սարերի գագաթներն սկսեցին երևալ, նրանք մի ագռավ՝ սուր հոտառություն ունեցող մի թռչուն բաց թողեցին, որպեսզի իմանան, թե չորացե՞լ է արդյոք երկիրը: Այս թռչունը, ջրից բացի ոչինչ չգտնելով, որոշ հեռավորության վրա պտտվեց տապանի շուրջը և նորից վերադարձավ: Յոթ օր անց մի աղավնի բաց թողնվեց, որը, կանգնելու տեղ չգտնելով, նույնպես վերադարձավ տապան: Նոյը յոթ օր էլ սպասեց և կրկին բաց թողեց աղավնին: Երբ այն երեկոյան ետ դարձավ՝ ձիթենու տերևը բերանում, մեծ ցնծություն սկսվեց: Հետո «Նոյը տապանի ծածկոցը վեր առավ ու նայեց, և ահա երկրի երեսը ցամաքել էր»: Բայց նա դեռ համբերությամբ սպասում էր տապանի ներսում: Ինչպես որ նա այնտեղ էր մտել Աստծո հրամանով, այնպես էլ հատուկ ցուցումների էր սպասում՝ դուրս գալու համար: {ԱՄՋ 69.3}

Վերջապես մի հրեշտակ, վայր գալով երկնքից, բացեց ծանրակշիռ դուռը և հրամայեց նահապետին ու նրա տնեցիներին դուրս գալ՝ իրենց հետ վերցնելով բոլոր կենդանիներին: Նոյը՝ ուրախ իրենց փրկության համար, չմոռացավ Նրան, ում հոգատարության շնորհիվ իրենք ողջ էին մնացել: Տապանը թողնելուց հետո նրա առաջին գործն էր՝ զոհասեղան շինել ի զոհ մատուցել ամեն մաքուր կենդանիներից ու թռչուններից՝ ղրանով իսկ ցույց տալով իր երախտագիտությունն Աստծուն՝ իրենց ա-զատագրման համար ի հավատը Քրիստոսի՝ իսկական զոհի հանդեպ: Այս պատարագը հաճելի էր Տիրոջը, ի դրա շնորհիվ օրհնվեցին ոչ միայն նահապետն ու նրա ընտանիքը, այլ նաև բոլոր նրանք, ովքեր ապրելու էին երկրի վրա: «Եհովան անուշ հոտը հոտոտեց... ի ասաց իր սրտում. Այլևս չեմ անիծի երկիրը մարդու պատճառով ...Որքան ժամանակ որ երկիրը կմնա, սերմ ու հունձք, ցուրտ ու տաք, ամառ ու ձմեռ ի ցերեկ ու գիշեր չեն դադարի»: Սա մի դաս էր՝ տրված գալիք բոլոր սերունդների համար: Նոյը ոտք էր դրել ավերված երկրի վրա, բայց նախքան տուն

կպատրաստեր իր համար՝ նա զոհասեղան շինեց Աստծուն: Նրա անասուններն այնքան էլ շատ չէին ի մեծ գնով էին պահպանվել, բայց նա դրանց մի մասն ուրախությամբ Տիրոջը զոհաբերեց՝ խոստովանելով, որ ամեն բան Նրանն է: Նմանապես էլ՝ մեր առաջնահերթ խնդիրը պետք է լինի Աստծուն կամավոր ընծաներ մատուցելը: Սեր հանդեպ Նրա գթասրտության ի սիրո ամեն մի դրսհորում պետք է երախտագիտությամբ ընդունվի՝ ինչպես նվիրման գործերով, այնպես էլ՝ Նրա գործի համար մատուցած ընծաներով: {ԱՄՋ 69.4}

Որպեսզի մարդիկ չսարսափեին՝ տեսնելով ամպերի կուտակումն ու թափվող անձրևը, ի չմտածեին, թե նորից ջրհեղեղ կլինի, Տերը քաջալերեց Նոյի ընտանիքին այս խոստումով. «Իմ ուխտն եմ հաստատում ձեզ հետ ...այլևս ջրհեղեղ չի լինի երկիրը փչացնելու համար ...Իմ ծիածանը դրի ամպի մեջ, ի այն ուխտի նշան կլինի իմ ու երկրի միջև: Եվ լինի, որ ես երկրի վրա ամպ բերելիս՝ ծիածանը ամպի մեջ տեսնվի ...Եվ ես այն տեսնեմ, որ հիշեմ հավիտենական ուխտը Աստծո ի ամեն կենդանի արարածի միջև»: {ԱՄՋ 70.1}

Որքա՜ն մեծ է Աստծո ներողամտությունը ի Նրա կարեկցանքն Իր մոլորված արարածների հանդեպ, որ Նա գեղեցիկ ծիածանը դրեց ամպերի մեջ՝ ի նշան մարդկանց հետ Իր ուխտի: Տերն ասում է, որ երբ տեսնի ծիածանը, կհիշի Իր ուխտը: Դա չի նշանակում, որ Նա երբևիցե կարող է մոռանալ, այլ դիմում է մեզ մեր լեզվով, որպեսզի ավելի լավ հասկանանք Իրեն: Աստծո նպատակն էր, որ երբ գալիք սերունդների երեխաները հարցնեն երկնքի մեջ ձգվող փառավոր կամարի մասին, նրանց ծնողները կրկնեն ջրհեղեղի պատմությունը ի այն, թե ինչպես է Ամենաբարձրյալը ծիածանը դրել ամպերի մեջ որպես հավաստիք այն բանի, որ ջրերն այլևս երբեք չեն հեղեղելու երկիրը: Այդպես սերնդիր սերունդ այն պիտի վկայեր մարդու հանդեպ աստվածային սիրո մասին և պիտի ամրապնդեր նրա վստահությունն առ Աստված: {ԱՄՋ 70.2}

Երկնքում ծիածանը շրջապատում է գահը՝ կամարի պես ձգվելով Քրիստոսի գլխավերևում: Մարգարեն ասում է. «Ծիածանի կերպարանքի նման, որ լինում է ամպի մեջ անձրևւ օրը, այնպես էր այն պայծառության կերպարանքը շուրջանակի: Սա Տիրոջ փառքի նմանության կերպարանքն էր» (Եզեկիել 1.28): Հայտնության հեղինակը հռչակում է. «Ահա մի աթոռ կար երկնքում, և աթոռի վրա մեկը նստած ...Եվ աթոռի շուրջ ծիածան կար՝ զմրուխտի երևույթի նման» (Հայտնություն 4.2,4): Երբ մարդն իր մեծ չարությամբ Աստծո դատաստաններն է բերում իր գլխին, Փրկիչը, բարեխոսելով նրա համար Հոր առջև, ցույց է տալիս ծիածանն ամպերի մեջ, գահի շուրջը և Իր գլխավերևում՝ ի նշան Աստծո ողորմության զղջացող մեղավորի հանդեպ: {ԱՄՋ 71.1}

Ինքն Աստված ջրհեղեղի վերաբերյալ Նոյին տված հավաստիացման հետ է կապել Իր շնորհի ամենաթանկ խոստումներից մեկը. «Ինչպես որ երդվեցի, թե այլևս պիտի չանցնեն Նոյի ջրերը երկրի վրա, նույնպես էլ երդվեցի, որ քեզ վրա չբարկանամ

և քեզ չհանդիմանեմ: Որովհետև սարերը կքաշվեն և բլուրները կսասանվեն, բայց իմ ողոր- մությունը քեզանից չի քաշվի, և իմ խաղաղության ուխտը չի սասանվի, ասում է քեզ ողորմող Տերը» (Եսայիա 54.9,10): {ԱՄՋ 71.2}

Նայելով զորեղ, վայրի գազաններին, որոնք իր հետ դուրս եկան տապանից, Նոյը վախեցավ, որ դրանք կհոշոտեն իր ընտանիքը՝ բաղկացած ընդամենը ութ հոգուց: Բայց Տերը մի հրեշտակ ուղարկեց՝ Իր ծառային հուսադրող պատգամով. «Ձեր վախն ու ձեր երկյուղը երկրի բոլոր գազանների վրա և երկնքի բոլոր թռչունների վրա լինի, դրանք երկրի վրա բոլոր շարժվողների հետ և ծովի բոլոր ձկների հետ ձեր ձեռքն են տրված: Ամեն շարժվող կենդանի ձեզ համար կերակուր լինի, բանջարի խոտի պես տվի ձեզ բոլորը»: Մինչ այդ Աստված մարդուն թույլ չէր տալիս կենդանական սնունդ ուտել. Նրա նպատակն էր, որ մարդկային ցեղը սնվի ամբողջությամբ երկրի տված պտուղներով, բայց քանի որ հիմա բուսականությունը լիովին ոչնչացել էր, Նա թույլատրեց նրանց ուտել այն մաքուր կենդանիների միսը, որոնք պահպանվել էին տապանում: {ԱՄՋ 71.3}

Ջրհեղեղից երկրի ամբողջ մակերեսը փոխվել էր: Մեղքի հետևանքով երրորդ զարհուրելի անեծքն էր հանգչում դրա վրա: Երբ ջուրն սկսեց նվազել, անծայրածիր և պղտոր ծովի մեջ սկսեցին երևալ լեռներն ու բլուրները: Ամենուրեք մարդկանց և կենդանիների դիակներ էին փռված: Բայց Տերը թույլ չտվեց, որ դրանք մնան, քայքայվեն և թունավորեն օդը: Նա թաղեց դրանք՝ երկիրը վերածելով մի հսկայական գերեզմանոցի: Վայրագ մի քամի, որն սկսեց փչել ջրերը ցամաքեցնելու նպատակով, ահռելի ուժով քշեց դրանք՝ պոկելով նույնիսկ լեռների գագաթները, և անշունչ մարմինները թաղվեցին քարերի, ծառերի և հողակոշտերի տակ: Նմանապես էլ՝ մարդկանց աչքից ծածկվեցին ոսկին, արծաթը, ընտիր փայտն ու թանկարժեք քարերը, որոնցով հարուստ և զարդարված էր մինչջրհեղեղյան աշխարհը. դրանք կուռք էին դարձել նրա բնակիչների համար, և նրանք պաշտում էին այդ կուռքերը: Ջրի մի սոսկալի շարժում՝ և այդ բոլոր գանձերը ժայռաբեկորների ու հողի տակն անցան՝ ծածկվելով մարդկանց տեսողությունից ու նրանց որոնումներից: Որոշ տեղերում նույնիսկ ամբողջ սարեր գոյացան դրանց վրա: Աստված տեսավ, որ ինչքան ավելի հարստանան ու բարգավաճեն մեղավոր մարդիկ, այնքան ավելի կպղծեն իրենց ճանապարհներն Իր առաջին: Այն հարստությունները, որոնք նրանց պիտի դրդեին փառավորելու առատաձեռն Տվողին, պաշտամունքի առարկա դարձան, իսկ Աստված արհամարհվեց ու անարգվեց: {ԱՄՋ 71.4}

Երկիրն իրենից ավերածության ու ամայության մի այնպիսի տեսարան էր ներկայացնում, որ անհնար է նկարագրել: Երբեմնի գեղեցիկ և համաչափ սարերը քարուքանդ էին եղել: Քարերը, խութերն ու պատառոտված ժայռաբեկորները ցրիվ էին եկած երկրի երեսին: Շատ տեղերում անհետ չքացել էին սարերն ու բլուրները, իսկ հարթավայրերն իրենց տեղը զիջել էին լեռնաշղթաներին: Այս փոփոխությունները որոշ տեղերում ավելի խիստ էին նկատվում: Այնտեղ, ուր մի

ժամանակ գտնվում էին ոսկու, արծաթի և թանկարժեք քարերի ամենահարուստ պաշարները, անեծքի մռայլ հետքեր էին մնացել: Նզովքն ավելի թույլ էր կպել անմարդաբնակ վայրերին և այն տեղերին, որտեղ անօրենությունը համեմատաբար քիչ էր եղել: {ԱՄՋ 72.1}

Հսկայական անտառներ էին թաղվել հողի տակ: Այդ ժամանակից ի վեր դրանք վերածվել են ընդարձակ ածխաշերտերի, որոնք հիմա գոյություն ունեն, և նավթի մեծ պաշարների: Ածուխն ու նավթը հաճախ բռնկվում և այրվում են հողի տակ: Այդպես ժայռերը տաքանում են, կրաքարը վառվում է, և երկաթի հանքանյութերը հալվում են: Ջրի և կրաքարի միացությունից սաստիկ ջերմություն է անջատվում, որի հետևանքով տեղի են ունենում երկրաշարժեր, հրաբուխներ և կրակի ժայթքումներ: Երբ կրակն ու ջուրը խառնվում են կրաքարի և հանքանյութի հետ, տեղի են ունենում ստորգետնյա ծանր պայթյուններ՝ նման կայծակի խուլ որոտներին: Օդը տաքանում և դառնում է հեղձուցիչ: Դրանց հետևում են հրաբխային ժայթքումներ, և քանի որ շիկացած տարրերի համար բավականաչափ օդանցք չի մնում, երկիրն սկսում է ցնցվել, հողը փքվում և բարձրանում է ծովի ալիքների պես, առաջանում են մեծ ճեղքվածքներ, որոնց հաճախ կուլ են գնում ամբողջ քաղաքներ, գյուղեր ու այրվող լեռներ: Այս զարմանալի երևույթները գնալով ավելի հաճախակի և ահավոր են լինելու Քրիստոսի երկրորդ գալուստից և աշխարհի վախճանից անմիջապես առաջ՝ որպես նրա շուտափույթ կործանման նախանշաններ: {ԱՄՋ 72.2}

Երկրի ընդերքը Տիրոջ զինանոցն է, և հենց այնտեղից վերցված զենքերն օգտագործվեցին հին աշխարհի կործանման համար: Գետնի տակից դուրս հորդող ջրերը միացան երկնքից թափվող ջրերի հետ, որպեսզի կատարեն ավերածության գործը: Ջրհեղեղից ի վեր կրակը, ինչպես և ջուրը, Աստծո գործիքներն են եղել ամենաանառակ քաղաքների ոչնչացման համար: Այս դատաստաններն ուղարկվում են, որպեսզի նրանք, ովքեր անպատվում են Աստծո օրենքն ու ոտնահարում Նրա հեղինակությունը, սարսափեն Նրա զորությունից և դրդվեն խոստովանելու Նրա արդար գերիշխանությունը: Տեսնելով, թե ինչպես են այրվող լեռներից կրակ, բոց և հրաբխային լավաներ ժայթքում՝ չորացնելով գետերը, հեղեղելով բազմամարդ քաղաքները և ամենուրեք թողնելով ավերածություն ու ամայություն, ամենախիզախ մարդն էլ լցվում է սարսափով, և անհավատներն ու հայհոյիչները ստիպված են լինում ճանաչել Աստծո անսահման զորությունը: {ԱՄՋ 73.1}

Ահա թե ինչպես են մարգարեներն անցյալում նկարագրել նման տեսարանները. «Օ՛հ, թե ճեղքեիր երկինքը և վայր իջնեիր, քո առաջ սարերը պիտի հալվեին, ինչպես կրակով վառվում է խոհիվը, և ջուրը եփում է կրակով, որ իմացնեիր անունդ քո թշնամիներին, և քո երեսից դողային ազգերը: Երբ դու արիր այն սոսկալի բաները, որ մենք չէինք սպասում, և իջար, քո երեսից սարերը հալվեցին» (Եսայիա 64.1-3): «Տիրոջ ճանապարհը մրրկի և փոթորկի մեջ է, և ամպերը նրա ոտների փոշին են: Նա

սաստում է ծովին, ցամաքեցնում է այն և բոլոր գետերը չորացնում» (Նաում 1.3,4): {ԱՄՋ 73.2}

Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ աշխարհն ականատես կլինի ավելի սոսկալի երևույթների, քան երբևէ տեսել է մինչ այդ: «Սարերը դողում են նրանից և բլուրները հալվում են, երկիրը բարձրանում է նրա առաջին, նաև աշխարհը և նրա բոլոր բնակիչները: Նրա ցասման առաջին ո՞վ կկանգնի, և ո՞վ կդիմանա նրա բարկությունը բորբոքվելիս» (Նաում 1.5,6): «Տեր, խոնարհեցրու երկինքդ և իջիր. մոտեցիր սարերին, և դրանք կծխեն: Փայլատակիր կայծակով և ցրիր դրանք, ուղարկիր նետերդ և շփոթեցրու դրանց» (Սաղմոս 144.5,6): {ԱՄՋ 73.3}

«Եվ նշաններ կտամ վերը՝ երկնքում և նշաններ ներքևը՝ երկրում, արյուն, կրակ և ծխի մառախուղ» (Գործք Առաքելոց 2.19): «Եվ եղան ձայներ, փայլատակումներ ու որոտմունք, և մեծ երկրաշարժ եղավ, որպիսին չէր եղել այն պահից, ինչ մարդիկ երկրի վրա են, այնպիսի՛ մեծ շարժ էր»: «Եվ ամեն կղզի փախավ, և սարերը չգտնվեցին: Եվ երկնքից տաղանդաչափ մեծ-մեծ կարկուտ էր թափվում մարդկանց վրա» (Հայտնություն 16.18,20,21): {ԱՄՋ 74.1}

Երկնային կայծակները փայլատակելով՝ կմիանան երկրի վրայի կրակին, սարերը կվառվեն հնոցի պես, և լավայի սոսկալի ժայթքումները կհեղեղեն այգիներն ու դաշտերը, գյուղերն ու քաղաքները: Հալված եռացող զանգվածները գետերը կլցվեն, և ջրերը կեռան՝ աննկարագրելի ուժով ցնցելով ժայռերն ու ցիրուցան անելով դրանց բեկորները: Գետերը կցամաքեն: Երկիրը կդողա, ամենուրեք զարհուրելի երկրաշարժեր ու հրաբուխներ կլինեն: {ԱՄՋ 74.2}

Այդպես Աստված երկրից կբնաջնջի ամբարիշտներին: Բայց արդարները կպահպանվեն այդ տարերքի մեջ, ինչպես Նոյը՝ տապանում: Աստված կլինի նրանց ապաստարանը, և Նրա թևերի տակ նրանք ապահով կլինեն: Սաղմոսերգուն ասում է. «Որովհետև դու ես, Տեր, իմ հույսը. դու Բարձրյալին քեզ ապավեն արիր, քեզ չար բան չի հասնի» (Սաղմոս 91.9,10): «Չար օրում նա ծածկում է ինձ իր խորանի մեջ, նա թաքցնում է ինձ իր խորանի ծածուկ տեղում» (Սաղմոս 27.5): Ահա Աստծո խոստումը. «Որովհետև նա ինձ ցանկացավ, ես կփրկեմ նրան և բարձր կանեմ նրան, որ նա ճանաչում է իմ անունը» (Սաղմոս 91.14): {ԱՄՋ 74.3}

Սպասում է իրերի ավարտին



`